ՎԱՐԴԱՆ ՂԱՆԴԻԼՅԱՆ
ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
ՇԱՀԵ ՎՐԴ. ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

Հանրակրթական ավագ դպրոցի
11-րդ դասարանի դասագիրք

ԵՐԵՎԱՆ

2013

ՀՏԴ 373.167.1:27(479.25) (075.3)
ԳՄԴ 86.37 g72
Հ 282

Դասագիրքը պատրաստվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ՀՀ ԿԳ նախարարության կողմից:

Դասագրքի խմբագրական և հեղինակային կազմ

Խմբագիրներ՝

Պ.Հովհաննիսյան. *պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր*
Վ. Ղանդիլյան. *պատմաբան*
Վարդան վարդապետ Նավասարդյան
Շահե վարդապետ Անանյան

Հեղինակներ՝

Է. Ղազարյան.	*փիլիսոփայական գիտ. թեկնածու*	*(§ 1)*
Վ. Ղանդիլյան.	*պատմաբան*	*(§§ 1, 2, 9,15,18)*
Գ. Հարությունյան.	*պատմական գիտ. թեկնածու, դոցենտ*	*(§§ 2 - 4)*
Ա. Նազարյան.	*պատմական գիտ. թեկնածու*	*(§§ 5, 8, 10)*
Ա. Այվազյան.	*քաղաքագիտության դոկտոր*	*(§§ 6,7)*
Ա. Բաղդասարյան.	*փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ*	*(§ 11)*
Հ. Քյոսեյան.	*պատմական գիտ. թեկնածու, դոցենտ*	*(§§ 12,16,17)*
Պ. Հովհաննիսյան.	*պատմական գիտ. թեկնածու, պրոֆեսոր*	*(§ 13)*
Ա. Ղազարոսյան.	*բանասիրական գիտ. թեկնածու*	*(§ 14)*
Ա. Հարությունյան.	*պատմական գիտ. թեկնածու, դոցենտ*	*(§§ 16,17)*
Մ. Պետրոսյան.	*արվեստագետ*	*(§ 19)*

Հ 282 Հայոց եկեղեցու պատմություն: Հանրակրթ. դպր. 11-րդ դաս. դասագիրք / Վ. Ղանդիլյան և ուրիշներ - Եր., Տիգրան Մեծ, 2013. - 168 էջ:

ՀՏԴ 373.167.1:27(479.25) (075.3)

ԳՄԴ 86.37 g72

© Հեղինակային կազմ, 2013
© Տիգրան Մեծ, 2013

ISBN 978-99941-0-547-2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատանի՛ բարեկամ.

Դու արդեն երկար ճանապարհ ես անցել «Հայոց եկեղեցու պատմության» ընդգրկուն դասընթացի ուղիներով: Այդ ընթացքում ծանոթացել ես Ս. Գրքին՝ Աստվածաշնչին, քրիստոնեության հիմնական ուղղություններին, Հայոց եկեղեցու խորհուրդներին, տոներին, ծեսերին, ինչպես նաև համաշխարհային այլ կրոնների: Հայոց պատմության համապատկերի մեջ ուսումնասիրել ես Հայոց եկեղեցու պատմության կարևոր և նշանակալից իրադարձությունները, հաղորդակից եղել քրիստոնեական բարոյագիտության հիմնական սկզբունքներին և արժեքներին:

Վստահ ենք, որ դու արդեն գիտես, թե ի՞նչ է հոգևոր խորհուրդը, ի՞նչ է ծեսը, ինչպիսի՞ առաքելություն է ունեցել մեր եկեղեցին հայոց պատմության քառուղիներում, ի՞նչ է հավատը, ի՞նչ է մարդու բարոյական նկարագիրը և այլն:

Եկել է եզրահանգումների և ընդհանրացումների ժամանակը:

Դասընթացի այս փուլում դու առաջին անգամ կծանոթանաս Հայոց եկեղեցու պատմության տեսությանը, այսինքն՝ պատմության կոնկրետ թվերի, փաստերի և իրադարձությունների վերլուծության ու ընդհանրացման արդյունքներին: Օրինակ՝ Հայոց քրիստոնեական արժեհամակարգի ձևավորումը տեղի է ունեցել բավական մեծ ժամանակահատվածում: Այն ընթացել է անընդհատ փոփոխվող ներքին և արտաքին իրավիճակներում, տարաբնույթ և մեծաթիվ քաղաքական, տնտեսական, հոգեբանական, մշակութային գործոնների ազդեցության ու փոխազդեցության պայմաններում: Ներկայացվող դասանյութի այն մասը, որը Հայոց եկեղեցու պատմության տեսությունն է, պետք է դիտել վերոնշյալ տեսանկյունից:

Այս ընդհանրացնող նյութի ուսումնասիրության շնորհիվ պատկերացում կկազմես աշխարհընկալման, աշխարհայացքի, քրիստոնեական և ազգային արժեքների վերաբերյալ: Կիմանաս, թե ինչպե՞ս է ձևավորվել քրիստոնեական-ազգային արժեհամակարգը, որո՞նք են ժամանակակից հայ մարդու արժեհիմքերը և աշխարհայացքի հիմնարար արժեքները, ո՞րն է մշակույթի դերը և ի՞նչ է նշանակում մշակութային ժառանգականություն: Կիմանաս, թե

ինչպես է պատրաստվել մանրանկարը և խաչքարը: Կիմանաս, որ հայկական երաժշտությունը հայրենիքի մեղեդային արտահայտությունն է, առաջին անգամ կծանոթանաս հայ եկեղեցական գրականությանը:

Հայն այսօր աշխարհին ներկայանում է հազարամյակների ընթացքում ստեղծած ինքնուրույն, հարուստ մշակույթով, ինչը հանդիսանում է նրա հոգևոր-ազգային անձնագիրը: Մեր նախնիների կողմից ստեղծվել և մեզ է փոխանցվել հսկայական մշակութային ժառանգություն: Օտարները զարմանում են, թե ինչպես է պահպանվել հայոց երգը, մանրանկարը, խաչքարը և կամ հայ ազգն ընդհանրապես: Նրանք հիանում և ակնածանքով են լցվում քո և քո ազգի հանդեպ:

Դու ևս պիտի քաջատեղյակ լինես, ինքդ քեզ համար բացահայտես հավերժությունից եկող ու դեպի հավերժություն գնացող քո ազգի բարոյական, հոգևոր, մշակութային, կրոնական ու ազգային անանց արժեքները: Այդ ինքնաճանաչողությունը կհարստացնի քո միտքն ու հոգին, կօգնի ազգային քրիստոնեական քո հավատի մեջ լինել անսասան ու հաստատուն: Դու կզգաս քո նախնիների կանչը, ունկնդիր կլինես քո ազգի, քո եկեղեցու արդի մաքառումին, ազգային միասնության հրամայականին, մասնակիցը կլինես ապագայի հանդեպ քո ազգի երազանքի կերտմանն ու իրականացմանը:

Դու արդեն հասուն մարդ ես, պատրաստ գրոհելու ազգային-հասարակական կյանքի բարձունքները, հոգու և մտքի ինքնահաստատման անդաստաններում ստեղծելու երկրային գործունեության քո լեգենդը: Դրա համար անհրաժեշտ է, որ դու քաջածանոթ լինես քո ազգային արմատներին, հպարտ լինես քո ազգային պատկանելությամբ, իմանաս և կրողը լինես քրիստոնեական ու ազգային անանց բարոյական արժեքների:

Հայոց անկախ պետականության վերականգնումը շրջադարձային պետք է լինի քեզ համար՝ ճանաչելու, պահպանելու, վերահմաստավորելու և վերահաստատելու քո ներկայությունը ժամանակակից աշխարհում, դիմագրավելու սպառնացող մարտահրավերներին ու փորձություններին:

Խմբագրական խորհուրդ

1. ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔ, ԱՐԺԵՔՆԵՐ

Ի՞նչ է աշխարհայացքը

Յուրաքանչյուր մարդու մեջ, ով փորձում է հասկանալ աշխարհը, անխուսափելիորեն ի հայտ են գալիս բազմաթիվ հարցեր բնության և հասարակության, կյանքի և մահվան, Աստծու և հոգու անմահության, բարու և չարի, գեղեցիկի և տգեղի, և այլնի մասին:

Փորձելով գտնել այս հարցերի պատասխանները՝ մարդն իր պատկերացումն է ձևավորում աշխարհի և իր մասին: Այսինքն՝ մշակում է որոշակի **աշխարհայացք**, որի միջոցով էլ ընկալում է շրջապատող իրականությունը և իր տեղն այդ իրականության մեջ:

Աշխարհայացքն ունի երեք աստիճան՝ ***աշխարհազգացողություն, աշխարհընկալում և աշխարհըմբռնում:*** Դրանք սերտորեն փոխկապակցված են միմյանց:

Աշխարհազգացողությունը մարդու կողմից իրականության անմիջական-զգայական, զգացմունքային-հոգեբանական ընկալումն է:

Առարկաները և երևույթները, ազդելով մարդու վրա, նրա մեջ առաջացնում են տարբեր զգայություններ և ապրումներ, որոնք կարող են արտահայտվել ինչպես պայծառ, այնպես էլ գորշ երանգներով: Հիացմունքի, ուրախության, երջանկության հետ միաժամանակ մարդը ունենում է նաև անհանգստության, վախի և հուսահատության զգացումներ: Հարկ է նկատել, որ միևնույն առարկաների և երևույթների ազդեցությունը տարբեր մարդկանց մեջ կարող է առաջացնել տարբեր զգացումներ: Դա բացատրվում է նրանով, որ մեկի հոգեհուզական վիճակը կարող է լինել ուրախ, լավատեսական, իսկ մյուսին հատուկ է մռայլ, հոռետեսական հոգեվի-

Աշխարհայացքն ունի երեք աստիճան, որոնք սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ. աշխարհազգացողություն, աշխարհընկալում և աշխարհըմբռնում:

Հոգևոր մարդը նյութական միջոցների կորուստն ընկալում է բարոյափիլիսոփայական աշխարհայացքի տեսանկյունից, իսկ նյութապաշտ մարդու մոտ այն առաջացնում է ծանր ապրումներ:



Աշխարհընկալման դեպքում առարկաները դիտարկվում են իրենց բոլոր հատկությունների միասնականության մեջ:

ճակ: Իր հերթին հոգեհուզական վիճակը կախված է ոչ միայն մարդու հասակից, առողջությունից, կյանքի պայմաններից և այլ գործոններից, այլև տվյալ մարդու գիտակցական աստիճանից և բարոյական-հոգևոր նկարագրից: Եթե (հոգևոր արժեքներն առաջնային համարող) հոգևոր մարդու մեջ աստղազարդ երկինքն առաջացնում է երկյուղածություն և հիացմունքի զգացողություն, ապա անհավատ մարդն անտարբեր է այդ ամենին, քանի որ դրանք ոչ մի կերպ չեն առնչվում նրա առօրեական կյանքին:

Աշխարհազգացողության միջոցով մարդը ոչ միայն հուզականորեն է ընկալում աշխարհը, այլև զգայությունների միջոցով ճանաչում է այդ աշխարհն իր կոնկրետ ձևերի մեջ: Սակայն զգայությունների միջոցով մենք տեղեկություն ենք ստանում միայն առարկաների առանձին հատկությունների մասին:

Աշխարհայացքի հաջորդ՝ **աշխարհընկալման** աստիճաններին առարկաները դիտարկվում են իրենց բոլոր հատկությունների միասնականության մեջ: Եթե անմիջական զգայությունները մեզ տեղեկություն են տալիս, օրինակ՝ խնձորի այնպիսի հատկությունների մասին, ինչպիսիք են նրա գույնը, համը, հոտը, ապա խնձորի ամբողջական ընկալումը կատարվում է բոլոր այդ հատկությունների ամբողջականությամբ հանդերձ:

Որևէ նկարի ընկալման ժամանակ գեղագետը կգտնի այնպիսի նրբություններ, որոնք անտեսանելի են ոչ մասնագետի համար: Ընկալելով աշխարհը և մարդուն որպես Աստծու արարչագործության արդյունք, հոգևոր մարդը դրանք դարձնում է որպես նպատակ՝ հասնելու համար կատարելության:

Աշխարհազգացողության և աշխարհընկալման հիմքի վրա ձևավորվում է մարդու **աշխարհըմբռնումը**, այսինքն՝ նրա որոշակի **իդեալները**, համոզմունքները, պատկերացումները, կենսական դիրքորոշումները, բարոյական կողմնորոշիչները: Յուրաքանչյուր մարդու աշխարհըմբռնումը խորապես անհատական է և կախված է կյանքի փորձից, սոցիալական դիրքից, ազգային պատկանելությունից, կրոնական հայացքներից, իմացական և մշակութային զարգացածության աստիճանից:

Աշխարհազգացողության, աշխարհընկալման և աշխարհըմբռնման հիմքի վրա ձևավորվում է մարդու **աշխարհայացքը**, որպես գնահատականների, սկզբունքների ամբողջական համակարգ, որով որոշակիանում են աշխարհի ճանաչման, նրանում մարդու տեղի ու դերի, վարվեցողության հիմքերը: Այդ ժամանակ աշխարհայացքը դառնում է մարդու կյանքի ուղենիշը: Մարդն ապրում և գործում է՝ ղեկավարվելով իր աշխարհայացքով, որը հնարավորություն է տալիս նրան գտնելու իր տեղն աշխարհում: Աշխարհաճանաչողությունը հանդես է գալիս իր ամբողջ խորությամբ, կուռ տրամաբանական հերթականությամբ և հիմնավորված փաստարկներով:

Քրիստոնյայի աշխարհայացքի առանցքը, հիմնական հատկանիշը հավատն է առ Աստված: Աստված բացարձակ Գոյ է, ում վրա չեն տարածվում ժամանակի և տարածության չափանիշները: Աստված վեր է տիեզերքից, միաժամանակ տիեզերքում է, տիեզերքի Արարիչն է և ոչնչից ստեղծել է նյութական աշխարհը:

Մարդու աշխարհըմբռնումը խորապես անհատական է և կախված է կյանքի փորձից. սոցիալական դիրքից, ընտանիքից, ազգային պատկանելությունից, կրոնական հայացքներից, իմացական և մշակութային զարգացածության աստիճանից:

Քրիստոնյայի աշխարհայացքի առանցքը, հիմնական հատկանիշը հավատն է առ Աստված: Աստված բացարձակ Գոյ է, ում վրա չեն տարածվում ժամանակի և տարածության չափանիշները: Աստված վեր է տիեզերքից, միաժամանակ տիեզերքում է, տիեզերքի Արարիչն է և ոչնչից ստեղծում է նյութական իրերի աշխարհը:

Մի բան, որը արժեք է հանդիսանում մի ազգի համար, մյուսի համար կարող է արժեք չներկայացնել: Այն ազգային արժեքները, որոնք ընդունվում են նաև այլ ազգերի կողմից, կոչվում են համամարդկային արժեքներ: Օրինակ, Կոմիտասի կամ Ա. Խաչատրյանի երաժշտությունը, Մ. Սարյանի կտավները, միջնադարյան հայկական ճարտարապետության կոթողները ոչ միայն ազգային, այլև համամարդկային արժեքներ են:

Արժեքներ

Աշխարհի մասին գիտելիքներից բացի, մարդու աշխարհայացքում առկա է նաև որոշակիացված արժեքային համակարգ:

Իր ողջ կյանքի ընթացքում մարդն առանձնացնում է առաջնայինը և երկրորդականը, կարևորը և ոչ կարևորը: Այդ դիրքերից ելնելով՝ նա գնահատում է աշխարհում կատարվող և գոյություն ունեցող դեպքերը: Դրանով իսկ ստեղծում է իր **արժեքային համակարգը**, որը ոչ միայն նրա կյանքին տալիս է իմաստ և նշանակություն, այլև որոշում է նրա գործողությունները և արարքները: Այսպես՝ մի մարդու համար գերագույն արժեքներ կարող են հանդիսանալ նյութական բարիքները, իսկ մյուսի համար՝ հոգևոր արժեքները: Ոչ միայն մարդիկ, այլև ազգերն ունեն իրենց արժեքային համակարգերը:

Մի բան, որն արժեք է հանդիսանում մի ազգի համար, մյուսի համար կարող է արժեք չներկայացնել: Այն արժեքները, որոնք ընդունվում են մի քանի տարբեր ազգերի կողմից, կոչվում են համամարդկային արժեքներ: Օրինակ՝ Կոմիտասի կամ Ա. Խաչատրյանի երաժշտությունը, Մ. Սարյանի կտավները, միջնադարյան հայկական ճարտարապետության կոթողները ոչ միայն ազգային, այլև համամարդկային արժեքներ են:

Յուրաքանչյուր ազգի կենսագործունեությունը խարսխված է այնպիսի արժեքների վրա, որոնք ամբողջացնում և ձևավորում են նրա ազգային դիմագիծը: Այդ արժեքներն սկզբնավորվում են **ազգին բնորոշ և յուրահատուկ աշխարհազգացողության, աշխարհընկալման և աշխարհըմբռնման միջոցով**: Այն արժեքները, որոնք կազմում են տվյալ ազգի արժեհամակարգի առանցքը, կոչվում են հիմնարար արժեքներ: Հիմնարար արժեքներն էլ որոշում են այդ էթնիկ ընդհանրության ազգային նկարագիրը (**տե՛ս դիագրամը**):

Ժամանակակից ազգերի պատմությունը ցույց է տալիս, որ այս կամ այն ազգի արժեհամակարգի

ձևավորման մեջ վճռական դերակատարություն են ունեցել ազգային-հոգևոր կառույցները: Այսպես է եղել, օրինակ, **հրեաների, եվրոպական բազմաթիվ ժողովուրդների, արաբների կյանքում** և այլն: Նույն կերպ է ընթացել նաև հայոց արժեհամակարգի ձևավորումը:

Հայոց ազգային արժեհամակարգի հիմնարար արժեքներն են՝ ազգը՝ որպես հավաքական ամբողջություն, հայրենիքը՝ որպես ազգի սեփական ընդհանուր կենսատարածք, լեզուն՝ որպես հայ ինքնության երաշխավոր, հավատը՝ որպես ընդհանուր հոգևոր հայրենիք, միասնական մշակույթը, պետականությունը և հասարակական համերաշխության սկզբունքները՝ բարոյականության, ազատության ու արդարության վերաբերյալ նրա պատկերացումները:

Հազարամյակների ընթացքում ձևավորված հայոց արժեհամակարգի մեջ նշանակալի է Հայոց եկեղեցու դերը:

Մարդու աշխարհն արժեքների համակարգ է՝ կազմված բարու և չարի, ճշմարտության և կեղծիքի, գեղեցիկի և տգեղի, արդարի և անարդարի, վեհի և ստորի, ուժեղի և թույլի ու բազմաթիվ այլ երևույթների վերաբերյալ նրա պատկերացումներից:



Հարցեր

1. *Ինչպե՞ս է ձևավորվում մարդու աշխարհայացքը: Որո՞նք են աշխարհայացքի ձևավորման աստիճանները:*
2. *Ի՞նչ է աշխարհազգացողությունը:*
3. *Ի՞նչ է աշխարհընկալումը:*
4. *Ինչպե՞ս է ձևավորվում աշխարհըմբռնումը:*
5. *Ո՞րն է քրիստոնյայի աշխարհայացքի հիմքը:*
6. *Ի՞նչն է որոշում մարդու գործողությունները և արարքները:*
7. *Որո՞նք են հայոց ազգային արժեհամակարգի հիմնարար արժեքները:*

Առաջադրանքներ

ա) Փորձե՛ք վերհիշել և հիմնավորել, թե որ ժողովուրդների արժեհամակարգի ձևավորման մեջ են մեծ դերակատարություն ունեցել հոգևոր ազգային կառույցները:
բ) Վերարտադրեք հիմնարար արժեքների դիագրամը:



2. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Քրիստոնեական ազգային արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունեցել ոչ մեկ տարում և ոչ էլ մեկ հարյուրամյակում: Այս գործընթացը, Հայաստանում սկիզբ առնելով առաքելական քարոզչության տարիներից և անցնելով դարերի և հազարամյակների միջով, ձգվում է մինչև մեր օրերը: Այդ ընթացքում, ինչպես ցույց է տալիս մեր ժողովրդի պատմությունը, ձևավորվեցին և վերջնականապես կայացան **ազգային քրիստոնեական հիմնարար արժեքները**, որոնք կազմում են հայ մարդու աշխարհայացքի առանցքը: **Ազգային արժեհամակարգը մեր ժողովրդին հնարավորություն է տվել պահպանելու իր հայրենիքը, լեզուն, հավատը, մշակույթը, ազգային ինքնագիտակցությունը և վերականգնելու անկախ պետականությունը:**

Քրիստոնեական ազգային արժեհամակարգի մշակման կենտրոնի ստեղծումը

Հայաստանի առաջին բաժանումից (387 թ.) և Արշակունյաց թագավորության անկումից (428 թ.) հետո հայ հասարակությունը հայտնվեց մի կողմից՝ **քրիստոնեական-բյուզանդական,** մյուս կողմից՝ **զրադաշտական-պարսկական** արժեքային համակարգերի անմիջական ազդեցության ներքո: Դա վտանգում էր հայկական էթնիկ ընդհանրության նույնականությունը: Անհրաժեշտ էր մշակել արժեքային այնպիսի համակարգ, որը ոչ միայն ունակ լիներ պահպանելու հայ հասարակության նույնականությունը, այլև պայմաններ ստեղծեր նրա

Ս. Տրդատ Մեծ

Քրիստոնեական ազգային արժեհամակարգը հայ ժողովրդին հնարավորություն է տվել պահպանելու իր հայրենիքը, հավատը, մշակույթը, ազգային ինքնագիտակցությունը և վերականգնելու անկախ պետականությունը:

Հայոց եկեղեցին քրիստոնեական- ազգային արժեքային նոր համակարգի ձևավորման ժամանակ պահպանեց էթնիկական ինքնագիտակցության մեջ արմատացած, հայկականությանը բնորոշող հատկանիշները:

Ս. Գրիգոր Լուսավորիչ

հետագա զարգացման համար: **Անկախ պետականության բացակայության պայմաններում այդ արժեքների մշակման խնդիրն իր վրա վերցրեց Հայոց եկեղեցին:**

301 թ. Հայաստանում քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն արդեն իսկ կանխորոշել էր **հայ հասարակության մշակութաարժեքային կողմնորոշումը:** Կրոնական համակարգի փոփոխությունը պայմանավորված էր ոչ միայն հայ հասարակության հոգևոր-մշակութային զարգացման օրինաչափություններով, այլև էթնիկ նոր դրսևորման անհրաժեշտությամբ: Քրիստոնեության ընդունումից հետո անհրաժեշտ էր նոր ուսմունքի դրույթների, հիմնական գաղափարների և խորհրդանիշների հիման վրա կառուցել հայ հասարակության հոգևոր-մշակութային կյանքը:

Հայաստանում քրիստոնեության տարածման և հաստատման ժամանակ հայ հասարակությունն արդեն բավական բարձր կազմակերպված էթնիկական ընդհանրություն էր: Հայոց եկեղեցին քրիստոնեական-ազգային արժեքային նոր համակարգի ձևավորման ժամանակ պահպանեց էթնիկական ինքնագիտակցության մեջ արմատացած, հայկականությունը բնորոշող հատկանիշները: Օրինակ՝ **ազգային ինքնագիտակցության** այդ հատկանիշները լավագույնս են արտահայտվել **Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ**, որտեղ Պատմահայրը մեծ գովեստով ու հարգանքով է ներկայացնում Հին Հայաստանի հայրենասեր, հայրենիքը շենացնող արքաներին, հայոց քաջ նախնիներին: Դուք գիտեք նաև, որ քրիստոնեական բազմաթիվ տոնակատարություններ ու արարողություններ իրենց մեջ են ներառել մինչքրիստոնեական ժողովրդական ավանդույթներ և սովորություններ, ինչպես, օրինակ՝ Վարդավառը:

Միաժամանակ քրիստոնեական ուսմունքի շրջանակներում ձևավորվեց հասարակական-պետական կյանքի կազմակերպման նոր մոդել: Այն ուսուցանում և պահանջում էր քրիստոնեական բարոյականության հիմքերի վրա կառուցել ներհասարակական, ներպետական կյանքը՝ արքունիք - նախարարներ, իշխաններ - հպատակներ փոխհարաբերությունները, հրաժարվել հեթանոսական կենցաղավարությունից, վարք ու բարքից (հիշենք Ս. Ներսես Մեծի բարենորոգումները):

Ազգային քրիստոնեական արժեքային համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ էր ունենալ **արժեքների**, **խորհրդանիշների**, **գաղափարների** մշակման **կենտրոն**: Եկեղեցին սովորաբար այդպիսի կենտրոն ձևավորում էր երկրի մայրաքաղաքում: Հայ հասարակության համար նման **կենտրոն դարձավ Ս. Էջմիածինը**: Հետագայում, անկախ այն հանգամանքից, որ կաթողիկոսական աթոռը տեղից տեղ էր փոխադրվում, Ս. Էջմիածինը մնում էր արժեհամակարգը խորհրդանշող և պահպանող կենտրոնը:

Հայկական քրիստոնեական արժեքային համակարգի մշակման սկզբնական ժամանակաշրջանում հայ հասարակության մեջ առկա էին տարբեր՝ հեթանոսական, զրադաշտական, քրիստոնեական և այլ մշակութային կողմնորոշումներ: **Կենտրոնի խնդիրն էր ոչ միայն ձևավորել միասնական մշակութային մոդել, այլև ապահովել այդ մոդելի կենսագործումը:** Այս նպատակով արժեքային համակարգի կենտրոնը ստեղծեց նաև ենթակենտրոններ՝ թեմեր, գաղթավայրերի հոգևոր-մշակութային կենտրոններ և այլն:

Հայ հասարակության համար արժեքների, խորհրդանիշների, գաղափարների մշակման կենտրոն դարձավ Ս. Էջմիածինը:



Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Նոր արժեհամակարգը պետք է ունենար նույնաբնույթ հոգևոր տարածք, որի հիմնական հատկանիշներն էին լեզուն, հավատը, դավանանքը, հասարակության հոգևոր կյանքի կազմակերպման միասնական ձևերն ու սկզբունքները:

Այսպես, հայերը հավատով քրիստոնյա են, դավանանքով՝ հայ առաքելական:

Ս. Ներսես Մեծ

Ազգային արժեքների ներառումը քրիստոնեական արժեհամակարգում: Քրիստոնեական ազգային հայեցակարգի մշակումը

Նոր արժեհամակարգը պետք է ունենար նույնաբնույթ հոգևոր տարածք, որի հիմնական հատկանիշներն էին **լեզուն, հավատը, դավանանքը, հասարակության հոգևոր կյանքի կազմակերպման միասնական ձևերն ու սկզբունքները:**

Ընտանեկան և կենցաղային սովորույթները քրիստոնեության սկզբունքներին համապատասխանեցնելու նպատակին էին ուղղված Աշտիշատի (354), Շահապիվանի (444) և հետագա մի շարք այլ ժողովների որոշումները, կանոնները: Այսպես, Աշտիշատի ժողովն արգելեց հեթանոսական այնպիսի սովորույթներ (արյունակիցների ամուսնությունը, բազմակնությունը, հանդերձներ պատռելով ու ողբալով մեռելներ թաղելը, հարբեցողությունը, պոռնկությունը), որոնք հարիր չէին հասարակության կազմակերպման նոր պատկերացումներին և սկզբունքներին:

Հայոց եկեղեցին փորձեց նաև քրիստոնեությունը տարածել հարևան ժողովուրդների մեջ: Այդ նպատակով հայ հոգևոր գործիչները գործնական քայլեր արեցին և հասան որոշակի հաջողությունների: Դեռևս Ս. Գրիգոր Լուսավորչի և նրա հաջորդների ժամանակ քրիստոնեությունը տարածվեց Աղվանքում, Վիրքում, Հյուսիսային Կովկասում:

Աշխարհիկ իշխանության (արքունիք) օժանդակությամբ Հայոց եկեղեցին ձեռնամուխ եղավ հայոց այբուբենի ստեղծմանը: Գրերի գյուտից սկսած՝ քրիստոնեության համընդհանրական գաղափարը ազգայնացվում և հայ հասարակության գիտակցության մեջ ներդրվում էր գրավոր մայրենի լեզվի միջոցով: Արժեհամակարգի մշակման ժամանակ հայերեն թարգմանվեց քրիստոնեական գրականության հիմնական մասը:

Քրիստոնեական ազգային արժեհամակարգի մշակման համար անհրաժեշտ էր նաև մտովի վերադառնալ մինչքրիստոնեական անցյալ և այդտեղից «բերել» կերպարներ, երևույթներ, իրադարձություններ, գաղափարներ, որոնք նոր հասարակության համար կհանդիսանային **ինքնաճանաչման, ինքնադրսևորման**, էթնոսի կենսագործունեության ապահովման **հարատև ազդակներ**: Այս խնդիրը լուծեց Ս. Մովսես Խորենացին իր «Հայոց պատմություն»-ով, ուր ընդգրկված են հայերի ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական պատմաշրջանները: **Հայոց պատմությունը ներառելով ժամանակագրական համակարգի մեջ՝ Խորենացին սահմանեց հայոց արժեհամակարգի պատմական հիմքերը:** Խորենացին ցույց տվեց, որ հայոց արմատներն սկիզբ են առնում Նոյ նահապետից և նրա որդի Հաբեթից, և նկարագրելով հայերի ծագումը Հայկ Նահապետից, հիմնավորեց հայ ազգի պատվավոր տեղը հնագույն ազգերի շարքում:

Վռամշապուհ թագավոր

Ս. Սահակ Պարթև և
Ս. Մեսրոպ Մաշտոց

Ս. Մովսես Խորենացի

Խորենացին ցույց տվեց, որ հայոց արմատները սկիզբ են առնում Ադամ նախահորից, Նոյ նահապետի որդի Հաբեթից և նկարագրելով հայերի ծագումը Հայկ Նահապետից՝ հիմնավորեց հայ ազգի պատվավոր տեղը հնագույն ազգերի շարքում:



Հայոց եկեղեցին արժեքային համակարգի մեջ ներառված երեք կարևորագույն հատկանիշներ՝ հայրենիքը, հավատը, լեզուն հռչակեց որպես սրբություններ և սահմանեց նրանց խորհրդանիշ-սրբերը. Ս.Գրիգոր Լուսավորիչ, Ս. Մեսրոպ Մաշտոց և Ս. Սահակ Պարթև, Ս.Վարդանանք:

Եզնիկ Կողբացի

Յուրաքանչյուր ժողովրդի կազմակերպման հիմքում նախևառաջ դրվում են հավատի, լեզվի, ինքնուրույն մշակույթի և անկախ պետականության գաղափարները: Սրանք դրվեցին նաև հայոց քրիստոնեական ազգային արժեհամակարգի ձևավորման հիմքում:

Հայոց եկեղեցին արժեքային համակարգի մեջ ներառված երեք կարևորագույն հատկանիշներ՝ հայրենիքը, հավատը, լեզուն, հռչակեց որպես սրբություններ և սահմանեց նրանց խորհրդանիշ-սրբերը՝ Ս. Վարդանանք, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Մեսրոպ Մաշտոց և Ս. Սահակ Պարթև:

Քրիստոնեության պատկերացումները տիեզերքի և մարդու մասին արմատապես տարբերվում էին հեթանոսական աշխարհայացքից: Քրիստոնեության ընդունումից հետո այդ պատկերացումները պետք է դրվեին հասարակության կազմակերպման հիմքում:

Քրիստոնեական ազգային արժեհամակարգի մշակման գործին խոչընդոտում էին ոչ միայն հեթանոսությունն ու սնոտի հավատալիքները, այլև զրադաշտականությունն ու փիլիսոփայական՝ թյուր, անընդունելի ուղղությունները: Այս հոսանքների քննադատության, դրանց գաղափարների մերժման խնդիրը լուծեց **Եզնիկ Կողբացին իր «Եղծ աղանդոց»** աշխատությամբ:

Այս պատկերացումների հիման վրա Հայոց եկեղեցին քրիստոնեական արժեհամակարգի շրջանակներում առանձնացրեց «**մենք**» և «**մեր հարևանները**», մշակեց վերջիններիս հետ հարաբերությունների ձևերն ու սկզբունքները:

Արժեքային համակարգի հիման վրա հասարակությունը մշակում է արտաքին վտանգը դիմակայելու և հաղթահարելու մեխանիզմներ: Ազգային արժեքային համակարգը ներառում է ոչ միայն տեղեկություններ սպասվող վտանգի ձևի (ռազմա-

քաղաքական, կրոնական, գաղափարախոսական, մշակութային և այլն), այլև այն հաղթահարելու ճանապարհների մասին:

Հայկական էթնիկ ընդհանրության նույնականությունը պահպանելու համար հայկական մշակույթը, **հենվելով նոր արժեհամակարգի վրա, ձևավորվեց որպես քրիստոնեական ազգային մշակույթ**: Մշակվեցին հասարակական կյանքի կազմակերպման նոր ձևեր ու սկզբունքներ, կարճ ժամանակի ընթացքում քրիստոնեությունը դարձավ անշրջելի հավատ ու միասնական կրոն, ստեղծվեց գիր և գրականություն: Այս արժեքների հիման վրա ձևավորվեց ազգային-հոգևոր այնպիսի նկարագիր, որ հայ ժողովուրդը հաղթող դուրս եկավ հետագա դարերի արտաքին քաղաքական ու օտար մշակութային առճակատումներից:


ԵԿԵՂԵՑԻ
ԱՐՔՈՒՆԻՔ
ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ
ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՎՈՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ
ՆՈՒՅՆԱԲՆՈՒՅԹ ՀՈԳԵՎՈՐ ՏԱՐԱԾՔԻ ՍՏԵՂԾՈՒՄ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ԼԵԶՈՒ (ԳԻՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ
ՀԱՎԱՏ
ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ - ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ

Հարցեր և առաջադրանքներ

1. *Ի՞նչ մշակութային ազդեցությունների տակ էր հայ հասարակությունը IV-V դարերում:*
2. *Ինչո՞վ էր պայմանավորված հայ հասարակության վերջնական մշակութաարժեքային կողմնորոշումը:*
3. *Ո՞րն էր ազգային հոգևոր կենտրոնի ստեղծման նպատակը: Ինչպիսի՞ տեսական և գործնական պայմաններ են անհրաժեշտ ազգի ձևավորման համար:*
4. *Ի՞նչ ենք հասկանում նույնաբնույթ հոգևոր տարածք ասելով: Ի՞նչ հատկանիշներ ունի հոգևոր-ազգային տարածքը:*
5. *Ներկայացրեք Մովսես Խորենացու և Եզնիկ Կողբացու երկերի նշանակությունը քրիստոնեական ազգային արժեհամակարգի ձևավորման գործում:*
6. *Ո՞ր խորհրդանիշները սրբացրեց Հայոց եկեղեցին: Ներկայացրե՛ք դրանք:*

Քննարկենք

ա) Հայոց պատմության և Հայոց եկեղեցու պատմության խորապատկերի վրա ներկայացրե՛ք քրիստոնեական ազգային արժեքային համակարգի ձևավորումը:

բ) Փորձե՛ք բացատրել գծակարգը: Ձեր կարծիքով՝ այն ունի՞ արդիական նշանակություն:

3. ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց հետո Հայոց եկեղեցու առջև դրվեցին **երկու կարևորագույն խնդիրներ**: Նախ՝ ուսուցանել քրիստոնեական վարդապետությունը Մեծ Հայքի ամբողջ տարածքում, երկրորդ՝ նոր ուսմունքից բխող հարաբերություններ և սկզբունքներ ներդնել երկրի վարչաքաղաքական համակարգում և հասարակական կյանքում: Այս նպատակով **Հայոց եկեղեցին իր վրա վերցրեց հոգևոր-մշակութային կյանքի կազմակերպման հիմնական ձևերի ու սկզբունքների մշակման խնդիրը:**

Տաթևի վանքը. X-XII դդ.

Ազգային եկեղեցական կյանքի կազմակերպումը

Յուրաքանչյուր կազմավորված հասարակություն, որպես մեկ ընդհանուր համակարգ, բաղկացած է մի քանի ենթահամակարգերից՝ **տնտեսական**, **քաղաքական**, **մշակութային և այլն**: Այս ենթահամակարգերը միմյանցից տարբերվում են իրենց բնորոշ առանձնահատկություններով, հիմնախնդիրներով, նպատակներով, արժեքների նկատմամբ ունեցած դիրքորոշումով և այլն: **Հայոց եկեղեցին կարողացավ մշակել կյանքի կազմակերպման այնպիսի ձևեր և սկզբունքներ, որոնք այս կամ այն չափով ընդունելի էին բոլոր խավերի համար:**

Եկեղեցին կարճ ժամանակի ընթացքում սերտաճեց քաղաքացիական համայնքի հետ և հասարակության հոգևոր ու աշխարհիկ կյանքի կազմակերպման գործում ստանձնեց գործուն դերակատարություն: Յուրաքանչյուր համայնքում գոյություն ուներ եկեղեցի և հոգևորական, կազմակերպվում էին աստվածաշնչային ուսուցումներ, տոնական, ծիսական արարողություններ, բացվում էին դպրոցներ և այլն:

Եթե հեթանոսական տաճարները համարվում էին աստվածների բնակատեղիներ և այնտեղ միայն քրմերն էին մուտք գործում, ապա քրիստոնեական տաճարների դռները բաց էին բոլոր հավատացյալների համար:

Բնակչության հասարակական-եկեղեցական կյանքը կազմակերպելու համար Հայոց եկեղեցին քրիստոնեության շրջանակների մեջ ընդգրկեց գոյություն ունեցող ազգային սովորույթների, ավանդույթների, տոնակատարությունների այն մասը, որը չէր հակասում քրիստոնյայի բարոյական նկարագրին և քրիստոնեական ուսմունքին:

Հայոց եկեղեցին հասարակական-եկեղեցական կյանքի կազմակերպման ընթացքում հաճախ ստիպված էր լինում իր գործունեության մեջ ներառել հասարակական, պետական, քաղաքական, մշակութային, մի խոսքով՝ ազգային բոլոր հիմնախնդիրները: Այսինքն՝ **եկեղեցին և ժողովուրդը միաձուլվել և դարձել էին մեկ ամբողջություն:** Անկախ պետականության բացակայության պայմաններում եկեղեցին ստանձնեց բնակչության աշխարհիկ կյանքի կազմակերպման մի շարք հիմնախնդիրներ ևս:

Եթե հեթանոսական տաճարները համարվում էին աստվածների բնակատեղիներ և այնտեղ միայն քրմերն էին մուտք գործում, ապա քրիստոնեական տաճարների դռները բաց էին բոլոր հավատացյալների համար:

Հասարակական-եկեղեցական կյանքին մասնակցելու ժամանակ էր անհատը առավել հստակ գիտակցում իր ազգային-դավանական պատկանելությունը:

Պատմական դեպքերի բերումով հայ հասարակության զգալի մասը բնակություն էր հաստատել Հայաստանից դուրս: Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ ազգի տարբեր հատվածների միջև բացակայում էին տարածասահմանային շփումները, ուստի տարաբնույթ էթնո-քաղաքական և մշակութային միջավայրերում հայտնված հայ բնակչության էթնիկ նույնականությունը պահպանելու համար եկեղեցական կյանքի կազմակերպումը կարևոր նշանակություն ուներ: Հայության տարբեր հատվածների ազգային, հասարակական, եկեղեցական կյանքի կազմակերպման, հայրենիքի հետ կապի խնդիրները նույնպես լուծում էր Հայոց եկեղեցին:

Հասարակական-եկեղեցական կյանքին մասնակցելու ժամանակ էր անհատն առավել հստակ գիտակցում իր ազգային և դավանական պատկանելությունը: Այս հանգամանքը շատ կարևոր էր, որովհետև պետականության բացակայության պայմաններում հասարակական-եկեղեցական կյանքի կազմակերպման շրջանակներում կատարված յուրաքանչյուր շեղում վտանգում էր ազգի էթնիկ նույնականությունը:

Հասարակական-եկեղեցական կյանքի կազմակերպումը կարելի է ստորաբաժանել երկու՝ **տեսական** (գաղափարական) և **գործնական** (պրակտիկ) բնագավառների:

Առաջինում մշակվում էին հասարակական-եկեղեցական կյանքի կազմակերպման համար անհրաժեշտ կանոնները և սկզբունքները: Հայ հասարակության եկեղեցական կյանքի կազմակերպման համահայկական կենտրոնի կարգավիճակի դերը սովորաբար ստանձնում էր հայոց կաթողիկոսությունը, որը հանդիսանում էր համահայկական հոգևոր-մշակութային, իսկ պետականության բացակայության ժամանակ նաև քաղաքական կենտրոն:

Վերջինս համահայկական խնդիրներ քննարկելու և լուծումներ գտնելու նպատակով պարբերաբար հրավիրում էր ազգային-եկեղեցական ժողովներ:

Միաժամանակ գործում էին նաև մի շարք վարդապետարան-համալսարաններ, վանքեր, որոնք առանձին դեպքերում, այս կամ այն հարցի հետ կապված, կարող էին ունենալ վճռորոշ դերակատարություն (հիշեք միարարական շարժման ժամանակ տեղի ունեցած դեպքերը):

Գործնական բնագավառում (թեմեր, վանքեր, եկեղեցիներ, կրթական հաստատություններ և այլն) կենսագործվում էին կենտրոնի մշակած գաղափարները, որոնք կարելի է բաժանել երկու կարգի՝ **համաքրիստոնեական** և **տեղական-հայկական:** Այս գաղափարների իրագործման համար կարևոր նշանակություն ունեին եկեղեցու ծիսական-դավանական, բարոյական և դատական կյանքի սկզբունքները խտացնող օրենքները՝ կանոնները: Առաջին խմբի մեջ մտնում էին հասարակական-եկեղեցական կյանքի կազմակերպման այն սկզբունքները, որոնք ընդհանուր էին քրիստոնեական բոլոր ուղղությունների համար: Համաքրիստոնեական սկզբունքներից Հայոց եկեղեցու համար ընդունելի էին՝ առաքելական կանոնները, առաջին երեք տիեզերական (Նիկեայի՝ 325 թ., Կոստանդնուպոլսի՝ 381 թ., Եփեսոսի՝ 431 թ.) և մի շարք տեղական ժողովների կանոնները:

Երկրորդ խումբը ներառում էր այն ամենը, ինչը բնորոշ էր միայն հայ հասարակությանը (եկեղեցական տեղական ժողովներ, կանոններ, կաթողիկոսական կոնդակներ և այլն):

Արդեն VIII դ. փորձ արվեց համակարգել ընդունված համաքրիստոնեական և հայկական կանոնները: Այս խնդրի լուծումը հայ հասարակության համար դարձել էր պատմական անհրաժեշտություն, քանզի Հայաստանի մեծ մասը գտնվում էր Արաբա-

Միաժամանակ գործում էին նաև մի շարք վարդապետարան-համալսարաններ, վանքեր, որոնք առանձին դեպքերում, այս կամ այն հարցի հետ կապված, կարող էին ունենալ վճռորոշ դերակատարություն (հիշեք միարարական շարժման ժամանակ տեղի ունեցած դեպքերը):



Համաքրիստոնեական սկզբունքներից Հայոց եկեղեցու համար ընդունելի էին՝ առաքելական կանոնները, առաջին երեք տիեզերական (Նիկեայի՝ 325 թ., Կոստանդնուպոլսի՝ 381 թ., Եփեսոսի՝ 431 թ.) և մի շարք տեղական ժողովների կանոնները:

Ազգային-եկեղեցական համակարգը, հենվելով քրիստոնեական-ազգային արժեհամակարգի վրա, անցնելով հարյուրամյակների փորձություններով, կարողացավ պահպանել հայոց ազգային-հոգևոր նկարագիրը և այժմ էլ շարունակում է իր պատմական առաքելությունը:

կան խալիֆայության տիրապետության տակ, իսկ մյուս մասը՝ Բյուզանդիայի: Երկու հատվածներում էլ հայ հասարակության նույնականությունը վտանգված էր, քանզի և՛ իսլամը, և՛ հունական եկեղեցին փորձում էին հայության մեջ ներդնել հասարակական կյանքի կազմակերպման իրենց ձևերն ու սկզբունքները: Ազգային եկեղեցու անխաթարությունն ու ազգի միասնությունը պահպանելու համար կազմվեց «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն: Այն հետագայում անընդհատ լրացվում էր նոր կանոններով:

Հայոց եկեղեցին, ի վերջո, ստեղծեց ազգային-եկեղեցական սեփական համակարգ:

Հարցեր և առաջադրանքներ

1. *Ի՞նչ խնդիրներ էին դրված Հայոց եկեղեցու առջև քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակվելուց հետո:*
2. *Ե՞րբ է անհատն առավել հստակ գիտակցում իր ազգային պատկանելությունը:*
3. *Ո՞րն է ազգային-եկեղեցական կյանքի կազմակերպման տեսական բնագավառը:*
4. *Հիշե՛ք միարարական շարժումը և ներկայացրեք վարդապետարան-համալսարանների և վանքերի դերն ազգային-եկեղեցական կարևորագույն խնդիրների քննարկման գործում:*
5. *Ինչպիսի՞ դիրքորոշում որդեգրեց Հայոց եկեղեցին ազգային-հասարակական կյանքը կազմակերպելու ընթացքում:*
6. *Ե՞րբ և ինչո՞ւ անհրաժեշտություն առաջացավ համակարգել ընդհանրական և հայկական եկեղեցական կանոնները:*

Քննարկենք

Հայոց պատմության և Հայոց եկեղեցու պատմության խորապատկերում փորձեք ներկայացնել այն խնդիրները, որոնք ծառացած էին հայ հոգևոր-ազգային կառույցի առջև:

Ազգային-հոգևոր նկարագիրը յուրահատուկ համակարգ է, որտեղ խտացված են տվյալ էթնիկ ընդհանրությանը բնորոշ լեզվական, դավանական, բարոյական, հոգեբանական, մշակութային, ընտանեական-կենցաղային և այլ հատկանիշներ:

4. ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՎՈՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Ուսումնառության ընթացքում դուք հաճախ եք հանդիպում «ազգային–հոգևոր նկարագիր» արտահայտությանը, այն անխաթար պահելու մասին լսում խորհուրդներ, հորդորներ և՛ ընտանիքում, և՛ դպրոցում, և՛ եկեղեցում, և՛ պետական ու մշակույթի գործիչների կողմից: Արդ՝ ի՞նչ է ազգային–հոգևոր նկարագիրը:

Ազգային-հոգևոր նկարագիրը յուրահատուկ համակարգ է, որտեղ խտացված են տվյալ էթնիկ ընդհանրությանը բնորոշ լեզվական, դավանական, բարոյական, հոգեբանական, մշակութային, ընտանեական-կենցաղային և այլ հատկանիշներ:

Ազգային-հոգևոր նկարագրի ձևավորման գործընթացը

Ազգային-հոգևոր նկարագրի ձևավորման գործընթացը բաղկացած է միմյանց հետ սերտորեն փոխկապակցված երեք՝ **տեսական, գործնական** և **սոցիոլոգիական** մասերից:

Առաջինի մեջ մտնում են ազգային-հոգևոր նկարագրի անբաժան մաս կազմող **գաղափարախոսությունը, պատկերացումները, խորհրդանիշները**: Գործնական մասը ներառում է այդ գաղափարների պրակտիկ կենսագործումը և վերարտադրությունը, որոնք հիմնականում կատարվում են **ուսուցման, դաստիարակության, ծեսերի, սովորույթների** միջոցով: Սոցիոլոգիական մասը ներառում է այն միջավայրը, որտեղ դրանք կատարվում են և այն կառույցները, որոնք իրագործում են: Այդ միջավայրերն են՝ **ընտանիքը, եկեղեցին, ուսումնական հաստատությունները** և այլն:

Հայոց արժեհամակարգի ձևավորման գործընթացը տեղի էր ունենում հասարակական կյանքի բոլոր՝ **քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր** և **մշակութային** բնագավառներում, ժամանակ առ ժամանակ փոփոխվող արտաքին միջավայրի պայմաններում, ուստի ազգային-հոգևոր նկարագիրը բազմաշերտ կառուցվածք ունի:

Ազգային-հոգևոր կենտրոնի խնդիրն էր պահպանել էթնիկ նույնականությունը, ազգի բարգավաճումն ու բնականոն զարգացումը և թույլ չտալ վտանգավոր ձևախախտումներ: Այս հանգամանքը առանձնակի կարևորություն էր ստանում պետականության բացակայության ժամանակահատվածներում, երբ հայությունը զրկվում էր քաղաքական կենտրոնից և կազմակերպվում որպես մշակութակենտրոն հասարակություն, կամ այն ժամանակ, երբ հայ ժողովրդի մի մասը բնակություն էր հաստատում պատմական հայրենիքից դուրս: Անհրաժեշտություն էր առաջանում հասարակության հիշողության մեջ պահպանել հայրենիքի ազատագրության և անկախ պետականության վերականգնման գաղափարները:

Ազգային-հոգևոր նկարագրի կառուցվածքը

Ազգային-հոգևոր նկարագրի հատկանիշների ձևավորման վրա առավել մեծ է **ազգային հոգեկերտվածքի, հավատի, լեզվի, ավանդական գիտակցության** ազդեցությունը:

Հասարակության տնտեսական զբաղմունքի տեսակները, կենցաղը, որոշ սովորույթների ձևավորումը հաճախ պայմանավորված են **աշխարհագրական միջավայրով**: Այն որոշակի ազդեցություն է թողնում նկարագրի ձևավորման վրա:

Սասունցի Դավիթ

Անհրաժեշտություն էր առաջանում հասարակության հիշողության մեջ պահպանել այն արժեքները, որոնք նա պատմական հանգամանքների բերումով կորցրել էր, սակայն դրանց վերականգնումը պատմական անհրաժեշտություն էր: Օրինակ՝ ուշ միջնադարում հոգևոր ազգային միտքն իրականացրեց անկախ պետականության գաղափարի վերականգնումը հասարակական վերականգնման գիտակցության մեջ:

Հայոց պատմության և Հայոց եկեղեցու պատմության դասընթացից դուք գիտեք, թե ինչ ուժերի կողմից է հարձակումների ու ներխուժումների ենթարկվել Հայաստանը և տարբեր ժամանակաշրջաններում որ ժողովուրդներն են եղել հայերի հարևանները:

Ս. Վարդան Մամիկոնյան

Աշխարհագրական միջավայրի որոշ բաղադրատարրեր, որոնք տվյալ ժողովրդի կյանքում բախտորոշ նշանակություն ունեն, դառնում են այդ ժողովրդի հոգևոր պատկանելության խորհրդանիշներ: Օրինակ՝ հայ հասարակության համար նման խորհրդանիշների դեր են կատարում **Արարատ և Արագած լեռները, Արածանի և Արաքս գետերը, Սևանա, Վանա լճերը** և այլն: Միջավայրը ներազդում է նաև արտաքին աշխարհի հետ այդ էթնոսի հարաբերությունների վրա: Հոգևոր նկարագրի ձևավորման վրա մեծ ազդեցություն է թողնում նաև այն հանգամանքը, թե էթնիկ ընդհանրության զբաղեցրած տարածքն ինչ հաճախականությամբ է ենթարկվում թշնամական հարձակումների և ովքեր են նրա հարևանները: Հայոց պատմության և Հայոց եկեղեցու պատմության դասընթացից դուք գիտեք, թե ինչ ուժերի կողմից է հարձակումների ու ներխուժումների ենթարկվել Հայաստանը և տարբեր ժամանակաշրջաններում որ ժողովուրդներն են եղել հայերի հարևանները: Բացի այդ, հայության տարբեր հատվածներ տարբեր պատճառներով հայտնվում էին հայրենիքից դուրս, նոր միջավայրում, որտեղ ստեղծում էին հայկական իշխանություններ, թագավորություն (Կիլիկիա), գաղթավայրեր:

Յուրաքանչյուր հասարակություն բաղկացած է մարդկանց տարբեր խմբերից, որոնք ունեն **ավանդական գիտակցության** տարբեր տիպեր: Հասարակության մեջ դրանց առկայությունը միշտ անհրաժեշտ է, որպեսզի արտաքին վտանգի դեպքում ունենա պաշտպանական մեխանիզմների մի քանի տարբերակներ: Օրինակ՝ VII-VIII դարերում արաբական տիրապետությունից հայ ժողովրդի ազատագրվելու ուղիների վերաբերյալ հայ հասարակության մեջ առկա էին երկու մոտեցումներ: Մամիկոնյան նախարարները գտնում էին, որ դա հնա-

րավոր է իրականացնել զինված ապստամբության միջոցով և որքան հնարավոր է արագ, իսկ Բագրատունիները նախապատվությունը տալիս էին դիվանագիտական մարտավարությանը: **Այս դիրքորոշումները հայ ազգային-քաղաքական մտքի մեջ պահպանված ավանդական մտածողության դրսևորումներ էին:** Տվյալ դեպքում Մամիկոնյանները հանդես էին գալիս որպես մարտական և ռազմական մտածողության կրողներ, իսկ Բագրատունիները՝ քաղաքական-դիվանագիտական:

Պատմության ընթացքում հասարակությունն անընդհատ կատարելագործում է ավանդական պատկերացումները, որպեսզի վերափոխված իրականության վերաբերյալ ճշգրիտ պատկերացումներ ունենա:

Ազգային-հոգևոր նկարագիրը ձևավորող ամենակարևոր հատկանիշներից է ***լեզուն***: Յուրաքանչյուր ժողովուրդ իր մշակույթը ստեղծում, պահպանում և փոխանցում է լեզվի միջոցով: Հայոց այբուբենի ստեղծումից քիչ անց հայ հոգևոր, քաղաքական գործիչները ձեռնամուխ եղան հայերենով հայոց պատմության շարադրմանը: **Հայոց նորաստեղծ գրերը դառնում են ազգային ինքնության պատմական հիմքերն ուսումնասիրելու և ի հայտ բերելու միջոց:** Այս գործընթացը ժամանակի ընթացքում մեծ բացթողումներ չի ունեցել, որի արդյունքում ձևավորվում է հայկական պատմագիտական դպրոցը:

Ազգային-հոգևոր նկարագրի ձևավորման գործընթացում մեծ է նաև **հավատի** նշանակությունը: Այս նպատակով ստեղծվում է կրթադաստիարակչական համապատասխան համակարգ՝ ուսումնական հաստատություններ՝ դպրոց, համալսարան, մշակվում են աշխարհայացքային և գաղափարական դրույթներ ու տեսակետներ: Սա առավել կարևորվում էր հայ հասարակության համար, քանզի

Փոխվում էր թշնամին, նրա գործելակերպը, ուստի անհրաժեշտություն էր առաջանում պայքարի նոր ձևեր ընտրել: Օրինակ՝ Բյուզանդական կայսրությունը փորձում էր քաղկեդոնականություն պարտադրել, կամ հայտնվում էին տարբեր աղանդավորական շարժումներ: Անհրաժեշտ էր ընտրել պայքարի համապատասխան ձևեր:

Ս. Մեսրոպ Մաշտոց

Հայոց նորաստեղծ գրերը դառնում են ազգային ինքնության պատմական հիմքերն ուսումնասիրելու և ի հայտ բերելու միջոց:

Հայոց եկեղեցին փաստորեն դավանանքը դարձրեց ազգային հոգևոր նկարագրի կարևորագույն հատկանիշներից մեկը:

պետականության բացակայության պայմաններում այս խնդիրներով հիմնականում զբաղվում էր Հայոց եկեղեցին: Ստեղծվում էին դպրոցներ, որոնք մասնագիտանում էին հոգևոր պատրաստության այս կամ այն ուղղությամբ: Օրինակ՝ Սյունիքում ձևավորվել էր քերթողական, մեկնողական (այս մասին ավելի մանրամասն տրված է դաս 11-ում) գործի բազմահմուտ դպրոց:

Հայոց եկեղեցին փաստորեն դավանանքը դարձրեց ազգային հոգևոր նկարագրի կարևորագույն հատկանիշներից մեկը:

Հոգևոր նկարագրի ձևավորման ժամանակ կարևորագույն դեր են խաղում նաև **էթնիկ հոգեբանության** որոշ հատկանիշներ, երբ անհատը հոգեբանական տեսանկյունից գիտակցում է իր պատկանելությունը **«մենք»** հանրությանը և աշխատում է յուրացնել նրան բնորոշ հատկանիշները: Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իրեն բնորոշ հոգեբանություն, որը փոխանցվում է մշակութային ժառանգության յուրացման ճանապարհով: Այս պատճառով ազգային-հոգևոր նկարագրի ձևավորման գործընթացը տրոհվում է **ընտանեկան և հասարակական միջավայրերում**: Սրանցից յուրաքանչյուրն ունի ուսումնադաստիարակչական, ծիսական, ավանդական կանոնակարգված սկզբունքներ ու նորմեր, որոնք դրվում են մարդու ազգային-հոգևոր նկարագրի ձևավորման հիմքում:

Ազգային-հոգևոր նկարագրի բաղադրատարրերից են՝ **ընտանիքի ձևավորման սկզբունքները, սովորույթները, կենցաղը**: Հոգևոր նկարագրի ամբողջացման մեջ զգալի դեր են խաղում **հարսանեկան, ծննդյան, թաղման** և այլ **սովորույթներն** ու **ծեսերը**:

Հասարակության սովորութային և ծիսական կյանքը սովորաբար կազմակերպվում է երեք՝ տուն, եկեղեցի, համայնք միջավայրում:

Ծիսական կյանքի կազմակերպումը հիմնականում իրականացնում է եկեղեցին:

Հայաստանում քրիստոնեության տարածման և հաստատման ժամանակ որոշակի փոփոխություններ տեղի ունեցան նաև ծեսերում և սովորույթներում: Նախ քրիստոնեությունն իր հետ բերեց և ստեղծեց նոր ծեսեր, տոներ ու սովորույթներ և դանդաղորեն դրանք ներդրեց հասարակության գիտակցության մեջ: Մյուս կողմից նա որդեգրեց արդեն ավանդույթ դարձած որոշ ծեսեր և սովորույթներ, թույլատրեց դրանց կատարումը, սակայն դրանց տրվեց նոր բովանդակություն:

Հոգևոր նկարագրի հատկանիշների ամբողջացման գործում ուրույն տեղ են զբաղեցնում կենցաղը՝ **աշխատանքը, բնակարանը, հագուստը, սնունդը,** ինչպես նաև **վարվելակերպի նորմերը:**

Այսպիսով, ազգային-հոգևոր նկարագիրը ամբողջանում և ավարտուն տեսք է ստանում մշակութային, մասնավորապես՝ **լեզվական, դավանական, հոգեբանական, ընտանեկան, կենցաղային** որոշակի հատկանիշների հիման վրա: Յուրաքանչյուր ժողովրդի հոգևոր նկարագրի, ազգային տարատեսակի հիմնական հատկանիշներն արտահայտվում են **մշակույթի** բնագավառում, ուստի այնտեղ կենտրոնացված են մյուս մշակույթների նկատմամբ ունեցած տարբերակիչ առանձնահատկությունները:

Ազգային-հոգևոր նկարագրի բաղադրատարրերից են՝ ընտանիքի ձևավորման սկզբունքները, սովորույթները, կենցաղը: Հոգևոր նկարագրի ամբողջացման մեջ զգալի դեր են խաղում հարսանեկան, ծննդյան, թաղման և այլ սովորույթներն ու ծեսերը:

Հոգևոր նկարագրի հատկանիշների ամբողջացման գործում ուրույն տեղ են զբաղեցնում կենցաղը՝ աշխատանքը, բնակարանը, հագուստը, սնունդը, ինչպես նաև վարվելակերպի նորմերը:


ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՄԱԿԱՐԳ
ԳԱՂԱՓԱՐՆԵՐ, ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ, ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ
ՈՒՍՈՒՑՈՒՄ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ
ԸՆՏԱՆԻՔ, ԵԿԵՂԵՑԻ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԱՅԼՆ
ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՎՈՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Հարցեր և առաջադրանքներ

1. *Ի՞նչ մասերից է բաղկացած ազգային-հոգևոր նկարագրի ձևավորման գործընթացը:*
2. *Ո՞րն է ազգային-հոգևոր կենտրոնի խնդիրը: Հայոց պատմությունից բերե՛ք օրինակներ և փորձեք այդ օրինակների շրջանակներում վերլուծել ստեղծված իրավիճակը և ազգային-հոգևոր կենտրոնի գործունեությունը:*
3. *Որո՞նք են ազգային-հոգևոր նկարագիրը ձևավորող հատկանիշները: Թվարկե՛ք դրանք և ներկայացրե՛ք դրանց նշանակությունը:*
4. *Ի՞նչ գործոններ են ազդում ազգային-հոգևոր նկարագրի ձևավորման վրա: Օրինակ՝ ներկայացրե՛ք ավանդական գիտակցության ազդեցությունը, բերե՛ք օրինակներ:*
5. *Որո՞նք են ազգային-հոգևոր նկարագրի բաղադրիչները:*
6. *Փորձե՛ք բերել հայ և այլ ժողովուրդների ազգային-հոգևոր նկարագրի օրինակներ և համեմատություններ անցկացնել:*

Քննարկենք

ա) Համատեղ քննարկման միջոցով ներկայացրե՛ք լեզվի դերը ազգային-հոգևոր նկարագրի ձևավորման գործում:

բ) Փորձի՛ր ներկայացնել քո ազգային-հոգևոր նկարագիրը:

գ) Կազմակերպե՛ք քննարկում հետևյալ հարցի շուրջ՝. «Ազգային-հոգևոր նկարագրի ո՞ր բաղադրատարրերը կարող են փոփոխվել և որո՞նք՝ ոչ»:

Արամ Նահապետ

«Այս Հայկը՝ Թորգոմի որդին, Թիրասի որդին, Գամերի որդին, Հաբեթի որդին, հայաստանցիների նախնին է. և այս են նրա ցեղերն ու սերունդները և նրանց բնակության երկիրը: Այնուհետև... նրանք սկսեցին բազմանալ և երկիրը լցնել»:

Ս. Մովսես Խորենացի

5. ԱԶԳ

Հայոց արժեհամակարգի հիմնարար արժեքներից է **Ազգ** հասկացությունը: Ազգերի ձևավորումը երկարատև զարգացման արդյունք է: Այդ գործընթացը հատկապես բնորոշ է արդյունաբերական հասարակության ժամանակաշրջանին: Իսկ ի՞նչ է ազգը:

Ազգ հասկացությունը

Պատմության դասընթացից հայտնի է, որ դեռևս հին ժամանակներում գոյություն են ունեցել տարբեր ցեղեր և ցեղային միություններ: Հետագայում դրանց հիման վրա առաջացել են ժողովուրդներ, իսկ միջնադարից սկսած հանդես են գալիս ազգերը: Պատմականորեն ձևավորված մարդկանց այս ընդհանրությունները կոչվում են էթնոսներ (հունարեն բառ է, որը ցեղ, ժողովուրդ, ազգ նշանակությունն ունի): Էթնոսների զարգացումն ընթացել է փուլերով և ներկայացնում է աստիճանական փոփոխության հետևյալ պատկերը՝ **ցեղ, ժողովուրդ, ազգ**: Ազգերը էթնիկական ընդհանրությունների ամենախոշոր և զարգացման բարձրագույն աստիճանի վրա գտնվող տեսակն են:

Ազգերի ձևավորումն սկսվել է միջնադարի ավարտին և մեծ թափ ստացել նոր դարերում: Ազգերի առաջացման համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ ու գործոններ, ինչպիսիք են՝ ընդհանուր ծագում ունեցող, ազգակից ցեղերի ու ժողովուրդների քիչ թե շատ խոշոր քանակության առկայությունը, էթնոսի կենսագործունեության պատմական տարածքը (հայրենիքը), այդ տարածքի վրա էթնոսի ներկայացուցիչներին իրար կապող քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգևոր և մշակութային կապերն ու հարաբերությունները: Սե-

փական հայրենիքի գոյությունը հատկապես անհրաժեշտ պայման է ազգի ձևավորման փուլում:

Ժամանակակից ազգերը, այդ թվում՝ հայ ազգը, բնութագրվում են մի շարք հատկանիշներով, որոնցից առավել կարևորներն են.

1. մարդկանց էթնիկական ընդհանրությունը, ընդհանուր ծագման մասին պատկերացումը և **ինքնանվանումը** (էթնոնիմ),
2. ազգային **լեզուն,**
3. ազգային **եկեղեցին**,
4. **մշակույթի ընդհանրությունը**,
5. ազգային **ինքնագիտակցությունը**,
6. **ընդհանուր հոգեկերտվածքը**,
7. ազգային **պետականությունը**:

Հայ ազգը, ինչպես գիտենք, կազմավորվել է պատմական Հայաստանի տարածքում, որը հայերի հայրենիքն է և լիովին համընկնում է Հայկական լեռնաշխարհ կոչվող պատմաաշխարհագրական տարածքին:

Հայ ազգի ծագման և ինքնանվան առաջացման մասին առաջնային է Ս. Մովսես Խորենացու պատմությունը: Պատմահայրն այսպես է ներկայացնում այդ գործընթացը.

«Այս Հայկը՝ Թորգոմի որդին, Թիրասի որդին, Գամերի որդին, Հաբեթի որդին, հայաստանցիների նախնին է. և այս են նրա ցեղերն ու սերունդները և նրանց բնակության երկիրը: Այնուհետև ... նրանք սկսեցին բազմանալ և երկիրը լցնել:

Հարման տարիներ ապրելով սերեց Արամին: Արամի մասին պատմում են, թե շատ քաջագործություններ է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, ում անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր երկիրը, ինչպես հույները՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ»:

«Հարման տարիներ ապրելով սերեց Արամին: Արամի մասին պատմում են, թե շատ քաջագործություններ է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, ում անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր երկիրը, ինչպես հույները՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ»:

Ս. Մովսես Խորենացի



Ազգը բնորոշող հիմնական հատկանիշները

Եվրոպական ժողովուրդների մեծ մասի մոտ լեզվի և հայրենիքի նույնացման գաղափարը դրսևորվել է ավելի ուշ: Օրինակ, XIX դ. սկզբին գերմանացի մի հեղինակ այսպես է սահմանել Գերմանիան՝ որպես «գերմաներենի հայրենիք»:

Լեզուն որոշիչ դեր է խաղացել նաև ազգային պետությունների առաջացման գործում:

Լեզուն ազգաստեղծման և ազգապահպանման առաջնային հատկանիշներից է: Այն որոշիչ դեր է խաղացել նաև ազգային պետությունների առաջացման գործում: Հաճախ լեզվի միջոցով է որոշվել այն տարածքը, որը պատմականորեն հանդիսացել է այս կամ այն ազգի կազմավորման օրրանը, նրա հայրենիքը: Դեռ V դարում հայ պատմիչները Հայաստանի սահմանները նույնացնում էին հայոց լեզվի ընդգրկման տարածքի հետ: Օրինակ՝ Փավստոս Բուզանդը Հայաստան երկիրն անվանում է «հայոց լեզվի Թորգոմական աշխարհ» կամ «հայոց լեզվի ամբողջական աշխարհ»: Այլ առիթներով հայոց լեզվին անդրադառնալիս պատմիչը գիտակցաբար անձնավորում է այն՝ հաղորդելով շնչավոր, կենդանի առարկա-գործոնի նշանակություն, **նույնացնելով Հայաստան-հայեր-հայոց լեզու հասկացությունները**:

Հայոց լեզվին գեղեցիկ և ուրույն բնութագրական է տալիս V դարի պատմիչ Ս. Եղիշեն, համեմատելով այն ժամանակի ինը նշանավոր այլ լեզուների հետ. «Հույների լեզուն փափուկ է, հռոմեացունը՝ սաստիկ, հոնինը՝ պերճ, ալանինը՝ գեղեցկազարդ, գոթինը՝ ծաղրական, եգիպտացունը՝ կարծես մի ծածուկ և խավար տեղից լսվի, հնդիկինը՝ ճռվռացող, իսկ հայինը համեղ է և կարող է բոլոր լեզուներն իր մեջ ամփոփել: Եվ ինչպես գույնը գույնով է պայծառանում և դեմքը՝ դեմքով, և հասակը՝ հասակով, և արվեստը՝ արվեստով, և գործը՝ գործով, նույնպես և լեզուն լեզվով է գեղեցկանում...»:

Լեզուն տվյալ ազգի ներկայացուցիչներին, պետության քաղաքացիներին մեկ ամբողջության մեջ շաղկապող կարևոր միջոց է: Նրա շնորհիվ է ձևավորվում ու զարգանում տվյալ ազգին բնորոշ հոգևոր մշակույթը, այն նպաստում է ազգային նկարագրի պահպանմանը, համերաշխության ու միասնության ապահովմանը:

Մայրենի լեզվի կարևոր գործառույթներից է ազգի ուսուցումն ու դաստիարակությունը: Մայրենի լեզվի միջոցով սերունդներին են փոխանցվում ազգապահպանության այն ձևերն ու միջոցները, որ ստեղծել են նախորդ սերունդները և ամրագրել լեզվի մեջ՝ բառապաշարում, թևավոր արտահայտություններում, ասացվածքներում, առակներում և բանահյուսության այլ նմուշներում: Նկատի ունենալով լեզվի ազգապահպան մեծ նշանակությունը, անհրաժեշտ է, որ այն անաղարտ մնա, հարազատ և մատչելի լինի ազգի բոլոր անդամներին:

Հոգևոր-ազգային կառույց

Նախորդ դասերից դուք արդեն գիտեք հայերի հոգևոր-ազգային նկարագրի ձևավորման գործընթացում Հայոց եկեղեցու ունեցած բացառիկ դերի մասին:

Անկախ պետականության բացակայության ժամանակահատվածներում Հայոց եկեղեցին իր շուրջն է համախմբել ժողովրդին, նրա հավաքական հիշողության մեջ պահպանել էթնիկական ինքնագիտակցությունը, ազատության և ազգային պետականության գաղափարները: Հայոց եկեղեցու միջոցով հայությունը կրոնական ու մշակութային սերտ կապեր է ստեղծել տարբեր քաղաքակրթությունների հետ:

«Հայոց եկեղեցին ազգային եկեղեցի է գերազանցապես, իր հոտն ամբողջովին հայերից կազմված, իր լեզվով, գրականությամբ, արվեստով, ժամերգությամբ ու հոգևոր կյանքով, բնականաբար՝ նաև անցյալով և պատմությամբ շաղկապված հայ ժողովրդի հետ»:

Գարեգին Ա Հովսեփյան

Ազգային դավանանքի միջոցով դարեր շարունակ եկեղեցին միավորել է օտար տիրապետությունների տակ գտնված Հայաստանի և աշխարհասփյուռ հայությանը, պահպանել հայ մարդու հոգևոր-ազգային նկարագիրը:

Քրիստոնեության ընդունումը և հայոց գրերի գյուտը հիմք հանդիսացան հայ ժողովրդի հոգևոր-մշակութային մեծ վերելքի համար: Հատկապես V դարից սկսած եկեղեցին քրիստոնեական ազգային մշակույթի ստեղծման նախանձախնդիրը եղավ և վճռական դեր ունեցավ նրա հետագա զարգացման գործում:

Ազգային դավանանքի միջոցով դարեր շարունակ եկեղեցին միավորել է օտար տիրապետությունների տակ գտնված Հայաստանի և աշխարհասփյուռ հայությանը, պահպանել հայ մարդու հոգևոր-ազգային նկարագիրը:

Այսպիսով՝ **ազգային եկեղեցու ամրապնդումը կենսական նշանակություն ունի ազգի էթնիկական նույնականության պահպանման և զարգացման համար:**

Մշակութային ընդհանրությունը դրսևորվում է տվյալ էթնոսի ստեղծած նյութական և հոգևոր արժեքների միջոցով: Ազգային մշակույթի շնորհիվ որոշակի և ուրույն նկարագիր են ստանում տվյալ ազգը, նրա հայրենիքը: Ժամանակակից աշխարհում ազգերի (էթնոսների) տարբերակման գործում մեծ դեր են խաղում նրանց մշակութային առանձնահատկությունները (հայ մշակույթի դերի ու նշանակության մասին առանձնակի կխոսվի հաջորդ գլխում):

Ազգերն ունեն իրենց բնորոշ ***էթնիկական (ազգային) ինքնագիտակցություն:***

Ազգային ինքնագիտակցությունն անձի ինքնագիտակցության կարևոր բաղկացուցիչն է: Այն կարելի է բնորոշել որպես անձի ուրույն տեսակ, էթնիկական ինքնորոշում, այսինքն՝ անձը տվյալ ազգի միլիոնավոր մյուս ներկայացուցիչների հետ գիտակցում է, որ ինքը նույն ազգի ներկայացուցիչ-

ների մոտ առկա է: Ազգի ներկայացուցիչներին բնորոշ է «յուրայինի» (մենք) և «օտարի» (նրանք) հստակ տարբերակումը: Նրանք գիտակցում են, որ իրենք տարբերվում են ուրիշ ազգերի ներկայացուցիչներից:

Ազգային ինքնագիտակցության ձևավորման համար կարևոր նշանակություն ունի **էթնոսի հետ սեփական անձի հոգեբանական նույնացումը: Այդ ընթացքում տեղի է ունենում անձի վեհացում՝ ազգի նվաճումների, մշակույթի և պատմության հետ նույնանալու միջոցով:** Անձն իր վարքի համար հիմք է ընդունում էթնոսի պատմությունը, մշակույթը: Անձի վեհացման այս գործառույթը բնորոշ է աշխարհի բոլոր ժողովուրդներին, բայց հատկապես նրանց, ովքեր ունեն մեծ, երկարատև և ինչպես ընդունված է ասել՝ հարուստ պատմություն:

Ազգային ինքնագիտակցության ամրապնդման համար անհրաժեշտ է լավ իմանալ սեփական պատմությունը, ճանաչել, սիրել և պահպանել ազգային-հոգևոր արժեքները:

Ընդհանուր հոգեկերտվածք

Ազգն իր ձևավորման և զարգացման ընթացքում ձեռք է բերում հոգեկան հատկությունների մի ընդհանրություն, որը կոչվում է ազգի հոգեբանական կերտվածք կամ հոգեկերտվածք: Դրա մեջ են մտնում **ազգային բնավորությունը, պատմական հիշողությունը, դիրքորոշումները, կարծրատիպերը, խորհրդանիշները, ազգային ոգին և կամքը, մտածելակերպը**:

Առանց պատմական հիշողության ժողովուրդ չկա: Հովհաննես Թումանյանը գրում է. «Անցյալի պատմությունը մի լուսավոր լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար»:

Անձը իր վարքի համար հիմք է ընդունում էթնոսի պատմությունը, մշակույթը:

Ս. Գրիգոր Տաթևացին XIV դ. վերջին - XV դ. սկզբին հայի ազգային-հոգևոր նկարագիրը անխաթար պահելու նպատակով հսկայածավալ աշխատանք կատարեց՝ գրելով պատմական, փիլիսոփայական, դավանաբանական, բնության և հասարակության բոլոր ոլորտներին վերաբերող գրքեր, դասագրքեր: Յուրաքանչյուր հայ այդտեղ կարող է գտնել իրեն հուզող և հետաքրքրող բազում հարցերի պատասխանները՝ դավանաբանականից մինչև կենցաղային:

Ս. Գրիգոր Տաթևացի

Որևէ ազգի քաղաքակրթվածության հիմնական չափանիշներից է այն, թե ինչ չափով է տվյալ ազգը հետաքրքրվում իր պատմությամբ, հարգում իր անցյալը, ստեղծում իր պատմագրությունը: Վերջինս ազգի ինքնության արտացոլումն է: **Պատմական հիշողությունը** կատարում է կարգավորող կարևոր գործառույթ: **Անցյալը վերակենդանացնելու, արժևորելու միջոցով այն ազգի ներկայացուցիչներին պահում է հոգևոր-մշակութային և էթնիկական համախմբվածության վիճակում՝ ազգի պատմությունը դարձնելով շարունակական ու ժառանգական:**

Դարերի ընթացքում այդ խնդիրը փայլուն կերպով իրականացնում էին հայ հոգևոր-ազգային գործիչները՝ ժամանակի հայ աշխարհիկ իշխանությունների ու անհատ նվիրյալների հետ միասին, ստեղծելով ուսումնական հաստատություններ, շարադրելով և վերաարտագրելով հայ ժողովրդի պատմությունը, ապահովելով հոգևոր-մշակութային արժեքների զարգացումն ու փոխանցումը: Օրինակ՝ Ս. Գրիգոր Տաթևացին XIV դ. վերջին – XV դ. սկզբին հայի ազգային-հոգևոր նկարագիրն անխաթար պահելու նպատակով հսկայածավալ աշխատանք կատարեց՝ գրելով պատմական, փիլիսոփայական, դավանաբանական, բնության և հասարակության բոլոր ոլորտներին վերաբերող գրքեր, դասագրքեր: Յուրաքանչյուր հայ այդտեղ կարող է գտնել իրեն հուզող և հետաքրքրող բազում հարցերի պատասխանները՝ դավանաբանականից մինչև կենցաղային:

Ազգերի առաջացման ու գոյատևման պայմանները, նրանց բնորոշ հատկանիշները գտնվում են փոխադարձ կապի և ներգործության մշտական գործընթացի մեջ: **Այդ պայմաններից մեկի կամ մի քանիսի բացակայությունը, ազգային հատկանիշների աստիճանական նվազեցումը, թուլացումը և կորուստն անխուսափելիորեն ազգին տանում են դեպի ծուլում կամ ոչնչացում:**

Ազգերի առաջացման ու գոյատևման պայմանները, նրանց բնորոշ հատկանիշները գտնվում են փոխադարձ կապի և ներգործության մշտական գործընթացի մեջ: Այդ պայմաններից մեկի կամ մի քանիսի բացակայությունը, ազգային հատկանիշների աստիճանական նվազեցումը, թուլացումը և կորուստն անխուսափելիորեն ազգին տանում են դեպի ծուլում կամ ոչնչացում:

Հարցեր և առաջադրանքներ

1. *Բացատրե՛ք էթնոս հասկացությունը: Մարդկանց էթնիկական ընդհանրությունների ի՞նչ տեսակներ կան:*
2. *Ազգերի ձևավորման համար ի՞նչ պայմաններ ու գործոններ են անհրաժեշտ:*
3. *Թվարկե՛ք ազգերին բնութագրող հիմնական հատկանիշները: Ինչպիսի՞ գործառույթներ է կատարում ազգային լեզուն:*
4. *Ներկայացրե՛ք Հայոց եկեղեցու դերը հայ ազգի կազմավորման գործընթացում: Ձեր կարծիքով՝ ազգապահպան ի՞նչ նշանակություն ունի այսօր հայոց ազգային-հոգևոր կառույցը:*
5. *Ինչպիսի՞ հետևանքներ կարող է ունենալ ազգերին բնութագրող հատկանիշներից որևէ մեկի (մի քանիսի) թուլացումը կամ կորուստը տվյալ էթնոսի համար: Հայերի օրինակով ցո՛ւյց տվեք, թե այդ դեպքում ի՞նչ կարող է պատահել ազգային լեզվի, մշակույթի, ընտանիքի, հոգեկերտվածքի և ինքնագիտակցության հետ (հայոց պատմությունից հիշե՛ք, օրինակ, լեհահայոց գաղթավայրի պատմությունը):*

Գործնական աշխատանքներ

1. *Խմբային աշխատանքի միջոցով փորձե՛ք գալ ընդհանուր եզրակացության, թե ազգը բնութագրող հատկանիշներից ո՞րն է առաջնայինը:*
2. *Կատարե՛ք «Պրիզմա» վարժությունը «ազգ» և «ընտանիք» բառերով: Գտե՛ք ազգի և ընտանիքի նմանություններն ու տարբերությունները:*
3. *Բաժանվե՛ք երեք խմբի, և յուրաքանչյուր խումբ թող ներկայացնի ազգապաշտպանության գործում՝*
   ա) պետության, բ) ազգային եկեղեցու և գ) պատմական հիշողության դերը:

6. ՀԱՅՐԵՆԻՔ

Ազգ և **Հայրենիք** հասկացություններն անխզելիորեն փոխկապակցված են: Իսկ ինչպե՞ս է առաջանում այս կամ այն ժողովրդի մեջ հայրենիքի զգացողությունը տվյալ աշխարհագրական տարածքի նկատմամբ:

Պատմահայր Ս. Մովսես Խորենացին գրում է, որ Բելին հաղթելուց հետո Հայկի որդիները և թոռները բնակություն հաստատեցին երկրի տարբեր վայրերում, հիմնեցին տներ և դարձան գերդաստանների նահապետներ: Նրանք մշակեցին հողը, այն պաշտպանեցին թշնամիներից, իրենց քրտինքով և արյամբ վաստակեցին այդ **հողի անանց սեփականության իրավունքը**: Նրանք այդ հողի վրա կառուցեցին հուշարձաններ, տաճարներ, ամրոցներ, հոգևոր-մշակութային արժեքներով հարստացրին այն:

Այնուհետև Հայկից սերած նահապետները ժամանակի ընթացքում միավորվեցին և ստեղծեցին նախ ցեղային միություններ, ապա՝ միասնական հայկական թագավորություն:

Այսպիսով՝ **Հայոց Հայրենիքն ընդգրկում է հայ ազգի (էթնոսի) ամբողջական պատմական ապրելատարածքը:**

Հայկի սերունդները մշակեցին հողը, այն պաշտպանեցին թշնամիներից, իրենց քրտինքով և արյամբ վաստակեցին այդ հողի անանց սեփականության իրավունքը:

Հայրենիքի՝ որպես ձևավորված գաղափարային արժեքի փառահեղ վկայությունն է Արշակ II թագավորի վերաբերյալ պատմությունը, որը պահպանվել է V դարի պատմիչ Փավստոս Բուզանդի երկում:

Հայրենիք հասկացությունը

Հայրենիքի հասկացությունն ու զգացողությունը տարբեր ազգերի մեջ առաջացել են տարբեր ժամանակներում: Այսպես՝ Հայաստանի հարևան Բյուզանդիայում հայրենասիրական զգացումները և բուն «հայրենիք» բառն առաջ են եկել միայն X դարում, եվրոպական երկրներում՝ XV-XX դդ.

Հին և միջնադարյան Հայաստանում հողային սեփականության ձևերից գլխավորը ևս կոչվում էր «հայրենիք»:

Պարույր Սկայորդի

ընկած ժամանակաշրջանում, Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի և Ասիայի շատ երկրներում՝ XIX-XX դարերում:

Դեռևս V դարում գրված հայկական պատմագրական երկերը վկայում են, որ հայ իրականության մեջ արդեն այդ ժամանակ ու դրանից էլ շատ ավելի վաղ գոյություն է ունեցել **Հայաստան-Հայրենիքի հստակ գիտակցություն**: Հայկական սկզբնաղբյուրներում Հայրենիք հասկացությունն ավելի հաճախ արտահայտված է **«Հայոց աշխարհ, երկիր, թագավորություն»** տերմիններով: Իսկ Ս. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հետևյալ հատվածում նա պատմում է հայոց նահապետ Արամի մասին, օգտագործելով «հայրենիք» բառը. «Սա աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով, ... լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա»:

Հայրենիքի՝ որպես ձևավորված գաղափարային արժեքի փառահեղ վկայությունն է Արշակ II թագավորի վերաբերյալ պատմությունը, որը պահպանվել է V դարի պատմիչ Փավստոս Բուզանդի երկում:

Պարսից Շապուհ II արքան խաբեությամբ գերված Հայոց Արշակ թագավորին փորձելու նպատակով հրամայում է արքունի դահլիճի մի հատվածում շաղ տալ պարսկական հող, իսկ մյուս հատվածում՝ հայկական: Այնուհետև, անտեղյակ Արշակի ձեռքից բռնած, Շապուհը պտտեցնում է նրան դահլիճով: Երբ Արշակը կանգնում է պարսկական հողի վրա՝ խեղճանում է, տկարանում, իսկ երբ քայլում է հայկական հողի վրայով՝ սաստիկ ըմբոստանում է և հպարտորեն Շապուհին սպառնում է վրեժխնդիր լինել:

Արդեն IV-V դարերում հայ զինվորականության պատվո վարքականոնի առաջին իսկ պահանջ-կետը նախատեսում էր Հայոց երկրի և պետության անձնուրաց պաշտպանություն: Հայ քրիստոնյա ռազմիկի համար Հայաստանն **«աստվածապաշտ աշխարհ - հայրենիք» էր**: Ահա այն պատգամ-հրահանգներից մեկը, որ սպարապետ Մանվել Մամիկոնյանը (մահ. 384 թ.) տվել է իր որդի Արտաշիրին՝ նախարարական և սպարապետական իշխանությունը նրան հանձնելու պահին. *«Ուրախությամբ հանձն առ մահը երկրի համար, ինչպես և քո քաջ նախնիքը, որովհետև,- ասաց,- դա արդար և Աստծուն ընդունելի գործ է, և երբ այդպես վարվեք, Աստված ձեզ անտես չի անի... Աստվածապաշտ երկրի համար համարձակ մեռե՛ք, որովհետև հենց այդ մահն Աստծու համար է»:* Այս հատվածը շատ պարզ ցույց է տալիս, թե Հայաստանի ազատության համար մղվող գրեթե անընդմեջ պատերազմներում հայ հրամանատարներն ինչ հմտությամբ և հավատով են օգտագործել քրիստոնեական ուսմունքն իբրև մարտաշունչ գաղափարախոսություն: Հայրենիքի համար մեռնելն աստվածահաճո գործ լինելու նույն այս հավատով հայ ռազմիկը մարտնչեց հետագա բոլոր դարերում:

Հայրենիք հասկացության ժամանակային-տարածքային ընդգրկումները

Հայերի համար Հայրենիք հասկացությունն ունի ժամանակային-տարածքային երեք ընդգրկում՝ **պատմական, ներկա** և **ապագայաբանական** (ապագայում կանխատեսվող, ակնկալվող): Այս ընդգրկումները փոխկապակցված են:

Պատմականորեն բուն Հայաստանը Հայկական լեռնաշխարհն է, այն բնիկ երկիրն ու հայրենիքը,

Պարսից Շապուհ II արքան խաբեությամբ գերված հայոց Արշակ թագավորին փորձելու նպատակով հրամայում է արքունի դահլիճի մի հատվածում շաղ տալ պարսկական հող, իսկ մյուս հատվածում՝ հայկական: Այնուհետև, անտեղյակ Արշակի ձեռքից բռնած, Շապուհը պտտեցնում է նրան դահլիճով: Երբ Արշակը կանգնում է պարսկական հողի վրա՝ խեղճանում է, տկարանում, իսկ երբ քայլում է հայկական հողի վրայով՝ սաստիկ ըմբոստանում է և հպարտորեն Շապուհին սպառնում է վրեժխնդիր լինել:

«Աստվածապաշտ երկրի համար համարձակ մեռեք, որովհետև հենց այդ մահն Աստծու համար է»:

Փավստոս Բուզանդ

Հայրենիքը նախևառաջ հող է՝ կենսատարածք, որը հնարավորություն է տալիս ազգին գոյատևելու և զարգանալու ժամանակի պահանջներին համընթաց:

Հովհան Օձնեցի

որտեղ՝

• առաջացել, կազմավորվել և զարգացել է հայ ժողովուրդն ու հայկական քաղաքակրթությունը,

• ստեղծվել է, ապա հազարամյակներով ընթացել ու մաքառել հայկական պետականությունը,

• ձևավորվել են հայերի ազգային նկարագիրն ու բնավորությունը, սովորույթներն ու ավանդույթները,

• հայերը մշակութապես ու հոգեբանորեն՝ ներդաշնակել և ներծուլել են հայրենի բնությանն իրենց քաղաքներն ու գյուղերը, բերդերն ու եկեղեցիները, խաչքարերը, անթիվ-անհամար այլ հուշարձաններն ու ձեռակերտ խորհրդանիշերը,

• հայերը բազմաթիվ պատերազմներում դիմագրավել են թշնամուն՝ պաշտպանելով իրենց տունն ու տեղը, դավանանքն ու հոգևոր կառույցը, կենսաձևն ու աշխարհայացքը, անկախությունն ու պետականությունը, իսկ վերջիններիս բացակայության ժամանակաշրջաններում դիմել են ազատագրական հերոսական փորձերի: Հարյուր հազարավոր հայ ռազմիկների և նահատակների արյամբ է սրբագործվել մեր հայրենիքի՝ Հայաստանի ամեն մի թիզ հողը:

Ուրեմն Հայրենիքը նախևառաջ հող է՝ **կենսատարածք,** որը հնարավորություն է տալիս ազգին գոյատևելու և զարգանալու ժամանակի պահանջներին համընթաց:

Տակավին մինչև 1915 թ. հայ ժողովրդի շուրջ հինգհազարամյա կենսատարածքն ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհը: Ռազմավարական առումով այս ավելի քան 350.000 քառ. կմ տարածք կազմող բարձրավանդակը նմանվում է մի հսկա բերդի, որն ունի մի շարք պաշտպանական շրջաններ, որոնցից յուրաքանչյուրն ի վիճակի է ինքնուրույն ապահովել իր անվտանգությունը: Օտար զավթիչի կողմից պաշտպանական շրջաններից

մեկի կամ մի քանիսի գրավումը դեռևս չէր նշանակում Հայաստանի գրավում, քանի որ մյուս շրջաններում կենտրոնացած հայկական ուժերն ի վիճակի էին լինում վերախմբավորվել և հարմար առիթը փնտրելով՝ հակահարձակման դիմել ու վերատիրանալ Հայաստանի զավթված տարածքին:

Ավելի ուշ՝ XV-XIX դարերում, երբ Հայաստանի պետականությունը կործանվել էր, իսկ ազգային զինված ուժերը հիմնականում ոչնչացված ու վերացված էին ասպարեզից, հայրենիքի գոյատևման գործոնն էր երկրի տարածքում հայկական տարրի մեծամասնություն կազմելը: Երբ մոնղոլական ու թուրքական արշավանքների կամ թուրք-պարսկական պատերազմների հետևանքով Հայաստանի որևէ շրջան ավերվում էր (երբեմն գրեթե անմարդաբնակ դառնում), շատ չանցած Հայաստանի մյուս շրջաններում ապաստանած հայությունը, կարծես մագնիսական ձգողականություն ունենալով հայրենի, պապենական հողի նկատմամբ, դարձյալ վերադառնում ու շենացնում էր այն՝ միշտ հուսալով, որ Հայրենիքը վաղ թե ուշ ձեռք է բերելու ազատություն, անկախություն, տնտեսական և ռազմական հզորություն:

Հայաստանի նահանգներն ու գավառները սոսկ երկրամասեր չէին, այլ շուրջ **հինգհազարամյա կենսատարածք ու Հայրենիք**: Ցեղասպանության ամենածանր հետևանքը եղավ այն, որ արևմտահայության մեծ մասը բնաջնջվեց, իսկ ցեղասպանությունից փրկվածներն անջատվեցին իրենց կենսատարածքից: Ռազմավարական առումով կենսատարածքի կորուստը զրկել է հայերին իրենց հայրենիքի մեծագույն մասից, հետևաբար՝ նաև պաշտպանական մի քանի շրջան ու թիկունք ունենալու նախկին հնարավորությունից: Ներկա Հայաստանը, թեև

Հայրենիքը ամբողջական պատմական հասկացություն է: Եթե պատմության բերումով որոշ ժողովուրդների հայրենիքները բաժանվում են մասերի՝ երկու Կորեա, երկու Գերմանիա, երկու Վիետնամ, երկու Հայաստան և այլն, ապա դա բոլորովին չի նշանակում, թե նշված ժողովուրդների մեկ ամբողջական հայրենիքը վերածվում է երկուսի:

Ժողովուրդների պայքարը հայրենիքի անկախության և հզորացման համար հավերժական գործընթաց է: Այն ժողովուրդները, որոնք դադարեցնում են պայքարը հայրենիքի համար, վաղ թե ուշ կորցնում են այն և դատապարտվում կործանման:

Արցախյան հաղթանակներից հետո մասամբ բարելավեց ռազմական անվտանգությունը, սակայն այլևս չունի նահանջելու, ուժերը վերախմբավորելու տեղ և հնարավորություն, հետևաբար՝ նաև ռազմական որևէ լուրջ պարտության իրավունք:

Ուստի **ապագայաբանական** տեսակետից հայությունը կարող է իր հայրենիքը դարձնել տնտեսապես բարգավաճող, ռազմականապես ուժեղ, ազգային արժեքները համամարդկային արժեքների հետ ներդաշնակորեն զարգացնող, իր պատմությանն ու մշակույթին հավատարիմ մնացած հզոր պետություն:

Աղթամարի Ս. Խաչ վանքը, Վանա լիճ

Հարցեր և առաջադրանքներ

1. *Ո՞րն է հայերի հայրենիքը:*
2. *Որո՞նք են հայրենիք հասկացության ժամանակային-տարածքային ընդգրկումները հայերի համար:*
3. *Ե՞րբ է ձևավորվել «հայրենիք» բառը Հայաստանում և հարևան Բյուզանդիայում:*
4. *Ամենայն Հայոց կաթողիկոս Ղազար Ա Ջահկեցին (1737-1751) հայ ազգը բնութագրող մի չափածո սահմանում է տվել հետևյալ վեց հիմնական բնորոշիչներով՝ ընդհանուր ծագում, հայկական բնիկ տարածքի՝ Հայրենիքի առկայություն, ազգային լեզու, ազգային մշակույթ, Հայ եկեղեցի և հավատ, ազգային ինքնությունն ու հպարտությունը սնող պատմական այլ հիմքեր: Կարդացեք այդ չափածոն և դուրս գրեք այն բառերը, որոնք արտահայտում են Հայաստանում և նրանից դուրս ապրող հայերի խոր կապվածությունն իրենց բնիկ երկրի՝ հայրենիքի հետ.*

«Ազգ Յաբեթեան եւ Թորգոմեան նաեւ Աբրահամեան, վաղահաս պտուղք Բարդուղիմէոսեան եւ Թադէոսեան, լուսածնունդ զաւակք Սուրբ Էջմիածնեայն եւ Գրիգորեայն՝ առանց ամենայն տարակուսանաց եւ հակառակութեանց՝ հայք են եւ ասին.

Ազգք տոհմիւ օրհնեալ.
Երկրաւ բարեբանեալ.
Լեզուաւ կանխազարդեալ.
Գրով բարգաւաճեալ.
Հաւատով ազնուացեալ.
Անուամբ ճոխացեալ,
Առաքինութեամբ բարեպաշտեալ,
Ի Տէր պարծեցեալ,
Եւ զնմանէ գոհացեալ,
Եւ Աստուածաշունչ գրոց քարոզեալ»:

5. XVII-XVIII դարերում Հայոց եկեղեցու գաղափարախոսությունը ներառում էր ազատագրական հետևյալ աղոթքը.

«Մանավանդ ազգս Հայկազյան՝ մեղքերի պատճառով անարժան դարձած և օտարացած, մեղքերի հողմով փոշու պես ցանուցիր եղած երկրի երեսին՝ օտարասեռ ազգերի և ցեղերի մեջ:
Հայցում ենք ամենախնամ և ամենագութ Արարչից, որպեսզի կտրվածը դարձյալ բժշկի. և հոգու գրգանքով - իբրև թռչունը, որ ծագերին իր թևերի տակ է ժողովում - իր ամրածածուկ աջով վերստին հավաքելով հայերին նրանց վիճակված սեփական, բնիկ և հայրենի երկրի ու գավառների մեջ, վերանորոգի այնպես, ինչպես ստեղծել էր ամենասկզբում՝ պանծալի փառքով և բարգավաճող արդյունքով:
Ուժ տա, կազդուրի և հաստատահիմն դարձնի թագավորական ու հոգևոր ինքնիշխանությամբ և ամեն տեսակ բարիքներով»:

(Ղազար Չահկեցի)

Մեկնաբանեք այս աղոթքը: Ձեր կարծիքով, կարելի՞ է այս աղոթքը կարդալ այսօր.
- Այո (ինչո՞ւ):
- Ոչ (ինչո՞ւ):
- Մասամբ կարելի է (ինչո՞ւ):

6. Ի՞նչ նմանություններ և տարբերություններ եք տեսնում հայ ազգի այսօրվա և XVII-XVIII դարերում վիճակների միջև:

7.ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ԱԶԳԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹՅՈՒՆ

Հայրենիքի պահպանման հիմնական գործոնը հայրենասիրությունն է, որի գաղափարը դարերի ընթացքում հարստանում և սերնդից սերունդ է փոխանցվում պատմական հիշողության միջոցով:

Հայրենասիրության շնորհիվ է միայն, որ հայ ժողովուրդը, պատմության ծանրագույն փորձությունների ենթարկվելով, կարողացել է պահպանել իր ինքնությունը, զարգացնել մշակույթը, կառչել հայրենի հողին, պայքարել իր ազատության և անկախության համար: Այդ հատկանիշների մեջ առաջին հերթին կարևորվում է **հանուն հայրենիքի, ազգի և հավատի ինքնազոհաբերման պատրաստակամությունը,** այն է՝ հայրենասիրությունը, ազատատենչությունը, քաջությունը և մարտունակությունը:

Հայ զինվորականության պատվո վարքականոնը

Հայկական պետության վաղ գոյացումը, էթնիկ ինքնագիտակցության բարձր մակարդակը, հաճախակի պատերազմական իրադրությունները նպաստեցին հայկական զինված ուժերում **քաջության**, **մարտունակության** և **հայրենասիրության** գրավոր ու բանավոր օրինակարգավորմանը*: Արդեն IV-V դարերում և գուցե էլ ավելի վաղ հայ զինվորականությունը որդեգրել ու քարոզում էր պրոֆեսիոնալ արժեքների խիստ յուրօրինակ մի համակարգ՝ ***ռազմիկի պատվո վարքականոն,*** որի ութ գլխավոր պահանջների կատարումը պարտադիր էր յուրաքանչյուր հայ ռազմիկի համար: Այդ համակարգը պահպանվել է

Հայկական պետության վաղ գոյացումը, էթնիկական ինքնագիտակցության բարձր մակարդակը, հաճախակի պատերազմական իրադրությունները նպաստեցին հայկական զինված ուժերում քաջության, մարտունակության և հայրենասիրության գրավոր ու բանավոր օրինակարգավորմանը:

Հեթանոսական Հայաստանի արքաների, զորապետների հայրենասիրության, քաջագործության և անձնազոհության վերաբերյալ բազմաթիվ վկայություններ են պահպանվել բանավոր երգերում, ասքերում, առասպելներում, Մովսես Խորենացու երկասիրությունում և այլն:

* **Օրինակարգավորում** – օրենքների, կանոնների համակարգում և ամրակարգում:

«Նա (Մուշեղ սպարապետը) հավատարմությամբ և արդար վաստակով միշտ ջանասիրությամբ աշխատում էր Հայոց աշխարհի և թագավորության համար: Զօրուգիշեր նա աշխատանքի մեջ էր. ջանում ու ճգնում էր պատերազմի ճակատներում, և երբեք թույլ չէր տալիս, որ Հայոց աշխարհի սահմաններից գեթ մի կտոր հող օտարվի:

Նա կյանքն էր դրել իր երկրի համար.

և կմեռներ քաջի անվան համար,

իր բնիկ տերերի համար,

իր երկրի բնակչության համար,

քրիստոնեական հավատի համար,

Աստծուն հավատացող ու Քրիստոսի անունով մկրտված ժողովրդի համար,

եկեղեցիների համար,

և նրանց սրբազան սպասների համար,

Քրիստոսի վկայարանների համար,

Աստծու հետ ուխտի համար,

իր քույրերի և եղբայրների համար,

իր մերձավոր տոհմակիցների համար,

հանուն հավատարիմ և առաքինի այն բարեկամների, (որոնք) զորավար Մուշեղի (հետ) մշտապես եղել են

Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ, որտեղ ներկայացված են սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի (մահ. 376 թ.) անձնական առաքինությունները և հայրենիքին մատուցած ծառայությունները:

Հայ զինվորականը Հայաստան պետության և հայ ազգի առջև ստանձնում էր հետևյալ գլխավոր հանձնառությունները.

1. Հավատարմություն և անձնուրաց ծառայություն Հայաստան աշխարհին, երկրին ու թագավորությանը:

2. Ասպետական պատվի և համարումի անբիծ պահպանում՝ հարկ եղած դեպքում նաև կյանքի գնով:

3. Հավատարմություն և անձնուրաց ծառայություն Հայաստանի պետական համակարգի նվիրագործված հաստատությանը՝ Հայոց թագավորին (Արշակունի բնիկ տերերին):

4. Հավատարմություն և անձնուրաց ծառայություն Հայաստանի բոլոր բնակիչներին՝ անկախ նրանց սոցիալական ծագումից և դիրքից:

5. Քրիստոնեական հավատի և ազգային եկեղեցու նկատմամբ բարեպաշտ վերաբերմունք և դրանց անձնուրաց պաշտպանություն:

6. Նվիրվածություն ընտանիքին:

7. Նվիրվածություն տոհմակիցներին:

8. Հավատարմություն զինակիցներին:

Հայ զինվորականության պատվո վարքականոնում ամրագրված էին նաև պատիժներ այն խախտողների նկատմամբ: Օրինակ՝ ձերբակալելով դավաճանած հրամանատար-նախարար Դատաբեն Բզնունուն՝ «բերեցին Խոսրով Մեծ թագավորի առջև. նրան քարերով քարկոծեցին, իբրև մի մարդու, որ դավաճան է եղել»:

Զինվորական արժեհամակարգի դրույթներն այնքան էին արմատավորված հայ զինվորականու-

թյան մտայնության ու վարքագծի մեջ, որ դարեր անց էլ նույնությամբ պահպանվել ու կյանքի են կոչվել բազմաթիվ այլ ազատագրական պատերազմների առիթով: Օրինակ՝ 775 թ. ապրիլի 25-ին Արձնի գյուղի մոտ արաբական վեցապատիկ գերակշիռ ուժերի դեմ անհավասար ճակատամարտի մեջ մտնելով՝ հայ ռազմիկները դարձյալ ոգեկոչում էին հայ զինվորականության ավանդական պատվո վարքականոնի՝ մեզ արդեն ծանոթ դրույթները: Ղևոնդ Պատմիչի վկայությամբ՝ նրանք քաջալերում էին միմյանց այսպիսի խոսքերով. «Քաջությամբ մեռնենք հանուն մեր աշխարհի և հանուն մեր ազգի, ու թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանների և մեր Աստուծու փառավորման վայրերի ոտնակոխ լինելն ու պղծվելը, այլ թշնամյաց սուրը թող նախ մեր դեմ ուղղվի, ապա միայն թող լինի այն, ինչ կկամենան»:

Ավելի ուշ՝ XIII դարում, Սյունիքի Եղեգիս քաղաքի մոտ կառուցվեց **Զորաց տաճարը**: Մարտի մեկնելուց առաջ Սիսական գնդերը այստեղ հայրենիքը և հավատը պաշտպանելու պատվո երդում էին տալիս:

Ըստ վարքականոնի՝ հայ զինվորականությունը **մահվան իդեալական եղանակ էր համարում կռվի դաշտում զոհվելը:** Այսպես՝ մահվան մահճում Մանվել սպարապետը դառնորեն արտասվում և ասում է. «Մանկությունից ի վեր ես պատերազմների մեջ եմ մեծացել, ամեն վերք հանձն եմ առել քաջությամբ, և ինչո՞ւ ես բախտ չունեցա պատերազմի մեջ մեռնելու... Որքա՜ն լավ կլիներ, եթե պատերազմի մեջ մեռնեի երկրի համար, որպեսզի եկեղեցիները և Աստծու պաշտոնյաների ուխտը ոտնատակ չլինեին: Ո՞ւր է թե ինձ վիճակվեր մեռնել մեր երկրի բնիկ Արշակունի տերերի համար, մեր կանանց ու որդիների համար, աստվածապաշտ մարդկանց, եղբայրների, ընկերների և մտերիմ բարեկամների համար: Ես շատ հանդուգն էի ինձ պահում, բայց և հերոսական կռիվների մեջ և կյանքը զոհաբերել հայրենիքի համար:

Եվ մահն արհամարհելով իր կյանքի բոլոր օրերում ծառայում էր իր բնիկ Արշակունի տերերին»:

Փավստոս Բուզանդ

Նրանք քաջալերում էին միմյանց այսպիսի խոսքերով. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար, և թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանների և մեր Աստուծու փառավորման վայրերի ոտից կոխան լինելն ու պղծվելը, այլ թշնամիների սուրը թող նախ և առաջ մեր դեմ ուղղվի, ապա թող անեն, ինչ կկամենան»:

Ղևոնդ Պատմիչ

1992 թ. Արցախի հրամանատարությունն ու մարտիկները հայրենի հողն ազատագրելու նվիրումով ու հավատի զորությամբ ազատագրեցին Շուշին: Հայ զինվորներն իրենց համազգեստի թևքին կրում էին Ս. Խաչի նշանը, նույն խաչն էր նաև բոլոր զրահամեքենաների վրա:

այնպես ինձ վիճակվեց մեռնել վատթար մահով՝ անկողնում պառկած»:

Հայոց եկեղեցին սրբագործել է հանուն հայրենիքի և հանուն հավատի կռիվը՝ **վասն հայրենյաց և հավատո**, հայ զինվորի մեջ ամրապնդելով և կրթելով հայրենիքի հանդեպ պարտքի զգացումն ու գիտակցումը:

371 թ. Ձիրավի ճակատամարտում հայոց զորքերը միասնաբար մարտնչելով հաղթեցին պարսից Շապուհ II արքայի մեծաքանակ բանակին: Ճակատամարտի ողջ ընթացքում Հայոց կաթողիկոս Ս. Ներսես Մեծը՝ լեռան գագաթին ձեռքերը վեր բարձրացրած, անդադար աղոթում էր՝ Աստծու աջակցությունը խնդրելով, և իր կերպարով բարձրացնում հայ զինվորի ոգին՝ մինչև թշնամու լիակատար պարտությունը:

Հայոց եկեղեցու մեծագույն սրբերից ու աստվածաբաններից մեկը՝ Ս. Գրիգոր Տաթևացին, իր «Գիրք հարցմանց» երկասիրությունում, խոսելով զենքի և դրա գործադրման մասին, գրում է, որ **զենքը թշնամիներին հալածելու համար է**, և որ Աստված զինական արվեստի միջոցով մարդուն սովորեցրեց, թե ինչպես թշնամիներից պաշտպանվի:

Միջնադարյան հայ մատենագիրների երկերում կան հայ զինվորականության արժեհամակարգի դրույթները հաստատող և լրացնող բազմաթիվ այլ տվյալներ ևս: Դրանք իրենց ցայտուն արտացոլումն են գտել նաև «Սասնա ծռեր» ժողովրդական էպոսում:

Հայերի ռազմական հատկանիշները օտարների գնահատմամբ

Հայերի բացառիկ մարտունակությունը նկատել և արձանագրել են նաև օտարները: Բերենք ընդամենը մի քանի օրինակ: Ըստ VI դարի բյուզանդական պատմագիր Պրոկոպիոս Կեսարացու հաղորդման՝ մինչև 474 թ. բյուզանդական կայսրերն իրենց թիկնազորի «ընտրության ժամանակ նկատի ունեին մարդկանց արժանիքները և հայերին էին տալիս նախապատվությունը»: Հայկական ծագում ունեցող Ռոմանոս III Արգիրիոս կայսեր (1028-1034) թիկնազորը դարձյալ բաղկացած էր հայերից, որոնց էլ նա պարտական էր իր փրկությամբ: Արաբ պատմագիր Քամալ ադ-Դինի վկայությամբ, 1030 թ. Հալեպի մոտ կրած պարտությունից ու բյուզանդական զորքի ցաքուցրիվ լինելուց հետո «կայսրը ճողոպրեց շրջապատված իր մոտ եղած հայերով, որոնք իրենց նետերով պաշտպանում էին նրան»: Ֆրանսիացի հայտնի բյուզանդագետ Շարլ Դիլն այսպես է բնութագրել X դարի իրավիճակը. «Բյուզանդիան պարտական էր Հայաստանին հրաշալի զինվորներով, քանի որ X դարում հայկական ջոկատները բյուզանդական բանակի լավագույն զորամասերն էին համարվում»:

Բյուզանդացի մեկ այլ պատմագիր, խոսելով IX դարի առաջին կեսին բյուզանդական բանակում ծառայած Մանուել անունով մի հայ զորահրամանատարի մասին, գրում է. «Մանուելը շատ խիզախ մարդ էր, բոլոր հակառակորդներին քաջ հայտնի, քանզի նա ծնունդով հայ էր»:

Նույնպիսի հարգանքի ու գնահատանքի էր արժանանում հայկական զորքը նաև Պարսկաստանում: Պարսից Շապուհ II թագավորը, Հայաստանում

Ֆրանսիացի հայտնի բյուզանդագետ Շարլ Դիլն այսպես է բնութագրել X դարի իրավիճակը. «Բյուզանդիան պարտական էր Հայաստանին հրաշալի զինվորներով, քանի որ X դարում հայկական ջոկատները բյուզանդական բանակի լավագույն զորամասերն էին համարվում»:

Այդ ժամանակաշրջանում հայ տղամարդու կերպարը նույնացվում էր արիասիրտ ռազմիկի բնութագրի հետ, այլ կերպ ասած՝ Բյուզանդիայում «հայ» և «քաջ» հասկացությունները հոմանիշ էին:

«Զարմացել եմ ես, – ասում է նա, – իմ տեսածի վրա: Մանկությունից ի վեր միշտ կռվի ու պատերազմի մեջ եմ եղել, շատ տարի է, որ թագավոր եմ դարձել, և տարի չեմ անցկացրել առանց կռվի, բայց ջերմ կռիվը այս էր, որին այս անգամ պատահեցի: Որովհետև երբ Հայոց նիզակավորները առաջ էին գալիս, այնպես էին հարձակվում, ինչպես մի բարձր լեռ կամ ինչպես մի հաստ, հզոր և անշարժ աշտարակ...»:

իր կրած մի խոշոր պարտությունից հետո վերադառնալով Տիզբոն, հիացական գնահատական է տվել հայ ռազմիկների անձնվիրությանը, պատերազմավարժությանն ու մարտական բարձր ոգուն.

«Զարմացել եմ ես, – ասում է նա, – իմ տեսածի վրա: Մանկությունից ի վեր միշտ կռվի ու պատերազմի մեջ եմ եղել, շատ տարի է, որ թագավոր եմ դարձել, և տարի չեմ անցկացրել առանց կռվի, բայց ջերմ կռիվը այս էր, որին այս անգամ պատահեցի: Որովհետև երբ Հայոց նիզակավորները առաջ էին գալիս, այնպես էին հարձակվում, ինչպես մի բարձր լեռ կամ ինչպես մի հաստ, հզոր և անշարժ աշտարակ...

Մի ուրիշ բանի վրա էլ եմ զարմացած՝ Հայկական գնդի միասիրտ հավատարմության և տիրասիրության վրա. որովհետև այսքան տարի է, որ նրանց տերը՝ Արշակը, կորած է նրանց համար, բայց նրանք նրանով էին քաջալերվում պատերազմի ժամանակ»:

Մարտական որոշակի խնդիրներ լուծելու գործում, հատկապես իր հեծելազորի մանևրային կարողություններով ու հարվածային հզորությամբ հայկական բանակն անգերազանցելի էր: **Հայոց այրուձին** մեծ հռչակ էր վայելում ժամանակին, այդ իսկ պատճառով Հռոմի, Բյուզանդիայի և Պարսկաստանի տիրակալները սիրաշահում էին ու տարբեր հնարքներով աշխատում իրենց զինված ուժերի մեջ ընդգրկել այդ ընտիր հեծյալ գնդերը: Պարսկաստանում հայկական զորքի ունեցած վարկի մասին կարելի է որոշակի պատկերացում կազմել թեկուզ Ս. Եղիշեի հետևյալ հաղորդումից.

«... Կարգն այն էր, որ երբ Հայաստանից որևէ պատվավոր զորավարի առաջնորդությամբ հեծելազոր էր գնում (Պարսից թագավորի) Դուռը, (թագավորը) մարդ էր ուղարկում ընդառաջ և հարցնում

էր Հայոց աշխարհի ողջությունն ու խաղաղությունը. և երկու-երեք անգամ նույնն էր անում. զորահանդեսն էլ (թագավորն) ինքն էր անում և պատերազմ սկսելուց առաջ նրանց իրեն մոտ գալ՝ տեղ հասնելն անգամ մեծ շնորհակալության արժանի էր համարում և իր աթոռակիցների ու բոլոր մեծամեծների առաջ գովասանք էր տալիս ամենքին, հիշում էր նրանց նախնիների ծառայությունները և պատմում էր նրանցից յուրաքանչյուրի քաջությունը»:

Ահա Ավարայրի ճակատամարտի նախաշեմին պարսիկ զորահրամանատար Մուշկան Նիսալավուրտի խոսքերն՝ ուղղված իր զորքին.

«Դուք ինքներդ գիտեք Հայոց աշխարհի քաջությունը և ամեն մեկի անվեհերությունը. գուցե պարտություն կրելով՝ կենդանի-կենդանի զրկվեք այն մեծ կյանքից, որ ունենալու եք: Հիշեցե՛ք ձեր կանանց և որդիներին, հիշեցե՛ք ձեր սիրելի բարեկամներին. գուցե ոտնահար լինեք...»:

Մեկ անգամ էլ վերհիշենք տակավին V դարում Պատմահայր Ս. Մովսես Խորենացու ասածը. **«Մեր երկրումն էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել»:**

Ավարայրի ճակատամարտի նախաշեմին պարսիկ զորահրամանատար Մուշկան Նիսալավուրտի խոսքերն՝ ուղղված իր զորքին.

«Դուք ինքներդ գիտեք Հայոց աշխարհի քաջությունը և ամեն մեկի անվեհերությունը. գուցե պարտություն կրելով՝ կենդանի-կենդանի զրկվեք այն մեծ կյանքից, որ ունենալու եք: Հիշեցե՛ք ձեր կանանց և որդիներին, հիշեցե՛ք ձեր սիրելի բարեկամներին. գուցե ոտնահար լինեք...»:

Ս. Եղիշե

Հարցեր և առաջադրանքներ

1. Ազգային նկարագրի հատկապես ո՞ր հատկանիշների շնորհիվ է հայ ժողովուրդը դիմագրավել պատմության ծանրագույն փորձություններին:
2. Ի՞նչը նպաստեց հայկական զինված ուժերում քաջության, մարտունակության և հայրենասիրության գրավոր ու բանավոր օրինակարգավորմանը:
3. Որո՞նք էին IV-V դարերի հայ զինվորականության պրոֆեսիոնալ արժեհամակարգի՝ պատվո վարքականոնի գլխավոր ութ դրույթ-պահանջները: Դիագրամի միջոցով ներկայացրեք դրանք ըստ առաջնակարգության:
4. Հայ զինվորականության պատվո վարքականոնով ի՞նչ պատիժներ էին սահմանված:
5. Բերեք հայերի մարտունակության մասին օտարների արձանագրած օրինակներ:

Քննարկենք

ա) Հայ զինվորականության պատվո վարքականոնն այսօր արդիակա՞ն է, թե՝ ոչ:

բ) Կազմակերպեք քննարկում «Դու պատրա՞ստ ես առաջնորդվել հայ զինվորականության վարքականոնով» թեմայով:

8. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ, ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազատությունը, անկախությունը, պետականությունը քրիստոնեական-ազգային արժեհամակարգում մեկ ամբողջություն են ներկայացնում: Հազարամյակների ընթացքում հայ ազգի կենսագործունեության առանցքն է հանդիսացել այս նվիրական արժեքների **հաստատման, պահպանման, վերականգնման** և **շարունակական գոյության** համար մղած հերոսական պայքարը:

Ազատություն

Ազատությունը ազգերի և մարդկանց ինքնուրույն ապրելու, արարելու բնական և անօտարելի իրավունքն է: Այն նաև համամարդկային արժեք է: Ազատության ձգտումը բնորոշ է աշխարհի բոլոր ժողովուրդներին, և դժվար է պատկերացնել քաղաքակրթությունների զարգացումն առանց մարդկանց և ազգերի ազատ գոյության:

Որևէ անձի ազատության սահմանն ավարտվում է այնտեղ, որտեղ սկսվում է մեկ ուրիշ անձի ազատության սահմանը: «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց» – ավետարանական պատգամից ավելի դիպուկ բնութագրում դժվար է տալ: Ոչ ոք իրավունք չունի բռնանալու ուրիշի ազատության վրա:

Ազատությունն ի սկզբանե եղել է հայ մարդու աշխարհընկալման առանցքը: Դեռ Հայկ Նահապետի ժամանակներից հայ ժողովուրդը որդեգրել է ազատ, ինքնուրույն ապրելու գաղափարը: Հետագա ժամանակաշրջանները ևս հարուստ են այս գաղափարի համար մղած ազատագրական պայքարով, կռիվներով, պատմական հաղթանակներով և

Ազատությունը ազգերի և մարդկանց ինքնուրույն ապրելու, արարելու բնական և անօտարելի իրավունքն է:

Հայոց եկեղեցին նվիրագործել է ազատության, անկախության և պետականության գաղափարները, իսկ հոգևոր-ազգային միտքը տեսականորեն հիմնավորել է հայ ազգի համար ազատության և անկախ պետականության անհրաժեշտությունը, որպես կենսագործունեության և զարգացման նախապայման:

Անկախությունը ազգի ազատության արտահայտման ձևն է, նրա անժխտելի իրավունքը: Բնականոն կենսագործունեության ու զարգացման համար ազգը պետք է լինի ազատ ու անկախ:

բերկրանքի պահերով:

Ազատության ձգտումը վառ կերպով դրսևորվել է հայկական ժողովրդական **«Սասնա ծռեր»** էպոսում:

Ազգի ազատության հետ մեկտեղ հայի համար միշտ նվիրական ձգտում է եղել սոցիալական ազատությունը, որը հնարավորություն է տալիս անհատին լիարժեք դրսևորել սեփական ուժերն ու կարողությունները: Այս առումով Շահամիր Շահամիրյանը դեռ XVIII դարի վերջին գրել է, որ ապագա հայկական պետության մեջ ամեն ոք պետք է կարողանա ազատորեն խորհել, խոսել և հավատալ:

Հայոց պատմությունը վկայում է, որ ազատության գաղափարը մեզանում սերտորեն շաղկապված է անկախության և ազգային պետականության գաղափարների հետ:

Անկախություն

Ազատությունը լիարժեք դարձնելու համար անհրաժեշտ պայման է ազգի և ժողովուրդների անկախ գոյությունը: **Անկախությունն ազգի ազատության արտահայտման ձևն է, նրա անժխտելի իրավունքը**: Բնականոն կենսագործունեության ու զարգացման համար ազգը պետք է լինի ազատ ու անկախ: Ազգերի անկախության, նրանց ինքնորոշման սկզբունքը ձևակերպվել է որպես **ազգերի ինքնորոշման իրավունք:**

Պատմական հանգամանքների բերումով հայության զարգացման բնականոն ընթացքը խաթարվել է մի երկարատև ժամանակաշրջան, ինչը բացասաբար է անդրադարձել ազգային հոգեկերտվածքի վրա:

«Հայոց պատմություն» և «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացներից ձեզ հայտնի է, թե ինչպես ոչնչացվեցին հայոց անկախ պետականության հիմնական հենասյուներից երկուսը՝ թագա-

վորությունը և ազնվականությունը: Հայության առջև ծառացած կարևորագույն խնդիրների լուծման ասպարեզում մնալով միայնակ՝ Հայոց եկեղեցին դարձավ այն կառույցը, որի շուրջ համախմբվեց հայ ազգը: Անկախության և ազգային միասնության գաղափարները աստիճանաբար վերականգնվեցին հասարակության հավաքական գիտակցության մեջ, ինչը հավատ ներշնչեց սեփական ուժերի և ապագայի հանդեպ:

Արցախյան հաղթանակների շնորհիվ հայ ժողովուրդը կրկին վերահաստատեց հավատն ազգային հավաքական ուժի նկատմամբ:

Այսպիսով՝ ազատության և անկախության համար պայքարը դարձել է հայ ժողովրդի հատկանշական գծերից մեկը, նրա ազգային ինքնության դրսևորումը:

Անկախ ազգային պետականություն

Յուրաքանչյուր ժողովուրդ իր կենսագործունեությունն ու հետագա զարգացումն ապահովելու համար պետք է ունենա իր ազգային պետականությունը: Նրանց քաղաքական ինքնակազմակերպումը կարող է հանդես գալ ինքնավարության, դաշնության կամ անկախ պետության ձևով: Իսկ **Պետականության բարձրագույն աստիճանը անկախ ազգային պետությունն է:** Վերջինս սեփական հայրենիքում ինքնիշխանության, ինքնուրույն պետություն ունենալու իրավունքի իրագործումն է:

Ճիշտ է, պետությունն առաջացել է ազգերի ձևավորումից ավելի վաղ, սակայն ազգային անկախ պետականության գոյությունը պարտադիր պայման է, որպեսզի ազգի ձևավորման գործընթացը լիարժեք լինի: Ազգային պետությունն անհրաժեշտ է նաև ազգի բնականոն կենսագործունեությունն ապահովելու համար:

Անկախության և ազգային միասնության գաղափարները աստիճանաբար վերականգնվեցին հասարակության հավաքական գիտակցության մեջ, ինչը հավատ ներշնչեց սեփական ուժերի և ապագայի հանդեպ:

Պատմության նորագույն շրջանի փորձը ցույց է տալիս, որ քաղաքակրթության զարգացումն այժմ մեծամասամբ կրում է ազգային-սոցիալական բնույթ, համամարդկային արժեքներն ու մշակույթը կոնկրետ դրսևորում են ստանում ազգային պետությունների բազմազանության մեջ, դրանց շնորհիվ էլ պահպանվում ու հարստանում են:

Պետության անմիջական առաքելությունը հասարակական կյանքի կառավարումն է, նրա քաղաքական, տարածքային, տնտեսական և սոցիալական կառուցվածքի պահպանումը: Այն ապահովում է համակեցության կանոնների հաստատումը և միասնական իրավաքաղաքական դաշտի ստեղծումը: Պետության կարևոր գործառույթներից է նաև հասարակության հոգևոր կյանքի հովանավորումը, պահպանումը և զարգացումը:

Պատմության նորագույն շրջանի փորձը ցույց է տալիս, որ քաղաքակրթության զարգացումն այժմ մեծամասամբ կրում է ազգային-սոցիալական բնույթ, համամարդկային արժեքներն ու մշակույթը կոնկրետ դրսևորում են ստանում ազգային պետությունների բազմազանության մեջ, դրանց շնորհիվ էլ պահպանվում ու հարստանում են:

Ազատ, անկախ և ազգային պետությունը հայոց արժեհամակարգի կարևոր բաղադրիչներից է: Ազգային պետության գլխավոր նպատակներից է ապահովել հայ էթնոսի համար բնականոն լեզվամշակութային միջավայր, ստեղծել կայուն անվտանգության համակարգ: Աջակից ունենալով Հայոց եկեղեցուն, պետությունը պետք է ոչ միայն պահպանի քրիստոնեական-ազգային հիմնարար արժեքների անխաթարությունը, այլև կազմակերպի դրանք սերունդներին փոխանցելու (ժառանգականության) բնականոն ընթացքը:

Ազգի հոգևոր-մշակութային կեցությունն արդիականացնելու և քաղաքակրթության կողմից ընդունված ու գործող չափանիշներին այն համապատասխանեցնելու դեպքում չպետք է ձևախեղվի ազգային-հոգևոր նկարագիրը: Միայն ազգային անկախ պետականության պայմաններում է հնարավոր ազգի լիարժեք զարգացումը, ազգապահպան և ազգապաշտպան համակարգերի կանոնավոր, ան-

խափան կենսագործունեությունը: Պետությունն իր բազմաբնույթ գործառույթներն իրականացնելիս պետք է առաջնորդվի ազգային շահերի գերակայության սկզբունքով: **Պետությունն ինքը պետք է համապատասխանի ազգի մշակութային և հոգեբանական առանձնահատկություններին և ամենից առաջ՝ արժեքային համակարգին:** Երկրի ներքին կյանքում պիտի ստեղծվեն այնպիսի պայմաններ, որպեսզի բացառվի «Ես»-ի հաղթանակը «Մենք»-ի նկատմամբ: Ժամանակին Լ.Շանթը գրել է. «Մինչև որ ժողովուրդը չվարժվի անձնազոհության, չի ունենա իր ազատությունը, մինչև որ ժողովուրդը չվարժվի իր եսը ենթարկելու համայնքին, չի ունենա իր պետականությունը»:

Ամուր և արդար պետություն ստեղծելու նպատակով Մխիթար Գոշը դեռ XII դարում գրել է, որ թագավորները և իշխանները հարկերը պետք է արդարությամբ վերցնեն, որովհետև **«յԱստուծոյ կարգեցան ի պահպանութիւն և ի փրկութիւն աշխարհի և ոչ ի կործանումն»:**

Ազգային-պետական միասնության ապահովումը

Ազգային-պետական միասնության ապահովման համար հայոց արժեհամակարգում կարևորվում են նաև **արդարության** և **համերաշխության** սկզբունքները:

Արդարության սկզբունքի կիրառումը, արդարամիտ լինելը նշանակում է հարգել ուրիշներին, արդարացի և ճիշտ գնահատել նրանց ու արժանին հատուցել: Արդարության սկզբունքի, արդարության պահանջի գործնական կիրառումը վկայում են էթնոսի մտավոր և բարոյական զարգացման բարձր փուլի մասին: Արդարության սկզբունքն ինքը էթնոսոցիալական արժեք է:

Երկրի ներքին կյանքում պիտի ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ բացառվի «Ես»-ի հաղթանակը «Մենք»-ի նկատմամբ:

Ամուր և արդար պետականություն ստեղծելու նպատակով Մխիթար Գոշը դեռ XII դարում գրել է, որ թագավորները և իշխանները հարկերը պետք է արդարությամբ վերցնեն, որովհետև «յԱստուծոյ կարգեցան ի պահպանութիւն և ի փրկութիւն աշխարհի և ոչ ի կործանումն»:

Աստվածաշնչում ասվում է. «Մի դատե՛ք, որ չդատվեք. որովհետև ինչ դատաստանով որ դատեք, նրանով եք դատվելու. և ինչ չափով որ չափում եք, պիտի նրանով չափվի ձեզ համար»:

Եթե հասարակության մեջ թուլանում է արդարության սկզբունքի դրսևորումը, ապա մեծանում է ազգի պառակտման վտանգը:

Աստվածաշնչում ասվում է. «Մի դատե՛ք, որ չդատվեք. որովհետև ինչ դատաստանով որ դատեք, նրանով եք դատվելու. և ինչ չափով որ չափում եք, պիտի նրանով չափվի ձեզ համար»:

Արդարության, հավասարության, փոխադարձ օգնության նորմերը վաղուց ի վեր դարձել են հայ մարդու կենսաձևի յուրահատուկ կողմեր: **Եթե հասարակության մեջ թուլանում է արդարության սկզբունքի դրսևորումը, ապա մեծանում է ազգի պառակտման վտանգը:** Իսկ անմիաբանությունը հաղթահարելու արդյունավետ միջոց է արդարության սկզբունքի հաստատումը:

Ամփոփելով վերը շարադրվածը, հարկ է նշել, որ անկախ ու ազատ պետականության կայացումը պետք է դառնա ամբողջ հայության, յուրաքանչյուր հայի համար առաջնահերթ հիմնախնդիր: Ազատության և արդարության ճիշտ գիտակցում ունեցող անհատներից կազմված հասարակությունն է ստեղծում իրապես ազատ և անկախ պետականություն, պահպանում ու զարգացնում ազգային-հոգևոր արժեքները:

Հարցեր և առաջադրանքներ

1. *Ի՞նչ է ազատությունը: Ինչո՞ւ ենք այն կարևոր արժեք համարում և՛ ազգի, և՛ անհատի համար:*
2. *Պատմության դասընթացից ձեր սովորածը վերհիշելով՝ բերե՛ք օրինակներ, որոնք վկայում են հայ ժողովրդի ազատասիրության, նրա ազատատենչ ոգու մասին:*
3. *Ի՞նչ է անկախությունը: Ինչո՞ւ է կարևորվում ազգի ազատությունն ու անկախությունը:*
4. *Փորձե՛ք մեկնաբանել ազգերի ինքնորոշման իրավունքի էությունը:*
5. *Պետականության ի՞նչ ձևեր կարող եք նշել, ո՞րն է պետականության բարձրագույն աստիճանը:*
6. *Ներկայացրե՛ք պետության անհրաժեշտությունը և նրա գործառույթները:*
7. *Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է կարևորվում անձնական և ազգային-պետական շահերի ներդաշնակության հաստատումը: Վերհիշե՛ք Մխիթար Գոշի, Լևոն Շանթի խոսքերն այս հարցի կապակցությամբ:*
8. *Բացատրե՛ք արդարության սկզբունքի նշանակությունը հասարակական կյանքում: Ինչո՞ւ է անհրաժեշտ ազգի միասնության ու համերաշխության պահպանումը:*

Գործնական աշխատանքներ

1. *Բաժանվե՛ք չորս խմբի: Յուրաքանչյուր խումբ թող հիմնավորի հետևյալ արժեքների ընդգրկումը հայոց արժեհամակարգում.*

   ա) ազատություն, *գ) ազգային պետություն,*
   բ) անկախություն, *դ) արդարություն:*

2. *Կատարե՛ք «Տրամագիր» վարժությունն ազատություն և ազգային պետություն հասկացություններով:*

Հայոց մեջ ընտանիքը դիտվել է որպես առանցքային արժեք:

9. ԸՆՏԱՆԻՔ

Ավանդական հայ ընտանիք

Ընտանիքը հասարակական կյանքի կազմակերպման ամենավաղ և հազարամյակներ շարունակ ամենից կայուն կերպով պահպանված ու գործող հաստատությունն է: Այն հասարակության ամենից առաջնային ու հիմնային օղակն է, որի վրա խարսխվում է հասարակական փոխհարաբերությունների ողջ համակարգը: Մարդը հասարակական կյանք մտնելու իր ողջ նախապատրաստական շրջանն անց է կացնում ընտանիքում: Երեխան մինչև գիտակից դառնալը հասարակական կյանքի հիմնական սովորույթներին ու նորմերին ծանոթանում է ընտանքում՝ դաստիարակության միջոցով: Նրան մինչև խելամիտ դառնալը ծնողները դեռևս վաղ մանկության հասակում սովորեցնում են ինչը կարելի է, ինչը՝ չի կարելի, ինչը լավ է, ինչը՝ վատ, ինչն է մարդու վարքում ընդունելի ու ինչը՝ դատապարտելի: Այդ ձևով դեռևս մանուկ երեխան ընտանիքում յուրացնում է տվյալ հասարակությունում ընդունելի վարքի նորմերը, որոնք նրան օգնում են արդեն 3-4 տարեկանում, երբ նա մտնում է հասարակական ամենատարրական հարաբերությունների մեջ, օգնում է իմանալ ինչպես իրեն պետք է պահի հասարակական վայրերում: Տվյալ հասարակությունում որքան ամուր են ընտանիքի հիմքերը, այնքան ամուր է այդ հասարակությունը: Ընտանիքի այլասերումը տանում է հասարակության այլասերման և քայքայման:

Ավանդականորեն հայոց մեջ ընտանիքը դիտվել է որպես առանցքային արժեք: Ավանդական հայկական հասարակությունում հնարավոր չէր

պատկերացնել մեկին, ով ապրեր մենակ, առանց ընտանիքի: Ընտանիք բառի անվանումն ինքնին նշանակում է մեկ տանիքի տակ ապրողներ: Հայերն ավանդականորեն ապրել են մեծ ընտանիքներով, որն անվանվել է գերդաստան: Գերդաստանը մի այնպիսի ընտանիք էր, ուր համատեղ մեկ տանիքի տակ ապրում էին ընտանիքի մեծերը՝ իրենց տղաների, հարսների ու թոռների հետ: Ընտանիքի մեծին անվանում էին տանտեր կամ նահապետ: Նահապետի կինն անվանվում էր տանտիկին, տանտիրուհի, մեծ տիկին ձևերով: Նրանք գերդաստանի գլխավորներն էին: Նրանց հետ միասին ապրում էին բոլոր ամուսնացած և չամուսնացած որդիներն ու դուստրերն իրենց երեխաների հետ: Այսօրվա մեր ընկալումներով եթե ձևակերպենք գերդաստանի կազմը, ապա կարելի է ասել, որ գերդաստանում ապրում էին տատիկն ու պապիկը, նրանց թոռնիկները, որոնք բոլորը միմյանց կամ եղբայր ու քույր, կամ հորեղբոր երեխաներ էին և նրանց ծնողները, որոնք երեխաների համար հորեղբայրներ ու հորեղբոր կանայք էին: Պատահական չէ, որ մինչև օրս էլ հայերի մեջ սովորություն կա չտարբերակելու եղբորը կամ քրոջը հորեղբոր որդուց կամ աղջկանից: Նրանց բոլորին էլ քույր կամ եղբայր ենք հաճախ անվանում: Պատճառն այն է, որ երեխաներն ապրելով մեկ տանիքի տակ, միևնույն ընտանիքում, իրենց զգացել են մեկ ընտանիքի անդամ, այսինքն՝ քույր ու եղբայր:

Եղել են հայկական ընտանիքներ, որոնց անդամների թիվը հասել է 40-50 մարդու, իսկ երբեմն՝ մինչև 100 մարդու, որոնք ապրել են մեկ տան մեջ: Այստեղից էլ հայերը հաճախ ընտանիքը նույնացնում են տան հետ: Ասելով տուն՝ մարդիկ հասկացել են ընտանիք: Հարցնելու փոխարեն, թե

Եղել են ընտանիքներ, որոնց անդամների թիվը հասել է 40-50 մարդու, իսկ երբեմն՝ մինչև 100 մարդու, որոնք ապրել են մեկ տան մեջ:

Ժողովուրդը եթե առաջադիմում է, ապա իր առաջին քայլերն առնում է ընտանեկան սրահից, եթե լուսավորվում է, իր լույսն ընտանեկան ճրագից է, եթե հզորանում է, իր ոգին ու կապն ընտանիքն է, եթե հզորանում է, իր ուժն ու բազուկը ընտանիքից է, եթե հարստանում է, իր գանձարանն ու գանձապետն ընտանիքն է...

Խրիմյան Հայրիկ

ո՞ւմ տղան ես, ընդունված է եղել հարցնել՝ ո՞ւմ տանից ես: Հայերն իրենց որպես մեկ միասնական ընտանիք դիտելով, իրենց երկիրը նույնպես հաճախ կոչել են Հայոց տուն: Հայկական ժողովրդական էպոսում էլ հաճախ հանդիպում է Սասնա տուն արտահայտությունը: Ընդհանրապես հայկական աշխարհընկալմանը բնորոշ է հայությանը դիտել որպես մեկ մեծ ընտանիք՝ գերդաստան, որը բխում է հայերի մեկ ընդհանուր նախնուց՝ Հայկ նահապետից ծագելու գաղափարից:

Ընտանիքը հայերն անվանել են նաև ծուխ: Այսպիսի անվանումը գալիս է հայկական ավանդական բնակարանների երդիկից դուրս եկող թոնրի ծխից: Եթե երդիկից ծուխ է դուրս գալիս, նշանակում է այդ տանը մարդ է բնակվում և կյանքն այնտեղ իր ընթացքի մեջ է: Հետաքրքիր է այս առումով գյուղը կամ բնակավայրը նույնպես որպես մեկ ընդհանուր ծուխ, այսինքն՝ ընտանիք դիտելը: Հատկանշական է նաև այս առումով համայնքի հոգևոր հովվին ծխական քահանա անվանելը:

Հայկական ընտանիքի ամրության ու հարատևման գործում մեծ դեր է խաղացել եկեղեցին: Երկար դարեր հայերը չունենալով պետություն, ազգապահպանման խնդիրը լուծել են հավատքի և ընտանիքի ամրության պահպանման միջոցով: Հայոց եկեղեցին գլխավորելով ազգապահպանության դարավոր գործը, գերազանց է հասկացել հայկական ընտանիքի կարևորությունը և իր գործունեությամբ միշտ հսկողության տակ է պահել ընտանիքի ամրության խնդիրը: Եկեղեցին իր այդ գործառույթն իրականացրել է ընտանիքի ստեղծումից սկսած: Ընտանիքի ստեղծումն իրականացվել է եկեղեցում կատարվող Սուրբ պսակի միջոցով, որը դասվում է Հայ եկեղեցու յոթ խորհուրդների շարքը: Պսակը և ամուսնությունը մաքուր

կյանքի, ընտանեկան հավատարմության և ընտանիքի սրբության խորհրդանիշն է:

Ընտանիքը որպես արժեք

Ընտանիքը հայերի հասարակական կյանքում այն աստիճան կարևոր տեղ ունի, որ այն համարվում է սրբություն:

Ինչպես հայրենիքը, ազգը, քրիստոնեական հավատքը, այնպես էլ ընտանիքը հայոց մեջ այն բացառիկ արժեքներից է, հանուն որի անհրաժեշտության դեպքում մարդը պետք է գնա ինքնազոհության: Պատահական չէ, որ ընտանիքի կազմավորումը տեղի է ունենում եկեղեցում և ամուսնացողները խորհրդանշորեն անվանվում են թագավոր և թագուհի: Հարսանեկան ծիսակատարության պահին գլխավերևում պահվող խաչի ներքո նրանց գլխին թագ է դրվում և նրանք ընտանիքին հավերժ նվիրվածության ու հավատարմության երդում են տալիս: Սա խորհրդանշորեն նշանակում է, որ ինչպես թագավորն ու թագուհին են պատասխանատու առաջին հերթին իրենց ազգի ու պետության առջև և պարտավոր են իրենց անձնականը զոհաբերել ազգին ու պետությանը, այնպես էլ ամուսնացող զույգը պատասխանատու է ընտանիքի առջև և պարտավոր են իրենց անձնականն անհրաժեշտության դեպքում ստորադասել ընտանեկանին:

Հիսուս Քրիստոս տղամարդու և կնոջ միությունը համարել է Աստծո կողմից հաստատված և պատգամել, որ տղամարդիկ սիրեն իրենց կանանց և կանայք սիրեն իրենց ամուսիններին, ինչպես Քրիստոս սիրեց եկեղեցին: Հատկանշական է, որ հայկական ընտանեկան շատ ավանդույթներ, որոնք ընդունված է ազգային համարել, սահմանվել

Տունը և ընտանիքը մի փոքրիկ թագավորության երկիրն ու սահմանն են, որի նահապետական աթոռին նստում են ծնողները: Հայրն իբրև թագավոր և մայրն իբրև թագուհի կառավարում են ընտանիքը: Սույն ընտանեկան պալատի ու թագավորության մեջ ո՛չ ոստիկան կա, ո՛չ սուր, ո՛չ բռնություն, ո՛չ գավազան, այլ այդ բոլորի տեղ հայրական սերն ու մայրական գորովն է: Դաստիարակությունն ու խրատը ծնողների կենդանի օրինակն է...

Խրիմյան Հայրիկ

Ընտանիքի կազմավորումը ամուսինների կողմից սիրո և խոհեմության վրա հենված այնպիսի մի քայլ է, որի արդյունքն արարչագործությունն է:

են հենց եկեղեցու կողմից և դարեդար պահպանվելով ու փոխանցվելով սերնդեսերունդ հասել են մեր օրերը: Դրանց թվում հատկապես կարևոր է հիշատակել բազմակնության արգելումը, ամուսնական անհավատարմության (ինչպես տղամարդու կողմից, այնպես էլ կնոջ կողմից) արգելումն ու դատապարտումը, ընտանիքում սիրո և համերաշխության գովաբանումը: Ընտանիքի կազմավորումը ամուսինների կողմից սիրո և խոհեմության վրա հենված այնպիսի մի քայլ է, որի արդյունքն արարչագործությունն է: Այդ արարչագործության մեջ ամենից պատասխանատուն՝ նոր մարդու՝ երեխայի արարումն ու ծնունդն է: Ահա թե ինչու հայերն ընտանիքը համարում են սրբություն, և ընտանիքի կազմավորման գլխավոր վկան Հայոց եկեղեցին է: Աստված մարդկանց ստեղծել է իր կերպարանքով և նրանց տվել արարելու շնորհ: Մարդու՝ արարելու շնորհներից բարձրագույնը նոր մարդ լույս աշխարհ բերելն է: Արարումը սիրո արդյունք է: Առավել ևս երեխան, ըստ քրիստոնեական հավատքի, պետք է սիրո ծնունդ լինի: Ահա թե ինչու քրիստոնեությունն ընտանիքի հիմքը համարում է սերը:

Ընտանիքի դերը հասարակական կյանքում մի քանի առումներով հիմնարար նշանակություն ունի: Դա, նախ, ժողովրդագրական տեսանկյունից ազգի վերարտադրության խնդիրն է:

Ընտանիքի մյուս կարևոր դերը դաստիարակությունն է: Ընտանիքում է նորածինը պատրաստվում հասարակական կյանքին, ծնողների և տատիկ-պապիկների կողմից դաստիարակություն ստանալու ճանապարհով: Ընտանիքում դաստիարակության գործընթացում երեխան սովորում է մայրենի լեզուն, ազգային նիստ ու կացը, երգն ու պարը, ավագների նկատմամբ հարգանքը և բազմաթիվ այլ կարևոր բաներ: Դրանք՝ լինելով մեր ազգային մշակույթի

բաղկացուցիչը, ապահովում են նաև սերնդեսերունդ մշակույթի վերարտադրության իրականացումը և հոգևոր-ազգային նկարագրի ու ինքնության պահպանումը: Ուստի ընտանիքի դերն արժևորվում է նաև ազգային արժեքների և մշակույթի պահպանման ու վերարտադրության տեսանկյունից:

Մարդու արարելու շնորհներից ամենից բարձրագույնը նոր մարդ լույս աշխարհ բերելն է:

Հարցեր և առաջադրանքներ

1. *Նկարագրե՛ք գերդաստանը:*
2. *Ինչպե՞ս էին անվանում ընտանիքի մեծին:*
3. *Ինչո՞ւ էին հայերն իրենց դիտում որպես մեկ մեծ ընտանիք:*
4. *Է՞լ ինչպես են հայերն անվանել ընտանիքը:*
5. *Ի՞նչ դեր ունի ընտանիքը հասարակական կյանքում:*

Քննարկենք

1. *Ինչո՞ւ է հայոց եկեղեցին կարևորում ընտանիքի ստեղծումն ու ամրությունը:*
2. *Քրիստոնեական-ազգային արժեքների պահպանումն ընտանիքում ինչպե՞ս կարող է նպաստել «հայ» տեսակի շարունակականությանն ու հարատևմանը:*

Թորոս Ռոսլին. Ավետում

Ազգային մշակույթը հանդես է գալիս ավանդական, սովորութային նորմերն ու բարոյական արժեքները պահպանելու և վերարտադրելու, ազգային ինքնության վերաբերյալ գիտակցությունը սերնդեսերունդ փոխանցելու, կենցաղավարության և մարդկային փոխհարաբերությունների տարբեր ձևերի բազմազանության տեսքով:

10. ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ադասերից մենք իմացանք, որ մշակույթը հսկայական դեր է խաղացել ինչպես բոլոր ազգերի, այնպես էլ հայ ազգի ձևավորման գործում: Հայաստան աշխարհն իր ուրույն նկարագիրն ստացել է հայկական ինքնատիպ մշակույթով՝ հոգևոր և նյութական արժեքներով:

Մշակույթի ոլորտում են ստեղծվում հոգևոր-ազգային այն արժեքները, որոնց միջոցով պահպանվում, վերարտադրվում և զարգանում է հայոց արժեհամակարգը:

Ազգային մշակույթի գործառույթները

Հայկական մշակույթը հսկայական դեր է խաղացել մեր ժողովրդի պատմության մեջ: Այն շարունակական ձևով ստեղծվել ու զարգացել է որպես մեկ միասնական ամբողջություն:

Ազգային մշակույթն իր բովանդակությամբ բազմաշերտ է և բազմազան՝ իր դրսևորումներով: Այն հանդես է գալիս ավանդական, սովորութային նորմերն ու բարոյական արժեքները պահպանելու և վերարտադրելու, ազգային ինքնության վերաբերյալ գիտակցությունը սերնդեսերունդ փոխանցելու, կենցաղավարության և մարդկային փոխհարաբերությունների տարբեր ձևերով:

Միասնական լեզվի, գրի ու գրականության ձևավորումից հետո հայոց հոգևոր-ազգային կառույցի միջոցով հասարակական կյանքի դավանաբանա-

կան, կրթական, գիտական, գեղարվեստական ոլորտներում ձևավորվեց մշակույթի մի նոր շերտ: Նման նոր մշակութային շերտ առաջ եկավ նաև կյանքի վարչատնտեսական, իրավաքաղաքական և այլ ոլորտներում: Քաղաքակրթական այս ձևերում առաջացած մշակույթն ընդունված է անվանել **ընտրախավային** (էլիտար) մշակույթ: Վերջինս ընտրախավային է կոչվում, որովհետև այդ մշակույթն ստեղծվում, մշակվում և գնահատվում է հասարակության ոչ բոլոր անդամների, այլ պետական, ազգային և հոգևոր գործիչների, բարձրակարգ մասնագետների ու մտավորականների, մի խոսքով՝ հասարակության ընտրախավի կողմից:

Մշակույթի **քաղաքակրթական ձևերը** և **էլիտար շերտը** կատարում են ժողովրդի մշակութային միասնականացման, **ազգաստեղծման գործառույթ**: Մշակույթի քաղաքակրթական ձևերն էապես ազդում են կենցաղի տարբեր դրսևորումների վրա, վերաիմաստավորում դրանք: Էլիտար մշակույթի միջոցով ընկալվում, ըմբռնվում, արժևորվում և այնուհետև վերապրվում ու վերարտադրվում է ազգային մշակույթը:

Ժողովուրդն ազգի է վերածվում, երբ ծավալում է իր հնարավորություններն ու ներուժը մշակույթի էլիտար շերտում:

Այսպիսով՝ **ազգային մշակույթը ծառայում է հասարակության կենսագործունեության ձևերին և կառույցներին, ազգի ներկայացուցիչների ընդհանուր հոգևոր կարիքներին:**

Իսկ ինչպիսի՞ փոխհարաբերության մեջ են գտնվում ազգը և նրա մշակույթը: Երբ ազգը և մշակույթն արդեն ձևավորվել են, ապա ազգի շարունակական գոյությունը դրսևորվում է նրանց երկուսի փոխադարձ ներգործության պայմաններում: Օրինակ՝ հայ ազգն ստեղծում, վերարտադրում և զարգացնում է իր մշակույթը, որը խարսխված է

Այրիվանք (Գեղարդավանք)

Ժողովուրդը ազգ է դառնում, երբ ստեղծում է ազգային մշակույթ, այսինքն՝ ծավալում է իր հնարավորություններն ու ներուժը մշակույթի էլիտար շերտում: Միայն այս պայմանի դեպքում ազգային մշակույթը կկարողանա հավասար երկխոսության մեջ մտնել ուրիշ ազգերի զարգացած մշակույթների հետ:

Ստեղծելով իր մշակույթը՝ ազգը դրանով իսկ դրսևորում և բացահայտում է իր հոգեկան առանձնահատկությունները՝ ազգային բնավորությունը, խառնվածքը, ինքնագիտակցությունը, ազգային ոգին ու մտածելակերպը, մի խոսքով՝ ազգային ինքնությունն ու հոգեկերտվածքը:

Հայ ազգի էթնոկիր լինելու համար անհրաժեշտ է յուրացնել հայկական մշակույթը, և որպեսզի այդ նույն էթնոկիրը ստեղծի հայկական մշակույթ, ***նա պետք է էությամբ լինի հայ:***

* **էթնոկիր** – տվյալ ազգի (էթնոսի) ներկայացուցիչ, նրա բնորոշ հատկանիշները կրող:

քրիստոնեական-ազգային արժեհամակարգի վրա: Իր հերթին մշակույթը, հատկապես կրթական և գիտական համակարգերի, ազգային ու հոգևոր կառույցների միջոցով, շարունակաբար, որպես արժեք և որակ ձևավորում է հայ էթնոսի սերունդներին: Հայ էթնոսի ներկայացուցիչներն էլ իրենց հերթին պահպանում ու զարգացնում են այդ մշակույթը, հայոց արժեհամակարգը: Սա օրինաչափ պատմական երևույթ է: Որպես կանոն, հայկական մշակույթը ձևավորում է հային, ռուսականը՝ ռուսին, գերմանականը՝ գերմանացուն և այլն՝ յուրաքանչյուրին իրեն բնորոշ առանձնահատկություններով:

Հայ ազգի էթնոկիր* լինելու համար անհրաժեշտ է յուրացնել հայկական մշակույթը, և որպեսզի այդ նույն էթնոկիրն ստեղծի հայկական մշակույթ, **նա պետք է էությամբ լինի հայ**:

Ստեղծելով իր մշակույթը՝ ազգը դրանով իսկ դրսևորում և բացահայտում է իր հոգեկան առանձնահատկությունները՝ ազգային բնավորությունը, խառնվածքը, ինքնագիտակցությունը, ազգային ոգին ու մտածելակերպը, մի խոսքով՝ ազգային **ինքնությունն ու հոգեկերտվածքը**:

Մշակութային ժառանգականություն

Հայն ապրել ու ստեղծագործել է քաղաքակրթությունների բոլոր հերթափոխությունների ժամանակաշրջանում: Դրանով իսկ հայկական մշակույթը գտնվում է ոչ միայն անընդհատության գործընթացի մեջ, այլև հավաստում է իր կրող ժողովրդի անընդհատ ներկայությունն իր պատմական հայրենիքում՝ Հայաստանում:

Պատմական յուրաքանչյուր դարաշրջանում դրսևորվում են հայ ժողովրդին առանձնահատուկ աշխարհընկալումն ու աշխարհըմբռնումը, մտածելակերպն ու գործելակերպը: Մշակույթի պահպանումը, զարգացումը և վերարտադրումը միասին մեկ ամբողջական երևույթ են ներկայացնում: Օրինակ՝ հոգևոր-ազգային շինարարական արվեստը և ճարտարապետությունը սերտորեն կապված են տվյալ ժամանակաշրջանի գիտության, մատենագրության, փիլիսոփայության, մանրանկարչության, երաժշտության ու պոեզիայի, կենցաղի ու բարքերի հետ և կրում են դրանց անմիջական ազդեցությունը:

Արդեն V դարում, հայոց գրերի գյուտից անմիջապես հետո, հայկական մշակույթը դրսևորվեց ժամանակի քաղաքակրթական ձևերի՝ կրթության, փիլիսոփայության, պատմագրության, աստվածաբանության մեջ և այլն: Պատմական որոշակի փուլեր անցնելով՝ հայկական մշակույթը ժառանգականորեն հասել է XXI դար: Յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանում մեր ազգային մշակույթը, **շնորհիվ իր ընտրախավի, հավասար երկխոսության մեջ է մտել ժամանակի զարգացած մյուս մշակույթների հետ:**

Խաչքար. Նորավանք
Քանդակագործ՝ Մոմիկ

Պատմական յուրաքանչյուր դարաշրջանում դրսևորվում են հայ ժողովրդին առանձնահատուկ աշխարհընկալումն ու աշխարհըմբռնումը, մտածելակերպն ու գործելակերպը:

Հայ հոգևոր-ազգային կրթությունը, գիտությունը, գրականությունը, արվեստը, հասարակական կյանքի կազմակերպման ձևերը մշտապես նպաստել են, որպեսզի հայության տարբեր հատվածները թե՛ Հայրենիքում և թե՛ Սփյուռքում իրենց գիտակցեն որպես մեկ ընդհանուր՝ հայկական մշակույթի կրողներ:

Անցյալի հարուստ ավանդույթների և արժեքների հիման վրա զարգացել են ու շարունակում են զարգանալ հայ պատմագրությունը, փիլիսոփայությունը, գրականությունը, բառարանագիտությունը, մանրանկարչությունը, երաժշտությունը, ճարտարապետությունը, կրթությունը, տպագրությունը, մամուլը և այլն:

Այդ ավանդույթներն ու արժեքները մշտապես նպաստել են, որպեսզի հայության տարբեր հատվածները թե՛ Հայրենիքում և թե՛ Սփյուռքում իրենց գիտակցեն որպես մեկ ընդհանուր՝ հայկական մշակույթի կրողներ:

Դարեր շարունակ, ավելի քան 1700 տարի Հայոց եկեղեցին կատարել է ոչ միայն ազգային արժեքներ ստեղծելու, այլ նաև հայկական մշակութային ժառանգության փոխանցման գործառույթ:

Ազգային արժեքների վերարտադրությունը

Ազգային արժեքներն անխաթար կարող են գոյատևել և զարգանալ իրենց բնական պատմամշակութային միջավայրում: Այդ արժեքները կամ դրանց որոշակի մասը մշակույթի միջոցով բազմիցս վերարտադրվում են, կրկին ու կրկին ստեղծվում: Շարունակաբար վերարտադրվող արժեքներ են արվեստի և գրականության ստեղծագործությունները, ուսուցման և դաստիարակության միջոցները, հասարակության և պետության կառավարման ձևերը, ընտանիքում և դրանից դուրս մարդկանց փոխհարաբերությունների ընդունված ձևերն ու նորմերը և այլն:

Օրինակ՝ կրթության և գիտության համակարգերի միջոցով հայկական մշակույթի ստեղծած ժառանգությունը ոչ միայն փոխանցվում է նոր սե-

րունդներին, այլև վերջիններիս ջանքերով վերարտադրվում է, թարմացվում և զարգանում:

Երբ որևէ ազգ կամ նրա առանձին խմբերը հայտնվում են օտար երկրում ազգային փոքրամասնության կարգավիճակում, ապա նրանք առաջին հերթին վերարտադրում են այն արժեքներն ու կառույցները, որոնք ազգապաշտպան գործառույթ են կատարում: Դուք արդեն գիտեք, որ սփյուռքահայ համայնքներում առաջնային կարգով ստեղծվել և վերարտադրվել են ազգային եկեղեցին ու հավատը, ազգային դպրոցը, լեզուն, ազգային լեզվով ազգային պատմությունը, կյանքի համայնքային ձևերը, ազգային-ընտանեկան կյանքի նորմերը, արժեքները և այլն:

Էլիտար մշակույթը ոչ միայն վերարտադրում է իրեն, այլև ծավալվում է յուրաքանչյուր պատմական դարաշրջանին բնորոշ նոր ձևերի մեջ: Ազգային մշակույթը, որպես մի ամբողջություն, իր էլիտար շերտի միջոցով անընդհատ դրսևորում է իրեն, զարգանում և փոխանցվում է սերնդեսերունդ: Իր հերթին **էլիտար մշակույթի ազդեցությամբ ձևավորվում են ազգային-ավանդական մշակույթի նոր որակներ:**

Երբ որևէ ազգ կամ նրա առանձին խմբեր հայտնվում են օտար երկրում ազգային փոքրամասնության կարգավիճակում, ապա նրանք առաջին հերթին վերարտադրում են այն արժեքներն ու կառույցները, որոնք ազգապաշտպան գործառույթ են կատարում:

Մշակույթի էթնոպաշտպան դերը

Կարծիք կա, թե ժամանակակից աշխարհում համաշխարհայնացման գործընթացի ազդեցությամբ ազգային առանձնահատկությունները (լեզու, դավանանք, մշակույթ, հոգեբանություն, վարքուբարք և այլն) դուրս են մղվում մարդկային կենսագործունեության որոշ բնագավառներից (արտադրություն, առևտուր, կրթություն, գիտություն, հասարակական կյանքի կազմակերպում) դեպի սովորութային-կենցաղային ոլորտ: Մշակութային

Հայ ժողովրդի դարավոր բեղուն աշխատանքով ստեղծված հոգևոր ու նյութական արժեքները մեր ազգային մշակույթի կենսունակության, հայոց արժեհամակարգի պահպանման ու զարգացման գրավականն են:

Ազգային դավանանքը, հոգևոր արժեքները, պատմական և գեղարվեստական գրականությունը վիթխարի դեր են խաղում հայերի ազգային ինքնագիտակցության և ազգային ոգու պահպանման ու զարգացման գործում:

բազմազանությունը, որ ինքնին մարդկության հարստությունն է, կարծես միտված է համահարթվելու:

Սակայն իրականում այդպես չէ: Քաղաքակրթական համընդհանուր ձևերը՝ քաղաքական, տնտեսական, կրթական, գիտատեխնիկական, ընդգրկում են մարդու կեցության միայն մի մասը:

Մարդու կեցությունն ընթանում է որոշակի ազգային-մշակութային միջավայրում: Դրա հետ են կապված նրա անմիջական ապրումները, զգացմունքները, ակնկալիքները, հոգևոր–բարոյական, գեղագիտական և ճանաչողական արժեքները, պատմական հիշողությունը, մտածողությունը: Իսկ մշակութային այդ միջավայրերն իրականում դրսևորվում են էթնիկական բազմազանության տեսքով:

Որևէ ազգի անկախության և ազգային մշակույթի գոյատևման հարցն ամենևին էլ քանակի հարց չէ: Էլիտար մակարդակին հասած մշակույթն ազգին և պետությանը հնարավորություն է տալիս գտնելու կամ ճշտելու իր տեղն ու նշանակությունը ժամանակակից աշխարհում:

Ազգային մշակույթի միջոցով իրականացվում է նոր սերունդների էթնիկական սոցիալականացումը: Օրինակ՝ ազգային դավանանքը, հոգևոր արժեքները, պատմական և գեղարվեստական գրականությունը վիթխարի դեր են խաղում հայերի ազգային ինքնագիտակցության և ազգային ոգու պահպանման ու զարգացման գործում: **Մշակույթի մեջ են ամրակայված ազգապահպան ռազմավարությունները:**

Մշակույթի պաշտպանական գործառույթն իրականացվում է այն դեպքում, երբ այդ մշակույթը պահպանվում և վերարտադրվում է յուրաքանչյուր նոր սերնդի ջանքերով:

Պատմական պայմանների փոփոխության դեպքում ազգը, անխաթար պահելով հիմնարար արժեքները, իր մշակույթի մեջ նորամուծություններ է կատարում և այն համապատասխանեցնում ժամանակի պահանջներին:

Պատմությունը ցույց է տալիս, որ ժամանակի փորձությանը դիմանում են այն ազգերը, ովքեր հոգատար վերաբերմունք են ցույց տալիս ազգային արժեքների պահպանման, փոխանցման ու զարգացման խնդիրների լուծմանը, այն դարձնում պետական քաղաքականության առաջնային բնագավառ:

Ազգային մշակույթն ինքը նույնպես պաշտպանության կարիք ունի: Ազգերի ձուլումը, ոչնչացումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ազգը կորցնում է իր ինքնատիպ մշակույթը:

Ազգային մշակույթին և նրա ստեղծած արժեքներին ժողովրդին հաղորդակից դարձնելու համար անհրաժեշտ է պահպանել ու զարգացնել ազգային դպրոցը, ընդհանրապես կրթական համակարգը՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքահայ համայնքներում:

Ընդհանրացնելով, կարող ենք վստահաբար նշել, որ **այն ամենը, ինչ հատուկ է միայն հայությանը՝ հայոց ինքնությանը, ստեղծվել, զարգացել ու մեզ է փոխանցվել ազգային մշակույթի՝ հայ գրի, գրականության, պատմության, փիլիսոփայության, ճարտարապետության, մանրանկարչության, երգի, կերպարվեստի միջոցով, ազգային-հոգևոր կառույցների կազմակերպման ու գործունեության արդյունքում:** Հայ ժողովրդի դարավոր բեղուն աշխատանքով ստեղծված հոգևոր ու նյութական արժեք-

Եթե ազգը կորցնում է իր մշակույթը, ապա դրանով իսկ զրկվում է ոչ միայն իր կուտակած դարավոր ժառանգությունից, այլև շրջապատող միջավայրին հարմարվելու, դիմակայելու իր փորձից:

Ժամանակի փորձությանը դիմանում են այն ազգերը, ովքեր հոգատար վերաբերմունք են ցույց տալիս ազգային արժեքների պահպանման, փոխանցման ու զարգացման խնդիրների լուծմանը, այն դարձնում պետական քաղաքականության առաջնային բնագավառ:

Հայկական սփյուռքի պատմական փորձը վկայում է, որ ազգային-մշակութային հիմնական պաշտպանական կառույցների վերստեղծման գործում յուրաքանչյուր հայկական համայնքի ներուժը սահմանափակ է: Ժամանակի ընթացքում, օտար միջավայրի, բազմաթիվ գործոնների ազդեցության հետևանքով այդ ներուժը կարող է աղետալի չափերով թուլանալ:

ները մեր մշակույթի կենսունակության, հայոց արժեհամակարգի պահպանման ու զարգացման գրավականն են:

Հարցեր և առաջադրանքներ

1. *Ի՞նչ դեր է խաղացել մշակույթը հայ ազգի և Հայաստան աշխարհի նկարագրի ձևավորման գործում:*
2. *Պարզաբանե՛ք ազգային մշակույթ հասկացությունը. ի՞նչ է մշակույթի էլիտար շերտը:*
3. *Դասանյութի հիման վրա ներկայացրե՛ք հայ ազգային մշակույթի գործառույթները:*
4. *Փոխադարձ ի՞նչ ազդեցություն ունեն ազգը և նրա մշակույթը: Հայ ազգի օրինակով ցույց տվեք այդ ազդեցությունը:*
5. *Ի՞նչ ենք հասկանում մշակութային ժառանգականություն ասելով:*
6. *Փորձե՛ք հիմնավորել այն միտքը, որ ազգային արժեքների գոյատևման ու վերարտադրման համար իրոք անհրաժեշտ է բնական պատմամշակութային միջավայր:*
7. *Ներկայացրե՛ք կրթության և գիտության դերը հայոց մշակույթի ժառանգականության ապահովման և վերարտադրության գործում:*
8. *Ձեր կարծիքով՝ ի՞նչ է հարկավոր սփյուռքահայ համայնքների գոյատևումն ապահովելու համար: Ի՞նչ դեր ունեն այս գործում Հայոց եկեղեցին և ազգային մշակույթը:*
9. *Ներկայացրե՛ք մշակույթի էթնոպաշտպան դերն ու նշանակությունը:*
10. *Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ մշակույթը շարունակական նորացման և զարգացման անհրաժեշտություն ունի: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:*

Գործնական աշխատանքներ

1. *Բաժանվե՛ք 5–6 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի իր տեսակետն այն մասին, թե ինչու է անհրաժեշտ ազգային-հոգևոր արժեքների պահպանումն ու սերնդեսերունդ ժառանգական փոխանցումը:*
2. *Խմբային աշխատանքի միջոցով վեր հանե՛ք Հայոց եկեղեցու դերը հայկական մշակույթի ստեղծման, պահպանման ու վերարտադրության գործում:*



Անի. Մայր տաճար

«Ովքեր գեթ մի անգամ փիլիսոփայական խոսք են տենչում և պատեհ առիթ են ունենում լոկ մատի ծայրով ճաշակել նրա քաղցրությունը, նրանք բոլոր երկրավոր հոգսերին «մնաք բարով» ասելով, ողջախոհ մի մոլորությամբ անձնատուր են լինում նրան»:

Դավիթ Անհաղթ

*IV դարի փիլիսոփայական մտքի խոշոր ներկայացուցիչներից է **Պարույր Հայկազնը** (272-363): Ճանաչված փիլիսոփային աշակերտել են քրիստոնեական մեծ մտածողներ Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Աստվածաբանը (Նազիանզացի) և ուրիշներ: Քրիստոնեության ընդունումից հետո Պարույր Հայկազնը այն համոզմունքն է հայտնում, որ փիլիսոփայությունը քրիստոնեության հիմնավորման միակ ճանապարհն է: Հռոմը բարձր է գնահատում նրա ծառայությունները, և կենդանության օրոք կանգնեցվում է նրա արձանը հետևյալ մակագրությամբ. «Աշխարհի թագուհի Հռոմը՝ ճարտասանության թագավորին»*

(Rerum regina Roma-regi Eloquentiue):

11. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Փիլիսոփայությունն իր բազմադարյա գոյության ընթացքում մեծապես նպաստել է հոգևոր մշակույթի և գիտական մտքի զարգացմանը: Փիլիսոփայական մտքի առկայությունը ցույց է տալիս տվյալ ազգի քաղաքակրթվածության աստիճանը, մշակութային կյանքի մակարդակը: Հայ մշակույթի համակարգում մեծ է ազգային փիլիսոփայական դպրոցի դերը:

Փիլիսոփայական մտքի զարգացումը

V դարում հայ փիլիսոփայության մեջ ձևավորվում են **տարբեր ուղղություններ, որոնք հանդես են գալիս հետևյալ երեք հիմնական ձևերով՝**

ա) քրիստոնեական ջատագովություն,
բ) նորպլատոնականություն,
գ) բնափիլիսոփայություն:

Քրիստոնեական ջատագովության ուղղության հիմնադիրներ են համարվում **Ս. Մեսրոպ Մաշտոցը, Եզնիկ Կողբացին, Ս. Եղիշեն, Ս. Հովհան Օձնեցին, Ստեփանոս Սյունեցին**: Հայ ջատագովական փիլիսոփայության և աստվածաբանության ներկայացուցիչները հանդես էին գալիս որպես լուսավորիչներ, կրթության գործի կազմակերպիչներ: Նրանք պաշտպանում և հիմնավորում էին քրիստոնեական հավատի դրույթները:

Քաջատեղյակ լինելով անտիկ փիլիսոփաների (Արիստոտել, Պլատոն, Քսենոն և այլք) երկերին, թարգմանելով նրանց հիմնական աշխատությունները համապատասխան մեկնաբանություններով, հայ փիլիսոփաները քրիստոնեական կրոնադավա-

նաբանական դրույթները, գաղափարները հիմնավորելիս շատ հաճախ դիմում էին գիտական և փիլիսոփայական գիտելիքին: Հայ քրիստոնեական ջատագովության առանձնահատկություններից է այն, որ **աստվածաբանությունը և փիլիսոփայությունը, հավատը և բանականությունը չէին հակադրվում միմյանց**, այլ դիտվում էին մի ընդհանուր, միասնական համակարգի մեջ, որտեղ ամեն ինչ փոխկապակցված է: Քրիստոնեության հայ ջատագովները, քննադատելով անտիկ փիլիսոփաների արարչագործությունը մերժող, նյութապաշտական, աշխարհաստեղծման տեսությունները, ստեղծում էին Հայոց եկեղեցու դավանաբանությանը հարիր աստվածաբանական և փիլիսոփայական երկեր: Նրանք հիմնավորում էին միաստվածության գաղափարը: Հայ քրիստոնեական ջատագովության կրոնափիլիսոփայության հայեցակարգում Աստված բացարձակ, ոչնչով չպայմանավորված, հավերժական Գոյ է, ով իր կամքով արարչագործությամբ ոչնչից ստեղծում է տիեզերքը: Ըստ Ս. Եղիշեի՝ Աստված ոչ թե մի որևէ տեղ է, այլ Ինքը տեղ է իր համար, ոչ թե գտնվում է ժամանակի մեջ, այլ ժամանակն է նրանից գոյացել: Աստված ինքն է ամեն ինչի սկիզբը և հավերժական է: Աստված հետևյալ կերպ է բնութագրվում Ագաթանգեղոսի «Ս. Գրիգոր Լուսավորչի Վարդապետության» մեջ. **«Ինքն ամեն ինչ պարունակում է, ամեն ինչի մեջ է, ամեն ինչից վեր է, ամեն ինչից դուրս է, ամեն ինչ նրանով է և ամեն ինչ նրա փառքի համար է»:**

Աստված մարդուն ստեղծել է անձնիշխան, ազատ կամքով: Իր գործունեության մեջ նա ազատ է, ազատ է նաև չարի և բարու ընտրության մեջ: Չարի պատճառը ոչ թե Աստված է, այլ այն մարդու ընտրության արդյունք է, որովհետև Աստված

Հայ քրիստոնեական ջատագովության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ աստվածաբանությունը և փիլիսոփայությունը, հավատը և բանականությունը չէին հակադրվում միմյանց, այլ դիտվում էին մի ընդհանուր, միասնական համակարգի մեջ, որտեղ ամեն ինչ փոխկապակցված է:

Հայ ջատագովները մերժում են ճակատագրապաշտությունը, որը մարդուն դնում է կրավորական, պասիվ և հնազանդ վիճակի մեջ, կոչ անելով նրան ակտիվ, ձեռներեց, ողջախոհ կյանքի: Մարդը՝ լինելով անձնիշխան, ինքն է որոշում իր գործունեության ձևը և, հետևաբար, ինքն էլ պատասխանատու է դրա համար:

նույնիսկ չի կանխորոշում մարդու գործողությունները:

VIII-XI դդ. Հայոց եկեղեցու և ազգային միասնության համար լուրջ վտանգ էին ներկայացնում մի շարք աղանդավորական շարժումներ՝ հատկապես պավլիկյանները և թոնդրակեցիները, որոնք, հանդես գալով եկեղեցու գաղափարախոսության դեմ, ժխտում էին եկեղեցական ծեսերը, արարողությունները, խորհուրդները և ընդհանրապես եկեղեցու դերը հասարակության կյանքում: Այս աղանդների դեմ գրվեցին կրոնափիլիսոփայական և աստվածաբանական երկեր (Ս. Հովհան Օձնեցի, Ս. Գրիգոր Նարեկացի, Անանիա Նարեկացի, Գրիգոր Մագիստրոս), որտեղ դատապարտվեց և տեսականորեն փաստարկված մերժվեց աղանդավորական գաղափարախոսությունը: Ս. Հովհան Օձնեցին **«Ընդդեմ պավլիկյանների»** աշխատության մեջ բացահայտում է այդ աղանդի պատմական և սոցիալական ակունքները, զարգացման ընթացքը, քաղաքական ենթատեքստը: Նա նշում է, որ դրանք **«խելքի չեկած նախկին մծղնե աղանդի բեկորներն» են, որոնք «դաշնակցելով թլպատված (նկատի ունի արաբներին) բռնակալների հետ, նրանց ստվերագիր և առասպելապատում մատյանների հմուտ օգտագործմամբ՝ համբակներին ներգրավեցին իրենց բազմության մեջ»**:

Նորպլատոնականության ուղղության ականավոր ներկայացուցիչը փիլիսոփա Ս. **Դավիթ Անհաղթն** էր (V-VI դդ.): Հայերենով և հունարենով պահպանվել են նրա «Իմաստասիրության սահմանումները», «Ներածություն», «Վերլուծություն» (Արիստոտելի տեսության) աշխատությունները: Լինելով փիլիսոփայության ջատագով և հայ իրականության մեջ տրամաբանության՝ որպես գիտության հիմնադիր, նա իր կյանքի իմաստը տեսնում էր փիլիսոփա-

Փիլիսոփայությունը պետք է ազնվացնի և գեղեցկացնի մարդկային հոգին և փոխադրի այն նյութական ու մառախլապատ կյանքից դեպի աստվածայինը և աննյութականը:

Տիեզերքը Աստծու ստեղծագործությունն է, սկզբում պարզվել են նյութական չորս տարրերը՝ հողը, ջուրը, օդը, կրակը, իսկ սրանց միավորումից էլ առաջացել են երկրային և երկնային իրերը:

յության հեղինակության, կարևորության պաշտպանության մեջ: Նա փիլիսոփայության անհրաժեշտությունը ձևակերպում է որպես Աստծու կողմից մարդուն տրված ամենամեծ շնորհ, որը պետք է **«ազնվացնի և գեղեցկացնի մարդկային հոգին և փոխադրի նրան նյութական ու մառախլապատ կյանքից դեպի աստվածայինը և աննյութականը»**:

Դավիթ Անհաղթը բոլոր գոյերի առաջացման պատճառը համարում է Աստծուն: Պաշտպանելով Աստծու գոյության տիեզերաբանական ապացույցը, նա գտնում է, որ բնությունը ճանաչելով է հնարավոր ճանաչել Արարչին: Մարդը բացառիկ դեր ունի տիեզերքում: Մարդը Աստծու և բնության միջև միջնորդ է: Աստված հոգում է բոլորի մասին, իսկ մարդը՝ ձգտելով նմանվել Նրան, պետք է հոգատար լինի իր և ուրիշների նկատմամբ:

Ս. Դավիթ Անհաղթի երկերն ունեցել են դասագրքերի նշանակություն և օգտագործվել են միջնադարյան համալսարաններում, դպրոցներում:

Հայ միջնադարյան փիլիսոփայության մեջ **բնափիլիսոփայական** մտքի՝ որպես ուղղության կայացումը կապված է Հայոց եկեղեցու նշանավոր վարդապետներից **Անանիա Շիրակացու** (VII դ.) անվան հետ: Հայ բնափիլիսոփայական մտքի համար ուղեցույց է նրա հետևյալ ձևակերպումը. «Չկա ոչինչ, որ կարելի չլինի բացատրել, և չկա ոչինչ, որ անմատչելի լինի բանականությանը»: Իսկ ճանաչողության մեջ Անանիա Շիրակացին առաջնորդվում է «սովորություն է ճշմարտությունն ասել հավաստի տվյալներով» նշանաբանով: Ըստ Շիրակացու՝ Տիեզերքը Աստծու ստեղծագործությունն է, սկզբում պարզվել են նյութական չորս տարրերը՝ հողը, ջուրը, օդը, կրակը, իսկ սրանց միավորումից էլ առաջացել են երկրային և երկնային իրերը: Երկիրը գնդաձև է և գտնվում է տիեզերքի կենտրոնում: Իր միտքը պարզ

Ներսես Լամբրոնացին, Մխիթար Գոշը, Վահրամ Ռաբունին գտնում էին, որ պետության հզորացման նախապայմաններից է բարոյական սկզբունքների և իրավական օրենքների պահպանումը: Նրանք առաջ էին քաշում «Օրենքները մարդու համար են, ոչ թե մարդը՝ օրենքների համար» սկզբունքը:

Մխիթար Գոշ

ներկայացնելու համար Շիրակացին բերում է ձվի օրինակը. **«Ինչպես որ նրա դեղնուցը գնդաձև է և գտնվում է մեջտեղում, սպիտակուցը նրա շուրջն է, իսկ կճեպը շրջապատում է չորս կողմից, ճիշտ այդպես էլ երկիրը գտնվում է մեջտեղում, օդը՝ նրա շուրջը, իսկ երկինքը շրջապատում է չորս կողմից»**: Շարունակելով հայ աստղագիտության լավագույն ավանդույթները, նա մերժում է աստղագուշակությունը, գտնելով, որ մենք ենք մեր մտքերի և գործերի տերը, հետևաբար՝ բարի կամ չար լինելը կախված է մեզնից և ոչ թե լուսատուների փոխդասավորվածությունից:

Հայ փիլիսոփաները հետագա դարերում

X-XV դդ. հայ փիլիսոփայական միտքը կենտրոնանում է սոցիալ-բարոյագիտական և իրավաքաղաքական խնդիրների վրա: **Ներսես Լամբրոնացին, Մխիթար Գոշը, Վահրամ Ռաբունին** գտնում էին, որ պետության հզորացման նախապայմաններից է բարոյական սկզբունքների և իրավական օրենքների պահպանումը: Նրանք առաջ էին քաշում **«Օրենքները մարդու համար են, ոչ թե մարդը՝ օրենքների համար»** սկզբունքը: Հայ իրավափիլիսոփայական մտքի նվաճում է Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց» երկը:

Հայ փիլիսոփայական միտքն աննախադեպ զարգացում ունեցավ XIII-XIV դարերում: Հանդես եկան փիլիսոփաներ, որոնցից յուրաքանչյուրը և՛ փիլիսոփայության, և՛ աստվածաբանության մեջ ունեն իրենց մեծ ավանդը: Նրանք ստեղծեցին իրենց տեսական-փիլիսոփայական համակարգերը, ուր քննարկվում էին Աստծու կեցության, Աստծու և աշխարհի, Աստծու և մարդու, հոգու և մարմնի, հա-

վատի և բանականության, փիլիսոփայության և աստվածաբանության, մարդու կամքի ազատության, ճակատագրի և նախախնամության և այլ հարցեր: Ձևավորվեցին աստվածաբանական-փիլիսոփայական դպրոցներ, որոնցից նշանավորը **Գլաձոր-Տաթևյան** դպրոցն էր իր ականավոր վարդապետներով՝ **Եսայի Նչեցի, Ս.Հովհան Որոտնեցի, Ս. Գրիգոր Տաթևացի, Մատթեոս Ջուղայեցի ու Առաքել Սյունեցի**:

XV դ. երկրորդ կեսից հայ փիլիսոփայական միտքը պատմական հայտնի դեպքերի պատճառով անկում է ապրում մինչև XVII դ. սկիզբը:

XVII դ. հայ փիլիսոփայական միտքը բնութագրվում է անցյալի ընդհատված մշակութային, փիլիսոփայական արժեքների և ավանդույթների վերականգնման գործընթացներով: Կրոնափիլիսոփայական մտքի աշխուժացման համար խթան հանդիսացավ Հայ առաքելական և կաթոլիկ եկեղեցու միջև կրոնադավանաբանական պայքարի սրումը: Այս շրջանի փիլիսոփայության նշանակալից դեմքերից էին **Սիմեոն Ջուղայեցին, Ստեփանոս Լեհացին, Հովհաննես Ջուղայեցին, Ոսկան Երևանցին** և ուրիշներ: Շարունակելով անցյալի փիլիսոփայության ավանդույթները, նրանք հայ փիլիսոփայական միտքը հարստացրին նոր շրջանի մտածողությամբ՝ գիտական ճանաչողության, մարդու ազատության և իրավունքների, հասարակական օրենքի բնույթի, ազգային արժեքների և ազատագրական պայքարի մասին: XVIII դ. երկրորդ կեսում ձևավորված հայ լուսավորական փիլիսոփայությունը հիմնականում կենտրոնացավ **հասարակագիտական խնդիրների** և **ազգային-ազատագրական գաղափարախոսության** ձևավորման վրա: Ազգային-ազատագրական

Ս.Հովհան Որոտնեցին նշում է, որ Աստծու գոյությունը կարելի է հիմնավորել բանականության միջոցով՝ «հետևանքներից դեպի պատճառը ապացույցների միջոցով»:

Շարունակելով այս միտքը, Ս. Գրիգոր Տաթևացին նկատում է, որ քրիստոնեական բոլոր դոգմանները չէ, որ կարելի է հիմնավորել բանականության միջոցով ոչ թե այն պատճառով, որ դրանք հակաբանական են, այլ որ վերբանական են:

Ելնելով տարբեր արժեքային համակարգերից՝ այս երկու ուղղությունների ներկայացուցիչները փորձում էին գտնել ազգի գոյատևման, պահպանման և պետականության վերականգնման միջոցներն ու ճանապարհները:

պայքարի տեսական հիմնավորումը դարձավ լուսավորական փիլիսոփայության առանցքային խնդիրը: Այս կապակցությամբ հսկայական աշխատանք կատարեցին Հնդկաստանի **Մադրաս** քաղաքում ստեղծված ազատագրական խմբակի անդամները՝ **Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը** և ուրիշներ: Պարզաբանելով «բնական իրավունքի» տեսությունը, նրանք գտնում էին, որ պետք է պայքարել օտար բռնակալական, անօրինական իշխանությունների դեմ, հաստատելով սեփական իշխանություն, ստեղծելով ազգային պետություն: Այդ առումով նշանակալից էին **«Նոր տետրակ, որ կոչի յորդորակ», «Տետրակ, որ կոչի նշավակ», «Որոգայթ փառաց»** երկասիրությունները, որոնք հայ սոցիալ-փիլիսոփայական և քաղաքական գրականության լավագույն նմուշներից են:

XIX դ. ձևավորված **աշխարհիկ-լուսավորական** ուղղության ներկայացուցիչները՝ **Մ. Նալբանդյանը** և մյուսներն ազգային խնդիրների լուծման կարևոր ճանապարհը տեսնում էին լուսավորության տարածման մեջ: Իսկ **կրոնական** ուղղության ներկայացուցիչները՝ Խ. Աշըգյան, Պ. Էմանուելյան, Հ. Չամուռճյան, հետևելով անցյալի կրոնափիլիսոփայական ավանդույթներին, կարևորում էին կրոնի և եկեղեցու դերը հայ ազգի մշակութային կյանքի պահպանման, նրա գոյատևման գործում:

Ելնելով տարբեր արժեքային համակարգերից՝ այս երկու ուղղությունների ներկայացուցիչները փորձում էին գտնել ազգի գոյատևման, պահպանման և պետականության վերականգնման միջոց-

ներն ու ճանապարհները: Նրանք կարևորում էին փիլիսոփայության նշանակությունը հոգևոր զարգացման գործում, քննադատում մտահայեցողական, ազգային կյանքից կտրված փիլիսոփայությունը:

Ազգային կարող է կոչվել այն փիլիսոփայությունը, որն «ուղղակի աղբերանում է (աղբյուր է դառնում) այն ազգի կյանքին և պատմությանը, ինչ ազգի ինքը պատկանում է - այդպիսի դիպվածում փիլիսոփան կանգնում է յուր սեփական հողի վրա»:

Միքայել Նալբանդյան

Հարցեր

1. Ո՞վ է Պարույր Հայկազնը:
2. Ի՞նչ ուղղություններ ձևավորվեցին հայ փիլիսոփայության մեջ V դարում:
3. Ովքե՞ր են համարվում քրիստոնեական ջատագովական ուղղության հիմնադիրները:
4. Ո՞րն է հայ քրիստոնեական ջատագովության առանձնահատկությունը:
5. Հայ փիլիսոփաներից ո՞վ է նեոպլատոնական ուղղության ամենաականավոր ներկայացուցիչը: Ի՞նչ աշխատություններ է գրել նա:
6. Ո՞ւմ անվան հետ է կապված հայ միջնադարյան փիլիսոփայության մեջ բնափիլիսոփայական ուղղության կայացումը:
7. Ի՞նչ հարցերի վրա է կենտրոնանում հայ փիլիսոփայական միտքը X-XV դարերում:
8. XIII-XIV դդ. հայ փիլիսոփայական դպրոցներից ո՞րն էր ամենանշանավորը: Ովքե՞ր էին նրա ներկայացուցիչները: Ի՞նչ հարցեր էին քննարկում նրանք:
9. Ի՞նչ իրադարձությունների հետ է կապված XVII դ. հայ կրոնափիլիսոփայական մտքի աշխուժացումը:
10. Ի՞նչը դարձավ XVIII դ. երկրորդ կեսի հայ լուսավորական փիլիսոփայության առանցքային խնդիրը:

Փոքր ենթախմբերում քննարկել հետևյալ հարցերը.

1. Ձեր կարծիքով՝ հոգևոր-ազգային մտքի կայացման համար ի՞նչ նշանակություն ունեցավ ազգային-փիլիսոփայական դպրոցի ձևավորումը:
2. Հիմնավորեք XVIII և XIX դարերի հայ փիլիսոփայական մտքի դերը ազգային ազատագրական պայքարի զարգացման գործում:

12. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայ եկեղեցական գրականության սկզբնավորումը

Եկեղեցական մատենագրությունը միջնադարի հայ գրականության կարևորագույն բաղկացուցիչն է: Նրա սկզբնավորումն էապես պայմանավորված է թարգմանչական գրականությամբ: Հայ եկեղեցական մատենագրությունը ծնունդ է առել Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից անմիջապես հետո: Աստվածաշնչի թարգմանությունն ու հայացումը հզոր խթան հանդիսացան գիտամշակութային տարբեր ուղղությունների առաջացման և զարգացման համար: Հայոց գրերի գյուտը ամենից առաջ պայմանավորված էր Աստվածաշունչը հայերեն թարգմանելու և այն ժողովրդին մայրենի լեզվով ուսուցանելու կենսական անհրաժեշտությամբ:

Մեկնողական գրականություն

Միջնադարում լայն տարածում էր գտել սուրբգրային **մեկնողական** գրականությունը: Այդ գրականության նպատակն էր բացատրել Աստվածաշնչի բովանդակությունը՝ համաձայն քրիստոնեական վարդապետության և Հայոց եկեղեցու դավանանքի: **Ս. Մեսրոպ Մաշտոցը, Ս. Սահակ Պարթևը** և նրանց աշակերտները (հայտնի են «թարգմանչաց դաս» անունով), ինչպես հաղորդում է Կորյուն վարդապետը, Սուրբ Գրքի բազում մեկնություններ թարգմանեցին: Դրանցից են Ս. Բարսեղ Կեսարացու, Ս. Հովհան Ոսկեբերանի, Ս. Եփրեմ Ասորու և այլոց աստվածաշնչյան տարբեր գրքերի

«Հայացած» Աստվածաշնչի վեհ գաղափարներով են ներթափանցված քրիստոնեական աստվածաբանությունը, միջնադարյան հայ գրականությունը, արվեստը, գիտությունը:



Այդ գրականության նպատակն էր բացատրել Աստվածաշնչի բովանդակությունը՝ համաձայն քրիստոնեական վարդապետության և Հայոց եկեղեցու դավանանքի:

Եթե մեկնությունները, որպես ուսումնասիրություններ, շարադրվում, գրառվում և ավելի շատ օգտագործվում էին ուսումնագիտական կենտրոններում, ապա քարոզները կամ ճառերը, իբրև կենդանի խոսք, հնչեցվում էին եկեղեցու բեմերից:

մեկնությունները: Սրանք էապես նպաստել են հայ ինքնուրույն մեկնողական գրականության սկզբնավորմանն ու զարգացմանը: Միջնադարում հայ հեղինակները շարադրում էին Աստվածաշնչի բարձրարժեք մեկնություններ: Լայն ճանաչում են վայելում հատկապես Ս. Եղիշեի, Ստեփանոս Սյունեցու, Ս. Ներսես Շնորհալու, Վարդան Արևելցու, Եսայի Նչեցու, Ս. Գրիգոր Տաթևացու և այլ մեծանուն հայ հեղինակների աշխատությունները: Սրանցից շատերը, իբրև դասագիրք, կիրառվել են միջնադարի ուսումնագիտական կենտրոններում, վանական դպրոցներում, վարդապետարաններում:

Քարոզներ, ճառեր

Մեկնողական երկերի հետ սերտորեն աղերսված են **ճառերը** կամ **քարոզները**: Սրանց նպատակը նմանապես եղել է Աստվածաշնչի և քրիստոնեական սկզբունքների բացատրությունը: Սակայն եթե մեկնությունները, որպես ուսումնասիրություններ, շարադրվում, գրառվում և ավելի շատ օգտագործվում էին ուսումնագիտական կենտրոններում, ապա քարոզները կամ ճառերը, իբրև կենդանի խոսք, հնչեցվում էին եկեղեցու բեմերից: Մեծանուն եկեղեցականների ճառերը կամ քարոզները, որոնք ասվել էին տարբեր առիթներով և գրի առնվել իրենց իսկ՝ հեղինակների, ավելի հաճախ սղագիրների կողմից, արտագրվելով ու բազմացվելով դառնում էին հավատացյալ ժողովրդի սեփականությունը: Ճառախոսական երկերն ու քարոզներն իրենց բուռն զարգացումն են ապրում I-IV դարերում, երբ հրամայական անհրաժեշտություն կար (հիմնականում ոչ գրաճանաչ ժողովրդին) բացատրելու Ս. Գիրքը, քրիստոնեական հայտնության և կեցության բոլոր կողմերը: Այս նպատակով թարգմանված տիեզերական

եկեղեցու հայրերի ու վարդապետների ճառերը կարևոր խթան են դառնում, որպեսզի հայ իրականության մեջ գրվեն համաբնույթ ճառեր (որպիսիք են Ս. Գրիգոր Լուսավորչի անվամբ հայտնի «Յաճախապատում», Ս. Հովհան Մանդակունու, Ս. Գրիգոր Տաթևացու և այլոց ճառերը):

Ջատագովական գրականություն

Հայ ինքնուրույն **ջատագովական** աշխատությունների ստեղծման գործում մեծ է եղել թարգմանական երկերի դերը: Ելնելով քարոզչական և առաքելության իրականացման անհրաժեշտությունից՝ թարգմանվում և գրվում էին բազմաթիվ ջատագովական երկեր, որոնք մեծապես նպաստել են քրիստոնեական հավատի համար Հայոց եկեղեցու մղած պայքարին: Ջատագովական այս երկերում ցույց է տրվում Հայոց եկեղեցու և ընդհանրապես քրիստոնեական դավանանքի ճշմարտացիությունը:

Ջատագովական գրականության դասական և լավագույն օրինակ է **Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»** («Աղանդների հերքումը») աշխատությունը: Ժամանակի պարսկական պետության՝ հայ ժողովրդին կրոնափոխելու պարտադրանքին ի պատասխան Եզնիկ Կողբացին քննադատական ու վերլուծական, գիտական իր սուր մտքով վեր հանեց պարսից զրադաշտական կրոնի սնոտի, մտացածին, կեղծ ու հակասական գաղափարախոսությունը, սարկազմի ենթարկելով այդ կրոնի առասպելական բովանդակությունը: Նա նման քննադատական վերաբերմունք է ցուցաբերում նաև հունական փիլիսոփայական տարբեր ուղղություններին և աղանդավորական շարժումներին, որոնց հետևորդներն առաջ էին քաշում անհիմն, երբեմն տարբեր փիլիսոփայական ուղղությունների ու անձնական

Ջատագով նշանակում է որևէ գաղափարի, որևէ մեկի կամ մի բանի համոզված պաշտպան, կողմնակից: Ջատագովական գրականության նպատակն էր պարզաբանել, հաստատել քրիստոնեությունը և Հայոց եկեղեցին պաշտպանել ոչ քրիստոնեական տարաբնույթ գաղափարական հարձակումներից, ինչպես նաև ցույց տալ քրիստոնեության ճշմարտացիությունն ու առավելությունները:

Ելնելով եկեղեցաքաղաքական իրավիճակից, Հայ Առաքելական եկեղեցու ինքնահաստատման անհրաժեշտությունից՝ թարգմանվում և գրվում էին բազմաթիվ ջատագովական երկեր, որոնք մեծապես նպաստել են քրիստոնեական հավատի համար Հայոց եկեղեցու մղած պայքարին:

Ձատագովական գրականության սկզբնավորումն ու զարգացումը հայ իրականության մեջ աստվածաբանական ու փիլիսոփայական մտքի մի նոր նվաճում էր:

Հակաճառական երկերի նպատակն էր Հայոց եկեղեցին և հայ ազգը զերծ պահել Քաղկեդոնի ժողովից (451 թ.) հետո Ընդհանրական եկեղեցու ճշմարիտ, առաքյալների հիմնած դավանանքից հեռացած ու շեղված տարբեր ու տարաբնույթ ինչպես քաղկեդոնական, այնպես էլ հերձվածողական հոսանքների ավերիչ ազդեցությունից, աղանդավորական օտարամուտ ապազգային գաղափարախոսությունից:

պատկերացումների վրա հիմնված տեսակետներ և աղճատում քրիստոնեությունը: Ձատագովական գրականության սկզբնավորումն ու զարգացումը հայ իրականության մեջ աստվածաբանական ու փիլիսոփայական մտքի մի նոր նվաճում էր:

Հակաճառական գրականություն

Հակաճառական երկերի նպատակն էր Հայոց եկեղեցին և հայ ազգը զերծ պահել Ընդհանրական եկեղեցու ճշմարիտ, առաքյալների հիմնած դավանանքից հեռացած ու շեղված տարբեր ու տարաբնույթ ինչպես քաղկեդոնական, այնպես էլ հերձվածողական հոսանքների ավերիչ ազդեցությունից, աղանդավորական գաղափարախոսությունից:

Հակաճառական գրականությունը ևս սկիզբ առավ V դարի հայ թարգմանիչների ջանքերով, որոնք հայերեն թարգմանեցին եկեղեցու նշանավոր հոգևոր գործիչների բազմաթիվ աշխատություններ: Հակաճառական երկերում լուսաբանվում ու վավերացվում են Հայոց եկեղեցու դավանանքի, քրիստոնեական աշխարհընկալման, ծեսերի ու արարողությունների ուղղադավան, աստվածաշնչային հիմքերն ու հիմնավորվածությունը:

Հայ եկեղեցու ազգային ինքնության հաստատման համար տարվող այս պայքարը, աստվածաբանական լինելու հետ նաև քաղաքական էր, ուներ ազգապահպան բնույթ և ուղղվածություն: Հակաճառական գրականության բազմաթիվ նմուշներից են **Կոմիտաս** կաթողիկոսի (VII դ.) կարգադրությամբ կազմված «**Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ**» և **Վարդան Այգեկցու** (XIII դ.) գրած **«Գիրք հաստատութեան և արմատ հավատոյ»** երկերը:

Սրբախոսություն

Ժամանակի և իրավիճակի թելադրանքով ջատագովական և հակաճառական ուղղություններին զուգընթաց թարգմանվում և շրջանառության մեջ էին դրվում քրիստոնեության համար պայքարած և նահատակված սրբերի պատմությունները: Սրբերի անձնուրաց կյանքը, Քրիստոսի համար նրանց զոհաբերվելու պատրաստակամությունն ու նահատակությունը լավագույն միջոցներ էին քրիստոնեական առաքինությունների ոգով դաստիարակելու ժողովրդին: Սրբերի կյանքը պատկերող այդ պատմությունները հիմք դարձան միջնադարում լայնորեն տարածված գրական մի ժանրի՝ **սրբախոսության**: Ըստ բովանդակության՝ այն բաժանվում է **երկու ենթաբաժինների**: Այն պատմությունը, որի մեջ հավատի ու գործունեության տեսակետից մեծ անհատականություն հանդիսացող անձնավորությունը՝ քրիստոնյան, մեռնում է իր բնական մահով և սրբացվում, կոչվում է **վարք:** Իսկ այն պատմությունը, ուր քրիստոնյան՝ խոստովանելով ու վկայելով իր հավատը, նահատակվում է հակառակորդների կամ թշնամիների կողմից, կոչվում է **վկայաբանություն**: Բովանդակության պարզության շնորհիվ դրանք մատչելի էին շատերին և ընթերցվում էին սրբերի ու նահատակների տոներին նվիրված եկեղեցական արարողությունների ժամանակ: Հետագայում սրբախոսական այդ պատմությունները հավաքվում ու մեկտեղվում են առանձին ժողովածուների մեջ:

Հայ վարքագրության հնագույն հուշարձաններից է **Ագաթանգեղոսի** պատմության մաս կազմող **«Ս. Գրիգորի վարքը»**, ուր պատմվում է Ս. Գրիգոր Լուսավորչի կյանքի, ավետարանական գործունեության՝ Հայաստանում քրիստոնեությունն իբրև պետական կրոն հաստատելու ուղղությամբ գործա-

Ինքնահաստատման համար տարվող այս պայքարը աստվածաբանական լինելու հետ նաև քաղաքական էր, ուներ ազգապահպան բնույթ և ուղղվածություն:

Վարքերում ու վկայաբանություններում կարևոր տեղ են գրավում խրատական զրույցները, որոնց մեջ կան իմաստուն հորդորներ հեզության, խոնարհության ու քրիստոնեական տարբեր առաքինությունների մասին: Վարքերում դրվատանքով է խոսվում ճգնավորների, անապատականների հոգևոր սխրանքների, կամային բարձր հատկանիշների մասին:

դրված գերմարդկային ճիգերի մասին: Սրբախոսական գրականության լավագույն ավանդներով է շարադրված Կորյուն վարդապետի «Վարք Մաշտոցի» երկը, ուր պանծացված է Սուրբ Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործը: Այն, ի դեպ, համարվում է հայերենով շարադրված առաջին ինքնուրույն երկը (443թ.): Հետագայում թարգմանական և ինքնուրույն սրբախոսական երկերը խմբավորվում են առանձին ժողովածուների՝ Հայսմավուրքների մեջ: Հայ իրականության մեջ այդ ուղղությամբ առաջին քայլերն են կատարում **Սողոմոն Մաքենացին** (VIII դ.), Ս. Ատոմավանքի վանահայր **Գագիկ վարդապետը** (X դ.): Սրբախոսական պատմությունների հավաքման և նախորդ ժողովածուների համալրման մեջ հատկապես մեծ է եղել **Գրիգոր Բ Վկայասեր** (1025-1105) կաթողիկոսի, ինչպես նաև Հայսմավուրքի վերջին խմբագրող **Գրիգոր Խլաթեցու** (XIV-XV դդ.) բերած նպաստը:

Ծիսական երկեր

Եթե ջատագովական, հակաճառական և սրբախոսական երկերը նպատակ ունեն քրիստոնեական բարոյականության և Ազգային եկեղեցու դավանաբանությամբ դաստիարակելու հավատացյալ հայորդու միտքը, ապա ծիսական երկերը՝ **Պատարագամատույցը, Ժամագիրքը, Մաշտոցը, Տոնացույցը** և այլ մատյաններ, նպատակ ունեն օրինակարգել Աստծու նկատմամբ մարդու կենդանի հարաբերությունն ու պաշտամունքը: Այդ մատյանները բովանդակում են քրիստոնեական եկեղեցու՝ աստվածային հայտնությունից սնվող պաշտամունքային դարավոր փորձառությունը: Ժամանակի ընթացքում անհրաժեշտություն է առաջանում բացատրել

այդ մատյանների բովանդակությունը: Այդ գործում զգալի դերակատարություն են ունեցել այնպիսի երևելի հեղինակներ, ինչպիսիք են **Ստեփանոս Սյունեցին, Ս. Ներսես Լամբրոնացին, Վարդան Արևելցին, Ս. Հովհան Որոտնեցին** և ուրիշներ:

Ծիսական մատենագրության անքակտելի մասն են կազմում նաև **հոգևոր երգերը**, օրհներգությունները, որոնք քրիստոնեական եկեղեցում օգտագործվել են վաղ միջնադարից և նվիրված էին եկեղեցական մեծ տոներին, ապաշխարությանը և սրբերին: Այդ երգերն սկզբնական շրջանում դեռ չէին կիրառվում ժամապաշտության պահին, սակայն հետագայում դրանք հետզհետե ներմուծվեցին ժամերգության կարգի մեջ: Եվ քանի որ այդ երգերն ստեղծվում էին սաղմոսների նմանողությամբ և որպես **հարասություն** (պարզաբանում) կցվում էին սաղմոսներին, անվանվում էին **կցուրդներ:** Հաշվի առնելով դրանց հոգևոր նշանակությունը, Ս. Մեսրոպ Մաշտոցն ու Ս. Սահակ Պարթևը իրենք ևս ստեղծում են այդպիսի երգեր և ներմուծում ժամերգության մեջ: Ավանդության համաձայն՝ Ավագ շաբաթվա (Մեծ պահքի վերջին շաբաթը, որ նախորդում է Ս. Զատկին) «**Կանոնները**» վերագրվում են Ս. Սահակ Պարթևին, «Ապաշխարության կարգը»՝ Ս. Մեսրոպ Մաշտոցին, **Ճրագալույցի «Ուրախացիր»-ը,** Ս. Ծննդյան, Տեառնընդառաջի կարգը, Ս. Հարության հարցերը, վարդավառի և Վերափոխման կարգերն ու Մեծացուսցեները՝ Ս. Մովսես Խորենացուն:

Պատարագամատույցը, ժամագիրքը, Մաշտոցը, Տոնացույցը պարունակում են արարողական հրահանգներ, սուրբգրային պատշաճ ընթերցումներ, նպատակ ունեն օրինակարգել Աստծու նկատմամբ մարդու կենդանի հարաբերությունն ու պաշտամունքը:



Հայ մատենագրության մեկնողական, ջատագովական, հակաճառական, սրբախոսական հարուստ գրականությունը գտնվում է մեծ մասամբ չուսումնասիրված, ձեռագիր վիճակում Երևանի Մաշտոցի անվան մատենադարանում, աշխարհի տարբեր ձեռագրատներում, անհատ անձանց մոտ:

Բարսեղ Ճոնի և Ստեփանոս Սյունեցու ջանքերով այդ երգերը ընտրվում և, կանոնացվելով, զետեղվում են առանձին ժողովածուների մեջ, որոնք հետագայում ստանում են Շարակնոց անունը: Շարակնոցները ևս լայնորեն կիրառվելով արարողակարգի մեջ՝ դառնում են ծիսական մատենագրության կարևորագույն բաղկացուցիչներից:

Հարցեր և առաջադրանքներ

1. *Ինչպե՞ս է ծնունդ առել հայ եկեղեցական մատենագրությունը:*
2. *Տվե՛ք մեկնողական գրականության բնութագիրը:*
3. *Ի՞նչ են ճառերը և քարոզները և ի՞նչ նպատակի են ծառայել (I-IV դդ.):*
4. *Ի՞նչ է նշանակում ջատագովական գրականություն: Բերե՛լ օրինակներ:*
5. *Ե՞րբ է սկիզբ առել հակաճառական գրականությունը: Ի՞նչ նշանակություն է ունեցել այն:*
6. *Քանի՞ ենթաբաժին ունի սրբախոսությունը: Ո՞րն է կոչվել վարք և ո՞րը՝ վկայաբանություն:*
7. *Ովքե՞ր են մշակել շարականները:*

Քննարկենք

1.Կատարե՛ք քառաբաժան վարժություն հետևյալ հարցերի օգնությամբ.

ա) Ի՞նչ տեղեկություն ստացաք նոր տեքստը կարդալով:

բ) Գրեք դասանյութի վերաբերյալ ծագած մեկ հարց:

13. ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ V-XX ԴԱՐԵՐՈՒՄ

Անցյալի, այսինքն՝ մարդկային հասարակության զարգացման մասին մեզ տեղեկություններ ու փաստեր հաղորդում է պատմությունը: Հետևաբար, պատմությունը մարդկային հասարակության անցյալն ուսումնասիրող գիտություն է: Պատմության ուսումնասիրության գործում առաջնահերթ նշանակություն ունեն պատմական գիտելիքներն ամփոփող պատմագրական երկասիրությունները՝ վարքեր, տարեգրություններ, հիշատակարաններ, օրագրություններ, պատմություններ և այլն:

Պատմական գիտելիքների զարգացման ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունը կոչվում է պատմագրություն: Միջնադարյան Հայաստանում պատմություն գրող անձին, պատմության հեղինակին անվանում էին պատմագիր, պատմիչ:

Հայ պատմագրության «Ոսկեդարը»

Հայաստանում պատմագրության ծաղկումը տեղի է ունեցել Հայոց գրերի գյուտից հետո: V դարի հայ պատմագրական մտքի զարգացումը բացառիկ երևույթ է ոչ միայն ազգային մշակույթի, այլև համաշխարհային հին և միջնադարյան պատմագրության համակարգում: V դարը, որ դարձավ ինչպես հայ մշակույթի, այնպես էլ հայ պատմագրության Ոսկեդարը, միաժամանակ հունա-հռոմեական պատմագրության անկման ժամանակաշրջանն էր: **Փաստորեն հայ պատմագրությունն այդ շրջանում**

V դարի հայ պատմագրական մտքի զարգացումը բացառիկ երևույթ է ոչ միայն ազգային մշակույթի, այլև համաշխարհային հին և միջնադարյան պատմագրության համակարգում:

Շնորհիվ միասնության ու հայրենասիրության հնարավոր է եղել դիմագրավել թշնամիներին և պահպանել պետական անկախությունը:

դարձավ համաշխարհային պատմագրական մտքի կիզակետը: Այդ ժամանակ են ստեղծագործել Կորյունը, Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Ս. Եղիշեն, Ս. Մովսես Խորենացին և Ղազար Փարպեցին: Սա մշակութային հուժկու պայթյուն էր, որը նշանավորվեց անզուգական պատմագրական արդյունքներով:

V դարի հայ պատմագիրներն իրենց առջև խնդիր էին դրել ժամանակակիցներին ու հետագա սերունդներին դաստիարակել ժողովրդի անցյալի ու ներկայի հերոսական դրվագների փառաբանմամբ: Անցյալում էլ են եղել դեպքեր, երբ վտանգվել է հայրենիքի անկախությունն ու ազատությունը, և միայն շնորհիվ **միասնության** ու **հայրենասիրության** հնարավոր է եղել դիմագրավել թշնամիներին և պահպանել պետական անկախությունը: Անհրաժեշտ էր վեր հանել ականավոր անհատների, իմաստուն առաջնորդների և հայրենասեր անձանց անդուլ ջանքերը հայրենիքի պաշտպանության ու նրա անկախության պահպանման համար մղված պայքարում, դատապարտել անմիաբանությունն ու դավաճանությունը, դավանափոխությունն ու ազգուրացությունը: Օտար տիրապետությունների պայմաններում պատմագրության առաջնահերթ խնդիրն է դառնում բարձրացնել ժողովրդի ինքնագիտակցությունը, ազատատենչ ոգին և դիմադրական ուժը: Սերունդներին դաստիարակել հայրենասիրության գաղափարներով, նպաստել ազգապահպանմանը, վառ պահել պետականության վերականգնման գերխնդիրը:

Ահա այս գաղափարներն են, որ ծնունդ են տվել V և հետագա դարերի հայ պատմագրությանը: Հայ պատմագրությունը հենց սկզբից զարգանում է

ժանրային տարբեր ուղղություններով: Մենք այստեղ գործ ունենք ինչպես **վարքագրությունների**, առանձին դեպքերի, դեմքերի ու իրադարձությունների նվիրված պատմագրական երկերի, այնպես էլ նեղ կամ առավել լայն ժամանակաշրջաններ ընդգրկող իրադարձությունների նկարագրությունների հետ:

Հայագիր առաջին պատմագրական երկը Կորյունի «**Վարք Մաշտոցի**» աշխատությունն է: Այն նվիրված է կոնկրետ պատմական մի իրադարձության և կոնկրետ պատմական մի անձի՝ Հայոց գրերի գյուտին և Ս. Մեսրոպ Մաշտոցին: Նույն ժանրին է պատկանում նաև «**Շուշանիկի վկայաբանությունը**» անանուն հեղինակի ստեղծագործությունը: Ագաթանգեղոսի «**Պատմությունը**» նվիրված է Հայոց դարձի պատմության և հատկապես Ս.Գրիգոր Լուսավորչի գործունեությանը: Փավստոս Բուզանդի «**Հայոց պատմությունը**» քաղաքական իրադարձություններով հարուստ IV դարի 30-80-ական թվականների պատմությունն է, չափազանց ուշագրավ ու արժեքավոր մի երկ ոչ միայն Հայոց, այլև տարածաշրջանի երկրների պատմության ուսումնասիրության համար: V դարի ազատագրական պատերազմները լուսաբանվել են Ս. Եղիշեի և Ղազար Փարպեցու ստեղծագործություններում:

Անշուշտ, V դարի հայ պատմագրության մեծագույն դեմքը Ս. Մովսես Խորենացին է (մոտ 410-490), ով վաստակել է «**Պատմահայր**» պատվանունը: Ս. Մովսես Խորենացին առաջինն իրագործեց հայ ժողովրդի ամբողջական պատմությունը շարադրելու գաղափարը: Նա իրականացրել է այդ վիթխարի ծրագիրը և շարադրել հայ ժողովրդի պատմությունը՝ հին աշխարհի հայտնի

Օտար տիրապետությունների պայմաններում պատմագրության առաջնահերթ խնդիրն է դառնում բարձրացնել ժողովրդի ինքնագիտակցությունը, ազատատենչ ոգին և դիմադրական ուժը:

Պատմագրությունը սերունդներին դաստիարակել է հայրենասիրության գաղափարներով, նպաստել ազգապահպանմանը, վառ պահել պետականության վերականգնման գերխնդիրը:

Ս. Մովսես Խորենացին առաջինն իրագործեց հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ սկզբից մինչև իր օրերը շարադրելու գաղափարը:

երկրների պատմության հետ շաղկապված: Խորենացու «Հայոց պատմությունը» բաղկացած է երեք գրքերից, որոնցից առաջինը նվիրված է հայ ժողովրդի ծննդաբանությանը: Ընդ որում, հեղինակը հայերի ծագումը կապում է Աստվածաշնչի հետ: Հայկ Նահապետը Նոյի ժառանգներից է, որով և որոշվում է հայերի տեղը Սուրբ Գրքի տոհմաբանական ծառի վրա: Երկրորդ գրքում խոսում է Արշակունյաց թագավորների և առանձին նախարարական տների ծագման ու գործունեության մասին: Արժեքավոր է Հայաստանում քրիստոնեության տարածման պատմությանը նվիրված հատվածը, ուր նկարագրվում է Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների գործունեությունը: Երրորդ գիրքը նվիրված է IV դարի և V դարի առաջին կեսի իրադարձություններին:

Խորենացու «Հայոց պատմությունը» եզակի և ստուգապատում սկզբնաղբյուր է: Նրա կուռ կառուցվածքը, հստակ ու ճշգրիտ ժամանակագրությունը («Առանց ժամանակագրության պատմությունն ստույգ չէ»), պատմության պարբերացման սկզբունքը, շեշտված հայրենասիրական ուղղվածությունն այն դարձրել են **անփոխարինելի ազգային արժեք**: Շուրջ 1400 տարի (մինչև XIX դարի կեսը) հայկական դպրոցներում այն ծառայել է իբրև **պատմության դասագիրք**, իսկ հետագա բոլոր հայ պատմիչների համար եղել պատմությունը շարադրելու չափանիշ: Խորենացու պատմության հաջողությունը բացատրվում է նրանով, որ նրա հեղինակը տվել է հարազատ ժողովրդի հպարտ բնութագիրը, մատնացույց արել նրա տեղն ու դերը համաշխարհային պատմության մեջ:

Պատմագրությունը VII-XVII դարերում

VI դարից մեզ որևէ պատմագրական երկ չի հասել: Եվ միայն VII-VIII դարերում է, որ ստեղծագործել են **Սեբեոս** եպիսկոպոսն ու **Ղևոնդ** պատմիչը: Սեբեոսը շարունակում է **Ղազար Փարպեցուն** և մանրամասն կանգ առնում արաբական արշավանքների նկարագրության վրա: Իսկ Ղևոնդն անդրադառնում է արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական կռիվների մանրամասներին:

Հայոց ընդհանրական պատմությունը շարադրելու մի հաջողված փորձ է **Հովհաննես Դրասխանակերտցու** (860-929) «Հայոց պատմությունը»: Կաթողիկոս պատմագիրը վառ հայրենասիրական շնչով է նկարագրել Բագրատունյաց թագավորության հռչակումը: Նա համոզիչ արտահայտիչն է կենտրոնացված ուժեղ պետականության:

Տարբեր ժամանակաշրջաններում հանդես են գալիս նաև տեղական ավատատիրական տների կամ աշխարհների պատմիչները, ինչպես, օրինակ՝ **Մովսես Կաղանկատվացին** («Աղվանից երկրի պատմություն»), **Թովմա Արծրունին** («Արծրունյաց տան պատմություն»), ավելի ուշ՝ **Ստեփանոս Օրբելյանը** («Սիսական նահանգի պատմությունը») և այլն:

Ժամանակաշրջանը թելադրում է անդրադառնալ նաև Հայաստանի հարևան երկրների պատմությանը: Ահա թե ինչու հանդես են գալիս համաշխարհային պատմությանը նվիրված առանձին պատմագրական երկասիրություններ, ինչպես, օրինակ՝ **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի** (X դարի երկրորդ

Ժողովրդի ու երկրի փրկությունը ներքին բարոյականության մեջ է, երբ հասարակությունը զուրկ է դրանից, որքան էլ որ նա ունենա հզոր պարիսպներով ու աշտարակներով ամրացած շեն քաղաքներ՝ անխուսափելիորեն անկում կապրի:

Բարոյականությունը, սրբությունն ու աստվածապաշտությունը կարող են միավորել հասարակությունը, առողջացնել այն, միասնությամբ ու միաբանությամբ միայն կարելի է դիմակայել աղետներին:

կես XI դարի սկիզբ) և **Վարդան Արևելցու** (XIII դար) «Տիեզերական պատմությունները»:

Տնտեսական հարաբերությունների հետագա զարգացումը, երկրի մասնատվածության գործընթացի խորացումը, նահանգական թագավորությունների առաջացումն իրենց կնիքն են դնում պատմագրական երկերի վրա: Պատմագիրներից շատերը և մասնավորապես **Արիստակես Լաստիվերցին** (XI դար) հստակորեն շեշտել են քաղաքական մասնատվածության բարոյալքող կողմերը՝ երկրի թուլացումն ու զանազան աղանդավորական շարժումների հանդես գալը: Լաստիվերցին ցավով է նշում, որ ժամանակի հայ հասարակության մեջ «հարգի էր արծաթասիրությունը, քան աստվածասիրությունը, մամոնան, քան Քրիստոս»: Ժողովրդի ու երկրի փրկությունը անաղարտ բարոյականության մեջ է: Եթե հասարակությունը զուրկ է դրանից, որքան էլ որ նա ունենա հզոր պարիսպներով ու աշտարակներով ամրացած շեն քաղաքներ՝ անխուսափելիորեն անկում կապրի: **Բարոյականությունը, սրբությունն ու աստվածապաշտությունը կարող են միավորել հասարակությունը, առողջացնել այն, միասնությամբ ու միաբանությամբ միայն կարելի է դիմակայել աղետներին:**

XII դարում հայ պատմագրական միտքը կտրուկ նահանջ է ապրում: Մշակված, կանոնական պատմագրական երկերին փոխարինելու են գալիս ժամանակագրություններն ու տարեգրությունները: Ի տարբերություն նախորդող ժանրերի, սրանց հեղինակները բավարարվել են կարևոր դեպքերի և իրադարձությունների պարզունակ նկարագրությամբ: Այդ հեղինակներից են **Մատթեոս Ուռհայեցին** (XII դար), **Սամուել Անեցին** (XII դար), **Մխիթար Այրիվանեցին** (XIII դար), **Սմբատ Գունդստաբլը** (XIII դար) և այլք: Զուգահեռաբար «Հայոց պատմություն» ժանրը շարունակում են զարգացնել **Մխիթար Անեցին** (XII դար) և **Կիրակոս Գանձակեցին** (XIII դար):

Մխիթար Անեցու «Պատմություն» երկասիրությունն ամբողջությամբ չի պահպանվել, սակայն այն բացառիկ նշանակություն ունի հայ միջնադարյան պատմագրության մեջ: Նա եզակի հեղինակներից է, որ անդրադարձել է պատմության բնորոշմանը (5-րդ գլուխ): Թեև Ս. Մովսես Խորենացին և այլ հեղինակներ ընդգծել են պատմության դաստիարակչական դերը, սակայն Մխիթար Անեցին հատուկ տեսություն է զարգացրել պատմության դերի ու նշանակության մասին: Հեղինակը նախ շեշտում է հասարակության համար պատմության **բարոյադաստիարակչական, բարոյակրթական** դերը: Ըստ նրա, հասարակությունն ու անհատը պետք է դաստիարակվեն պատմությամբ, պատմությունից պետք է վերցնեն կյանքի փորձն ու դասերը: Պատմությունը մարդուն իմաստնացնում է, պատմությունն անպակաս գանձ է մարդկանց համար, նա է բոլորի ճարտարապետը և գիտություն սովորեցնողը, իմաստության առաջնորդը, պատմությունը պետք է սովորել մանուկ հասակից, որպեսզի ճիշտ ուղիով ընթանա անհատի հետագա կյանքն ու զարգացումը: Պատմությունը մտավոր հոգի է, **ով պատմություն չգիտի, նա մտավոր կույր է և ողջ կյանքում կխարխափի մթության մեջ**:

Ըստ Մխիթարի, պատմությունն ունի վեց հիմնական տարր՝ **դեմք** (անձ), **ժամանակ, տեղ** (տարածք), **իր, եղանակ, պատճառ**: Մխիթարը պատմագրից պահանջում է պատմությունը շարադրելուց առաջ մշակել սկզբնաղբյուրները, համեմատել և քննել տեղեկությունները, պարզել դրանց ծագումն ու կապը, ստուգությունն ու արժանահավատությունը, զատորոշել ճշմարտությունն ու առասպելը: Պատմության դերի ու նշանակության իր տեսությամբ Մխիթար Անեցին բացառիկ տեղ է գրավում ոչ միայն հայ միջնադարյան, այլև եվրոպական պատմագրության մեջ:

Պատմությունը մարդուն իմաստնացնում է, պատմությունը անպակաս գանձ է մարդկանց համար, նա է բոլորի ճարտարապետը և գիտություն սովորեցնողը, իմաստության առաջնորդը:

Պատմությունը մտավոր հոգի է, ով պատմություն չգիտի, նա մտավոր կույր է և ողջ կյանքում կխարխափի մթության մեջ:

Միջնադարյան հայ պատմագրության մեջ բացառիկ արժեք են ներկայացնում Գրիգոր պատմիչի (XIII դար) «Պատմութիւն վասն ազգին Նետողաց» և Հեթում պատմիչի (XIII դար) «Պատմութիւն թաթարաց» երկասիրությունները: Այս պատմիչների հաղորդած տեղեկությունները եզակի արժեք ունեն Մերձավոր Արևելքի երկրների և հատկապես մոնղոլական արշավանքների ու տիրապետության պատմության ուսումնասիրության համար:

XIV դարից սկսած պատմագրությունն անկում է ապրում:

Հայ պատմագրության զարթոնքը սկսվում է XVII դարի առաջին կեսին, որի առաջին ներկայացուցիչներից են **Գրիգոր Դարանաղցին** և **Առաքել Դավրիժեցին**: Եթե Դարանաղցին իր «Ժամանակագրության» մեջ հիմնականում անդրադառնում է Արևմտյան Հայաստանում ծավալված իրադարձություններին, ապա Առաքել Դավրիժեցին իր «Պատմության» մեջ կանգ է առնում Արևելյան Հայաստանի ու Պարսկաստանի քաղաքական նշանակալից իրողություններին՝ թուրք-պարսկական պատերազմներին, 1604 թ. հայերի բռնագաղթին, Հայոց եկեղեցու վերանորոգչությանը և այլն:

Պատմագրությունը հետագա դարերում

XVIII դարի սկզբների հայ ազատագրական շարժման պատմության հարցերն իրենց արտացոլումն են գտել **Եսայի Հասան-Ջալալյանի, Աբրահամ Երևանցու, Ստեփանոս Շահումյանի** երկասիրություններում: XVIII դարի սկզբների թուրք-պարսկական պատերազմները և Նադիր շահի գործունեությունը լուսաբանվել են կաթողիկոս-պատմագիր **Աբրահամ Կրետացու** մի շարք աշխատություններ-

րում: XVIII դարի վերջերին հնդկահայ գաղթավայրում (Մադրաս) ձևավորվում է հայ առաջին քաղաքական խմբակը: Իրենց հրատարակություններում՝ «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ», «Որոգայթ փառաց», **Մ. Բաղրամյանն ու Շ. Շահամիրյանն** առաջ են քաշում պատմական գիտության միանգամայն նոր խնդիրներ: Փորձ է կատարվում պատմությունը դարձնել գաղափարական զենք, ազատագրական պայքարը հիմնավորելու միջոց:

Հայ միջնադարյան պատմագրության վերջին և նոր պատմագրության առաջին ներկայացուցիչ է համարվում նշանավոր պատմաբան **Միքայել Չամչյանը** (1738-1823): 1784-1786 թթ. նա Վենետիկում հրատարակել է եռահատոր «Պատմություն Հայոց» աշխատությունը: Նա շարադրել է Հայոց ամբողջական պատմությունը՝ սկզբից մինչև XVIII դարի վերջերը: Մ. Չամչյանն առաջադրում է պատմության ուսումնասիրության անհրաժեշտության մասին նոր հարցադրումներ՝ **«Պատմությունը պետք է ունենա անհատի, մարդու և ժողովրդի վարքին ուղղություն տալու նպատակ»**:

XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին հայ պատմագրությունը ձևավորվում է որպես գիտական համակարգ, արմատավորվում են պատմաքննական ու պատմահամեմատական մեթոդները, օգտագործվում են ազգագրության, հնագիտության, վիմագրագիտության, դրամագիտության և պատմական օժանդակ այլ գիտությունների տվյալները: Այս ժամանակաշրջանում են ստեղծագործել **Մ. Էմինը, Ք. Պատկանյանը, Ղ. Ալիշանը** և **Լեոն**, ովքեր հրապարակ են իջեցնում հայ ժողովրդի ընդհանուր պատմությանը նվիրված իրենց նշանակալից աշխատությունները: Իսկ **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը** (1849-1918) գրում է եռահատոր «Ազգապատում» աշխատությունը, որը

XVIII դարի վերջերին հայ առանձին պատմագիրներ ստեղծում են այլ երկրների պատմությանը նվիրված երկասիրություններ: Ինչպես, օրինակ. Խաչատուր Ջուղայեցին գրում է «Պատմություն պարսից» աշխատությունը, որտեղ շարադրել է Կյուրոս Մեծից մինչև իր օրերն ընկած ժամանակաշրջանի Պարսկաստանի պատմությունը՝ ընդարձակ տեղեկություններ հայտնելով նաև Հայաստանի պատմության վերաբերյալ: Թովմաս Խոջամալյանի (1720-1780) «Պատմություն հնդկաց» աշխատությունն ընդգրկում է XIV դարի սկզբից մինչև 1764 թ. Հնդկաստանի պատմությունը, որտեղ լայն տեղ է հատկացված նաև հնդկահայ համայնքի պատմությանը, մասնավորապես՝ հայերի մասնակցությանը հնդիկ ժողովրդի ազատագրական պայքարին:



Պատմությունը պետք է ունենա անհատի, մարդու և ժողովրդի վարքին ուղղություն տալու նպատակ:

ժողովրդի և եկեղեցու ամբողջական պատմությունը շարադրելու մի հիանալի օրինակ է:

XX դարի հայ պատմագրության ամենաականավոր դեմքը **Նիկողայոս Ադոնցն** է (1871-1942), որի աշխատությունները հայ պատմագրությունը հասցրեցին միջազգային չափանիշների: Նրա «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (1908) մենագրությունը համարվում է համաշխարհային բյուզանդագիտության ու հայագիտության ակնառու նվաճումներից մեկը: Հայ ժողովրդի ամբողջական քննական պատմություն շարադրելու ուղղությամբ զգալի աշխատանք է կատարել **Հակոբ Մանանդյանը** (1875-1952): Հայ պատմիչների ու պատմաբանների ստեղծած ժառանգության հիման վրա Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի աշխատակիցները 1960-1980-ական թթ. հրապարակ իջեցրեցին «Հայ ժողովրդի պատմության ութիատորյակը»:

Հայոց պատմության բազում էջեր դեռևս կարոտ են ուսումնասիրության:

Հարցեր և առաջադրանքներ

1. *Ի՞նչ է պատմագրությունը:*
2. *Ինչո՞վ է պայմանավորված V դարի հայ պատմագրական մտքի բացառիկ դերն ու նշանակությունը:*
3. *Ժանրային ի՞նչ ուղղություններ առաջացան հայ պատմագրության մեջ:*
4. *Ներկայացրե՛ք Մովսես Խորենացու «Հայոց պատմության» նշանակությունը: Ի՞նչ մասերից է այն բաղկացած: Ինչի՞ մասին է խոսվում գրքերից յուրաքանչյուրում:*
5. *Ներկայացրե՛ք VII-X դդ. հայտնի պատմագիրներին:*
6. *Առանձին ավատատիրական տների կամ աշխարհների պատմությունները ներկայացնող ի՞նչ աշխատություններ գիտեք և ո՞ւմ կողմից գրվեցին դրանք IX-XIII դարերում:*
7. *Ինչո՞ւ պատմագրական երկերին XII դարում փոխարինեցին ժամանակագրությունները ու տարեգրությունները: Ինչո՞վ են դրանք տարբերվում միմյանցից: Թվարկեք այդ շրջանի հայտնի տարեգիրների անունները:*
8. *Ներկայացրեք Մխիթար Անեցու տեսակետները «պատմություն» գիտության վերաբերյալ:*
9. *Ո՞ր պատմիչներն են իրենց աշխատություններում տեղեկություններ հաղորդում Մերձավոր Արևելքի երկրների և մոնղոլական արշավանքների մասին: Ո՞րն է այդ աշխատությունների բացառիկ արժեքը:*
10. *Ո՞ր հեղինակների աշխատություններում է արտահայտվել XVIII դ. սկզբի հայ ազատագրական շարժումների պատմությունը:*
11. *Ի՞նչ հարցադրումներ է առաջ քաշում Մ. Չամչյանը:*
12. *Թվարկեք XIX-XX դդ. նշանավոր պատմաբանների անուններ:*

Գործնական աշխատանքներ

ա) Կազմակերպեք քննարկում «Պատմությունը որպես ազգային ինքնագիտակցության կարևոր միջոց» թեմայով:

բ) Լրացրե՛ք աղյուսակը.

Ժամանակշրջանը	Պատմիչներ	Աշխատանքի անվանումը

13. ՀԱՅ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Հայ մշակույթի «Ոսկեդարը» սկզբնավորվել է հայոց այբուբենի գյուտով: Ս. Մեսրոպ Մաշտոցը Եդեսիայում 405 թ. ստեղծեց հայոց գրերը, դասակարգեց հայոց լեզվի հնչյունական համակարգով, կերպաձևեց գրատեսակները:

Գրչության տեսակները և ձևերը

Հայերեն ձեռագրերում գրատեսակները կոչվում են **աղյուսակ գիր** կամ **տախտակագիր** (ԼԻԲԳ), **երկաթագիր** ( ) **բոլորգիր** (**ա բ գ**), **շղագիր** (**ԱԲԳ**):

XVII դարից հանդես է գալիս **նոտրգիր** գրատեսակը (**ՈՒԲԵ**):

Հայոց գրերը մեզ են հասել դրոշմված քարի, մագաղաթի ու թղթի վրա, ձեռագիր մատյանների, արձանագրությունների, վավերագրերի և այլ գրությունների ձևով: Դրանց թիվը հասնում է հարյուր հազարների: Գրչության արվեստը, ամենից առաջ ընդօրինակման արվեստ է, ուստի ձևավորվեց բնագրի ընդօրինակման գրատեսակը և գլխագարդի տառատեսակը: Հունականի նման բնագիրը քիչ տեղ զբաղեցնելու նպատակով սահմանվեց վերջինիս համառոտման հստակ համակարգ: Առաջին հերթին համառոտվեցին տերունական անվանումները հատուկ պատվանշանով (ᔕ):

Այսպես՝

ԱՍ - Աստուած,
ՅՍ - Յիսուս,
ՔՍ - Քրիստոս,
ՍԲ - սուրբ,
ՏՐ - Տէր,

Հայաշունչ մատյանը մտնում է ամեն մի վանք ու եկեղեցի, իշխանի ու գեղջուկի տուն, դառնում նրա կենցաղի մի մասը, վերածվում պաշտամունքի:

Աղյուսակ գիր

ԵՂՄ - Երուսաղեմ և այլն:

Համառոտվում էին նաև դերանունները.

ՍՑ - սոցա,

ՆՑ - նոցա,

ԴՄ - դմա,

«ութիւն» վերջածանցով բառերը.

Գրչութի – Գրչութիւն

վստահութի – վստահութիւն,

ինչպես նաև հաճախակի հանդիպող բառերը.

ԱՄԻ - ամենայնի,

ՎՍՑ - վասն որոյ

քնզ - քանզի:

Այս հիմնական համառոտումներից բացի, կիրառելի համարվեց **կցագրությունների**, ինչպես նաև **փակագրերի** օգտագործումը: Կցագրությունը բնագրում օգտագործվում է, երբ մի քանի բառ ձուլվում են մեկ տառի շուրջ: Բառանջատումը կատարվում է մտովի տրամաբանությամբ: Նույն սկզբունքով կազմվում են փակագրերը, երբ մի տառի վրա ձուլվում են մի քանի տառերի մասեր: Փակագրերը բնագրից անջատ են և դրանց վերծանումը բավական դժվար է.

Պետրոս

Արմէն

Դաւիթ:

XIII դ. այս համառոտագրություններին ավելանում են **գաղափարագրերը**:

Օրինակ՝

լուսին, արև, եկեղեցի

աշխարհ, երկինք, երկիր:

Ձեռագրերում դրանց ձևերն անցնում է հարյուրներից:

Համառոտման այս սկզբունքները հավասարապես կիրառվում են թե՛ ձեռագիր մատյաններում և թե՛ վիմագիր արձանագրություններում:

Վաղ ընդօրինակված մատյաններում կան **առոգանության** նշաններ: Այս նշանների և նրանց օգտագործման մասին տեղեկություններ կան հայ քերականագետներ Ս. **Դավիթ Անհաղթի** (V դ.), **Ստեփանոս Սյունեցու** (VIII դ.) **Վարդան Արևելցու** (XIII դ.) երկերում: Դրանցից են. շեշտը (՛) դրվում է բառի վերջին վանկի վրա, բութը (՝) խոնարհ ձայնով կարդալու համար, պարոյգը (՞) վանկը երկարացնելու համար, թավը (֊) դրվում է տառի վրա այն շեշտված կարդալու համար, ապաթարցը (՚) միահնչյուն երկու տառից մեկի սղման ժամանակ և այլն:

Նորաստեղծ հայոց գրերին Ս. Մեսրոպ Մաշտոցը տվեց նաև **թվային արժեք**: Համարական կարգով հայկական այբուբենը բաժանվեց 4 մասի՝ 1) **Ա–Թ** միավորներ, 2) **Ժ–Ղ** տասնավորներ, 3) **Ճ–Ջ** հարյուրավորներ, 4) **Ռ–Ք** հազարավորներ: Թե՛ վիմագիր արձանագրություններում, թե՛ ձեռագրերում թվային նշանակությամբ տառերը մյուսներից անջատվում են երկու կողմից դրված միջակետներով կամ վերջակետներով. ի Թուին •ՌՄԱ• (1201)–ի հոկտեմբերի • ԻԲ (22):

551 թվականից հայագիր դարձավ նաև հայկական տոմարը: Հայոց Մեծ թվականի առաջին տարին համապատասխանում է Փրկչական 551/552 թթ. հետ: Ուստի միջնադարի մատենագրական երկերում, արձանագրություններում և ձեռագրերում հիշվող հայոց թվականին ավելացնում ենք 551 և ստանում Փրկչական թվականը (այսօրվա տոմարը): Այսպես է սկսվում Թալինի Կաթողիկե եկեղեցու արձանագրությունը **ՄԼԲ** (232+551=783թ.) ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵ[Ա]Ն ՀԱՅՈՑ...



Երկաթագիր



Բոլորգիր

Գրչության արվեստի սկզբնավորումը և զարգացումը

Ս. Մեսրոպ Մաշտոցը Հայաստան բերեց ոչ միայն իր ստեղծած հայոց նշանագրերը, այլև դրանով գրելու արվեստին տիրապետող աշակերտներ:

Գրչության մեջ հմտացած գրիչները Վաղարշապատում սկսում են կատարել ընդօրինակություններ: Ավետարաններ են ընդօրինակում Ս. **Մեսրոպ Մաշտոցն** ու **Ս. Սահակ Պարթևը**: Հայ գրիչները դարերով վստահում էին թարգմանչագիր այս ձեռագրերին կամ դրանցից կատարված ընդօրինակություններին, դրանք համարում էին «ընտիր, կատարեալ և ստոյգ» օրինակ: Բազմանում է գրիչների դասը, ստեղծվում են գրչությամբ զբաղվող կենտրոններ: Հայաշունչ մատյանը մտնում է ամեն մի վանք ու եկեղեցի, իշխանի ու գեղջուկի տուն, դառնում նրա կենցաղի մի մասը, վերածվում պաշտամունքի:

Արդեն մեկ դարից ավելի քրիստոնեությունը պետական կրոն հռչակած Հայաստանը, թեկուզ կիսանկախ, պայքարում էր քրիստոնեության ամրապնդման համար: Նա պահպանում էր ինքնությունը հայերեն ծիսական արարողակարգով, նորաստեղծ դպրոցով և մատենագրությամբ: Հայերեն են խոսում ոչ միայն Աստվածաշունչ մատյանները, այլև նրանց առանձին մասերին նվիրված համաքրիստոնեական եկեղեցական գործիչների մեկնությունները: Այսօր մեր ձեռագիր ժողովածուներում եղած քրիստոնեական եկեղեցու նշանավոր հայրերի ասորերենով ու հունարենով գրված աշխատությունների կատարյալ թարգմանության համար մենք պարտական ենք ոսկեդարյան մեր թարգմանիչներին: Այս թարգմանություններից մի մասի

հունական կամ ասորական բնագիրը չի պահպանվել կամ պահպանվել է հատվածաբար՝ և վերականգնել բնագիրը հնարավոր է հայերենի՝ բնագրին հարազատ թարգմանության օգնությամբ: Սրանց ընդօրինակությունն էլ է կատարյալ, անսխալ և ճշգրիտ:

Գրչության արվեստի զարգացման հետ գրչության խոշոր կենտրոններում, նշանավոր վարդապետարաններին կից գրչատներում կատարվում է մասնագիտական բաժանում: Շատ գրիչներ մասնագիտանում են մագաղաթ կամ թուղթ, ոմանք՝ թանաք և ներկանյութեր պատրաստելու մեջ: Գրիչներից շատերը դառնում են կատարյալ գործեր ստեղծող մանրանկարիչներ:

XI դ. սկսած նոր լեզվաքերականական փոփոխություններն անդրադառնում են և ընդօրինակման որակի վրա:

Ընդօրինակման հիմնական գիր է դառնում համեմատաբար հեշտ գրվող և քիչ տեղ զբաղեցնող բոլորգիրը: Արիստակես գրիչը շտկում է ուղղագրական կանոնները, Գևորգ Սկևռացին՝ կետադրության և տողադարձի կանոնները: Չեռագիր մտան ստորակետը, միջակետն ու վերջակետը: Ժամանակի լեզվամտածողական դրույթներից ելնելով՝ գրչական փոփոխություններ մտցրեց նաև Ս. **Գրիգոր Տաթևացին**:

Հայ գիրը դրոշմվել է նաև քարի վրա, արձանագրությունների ձևով: Գրերի ստեղծման օրից գրերն արձանագրվել են նոր կառուցվող եկեղեցու պատերին, խաչքարերի, ինչպես նաև տապանաքարերի վրա:

Արձանագրությունների գիրը երկաթագիրն է, թեև հանդիպում են բոլորգրով և խառը՝ տարբեր գրատեսակներով գրված գրություններ: Հնագույններից



Մեսրոպ Մաշտոցի ստեղծած աղվանից և վրաց գրերը:

Թվագիր առաջին ձեռագիրը Մլքե թագուհու Ավետարանն է, իսկ հնությամբ երկրորդը Լազարյան Ավետարանն է:



Նոտրգիր



Շղագիր

հայտնի է Երուսաղեմի Ջիթենյաց լեռան V-VI դդ. թվագրվող խճանկար արձանագրությունը և երկու այլ նմանատիպ արձանագրություններ: Մայր հայրենիքում գեղեցիկ երկաթագրով է գրված Թալինի 783 թ. արձանագրությունը, Վաղարշապատի Ս. Հռիփսիմե եկեղեցու Կոմիտաս հայրապետի արձանագրությունը (618-ին թվագրվող) և այլն:

Հայերեն վիմագիր արձանագրություններն իրենց բնույթով բաժանվում են շինարարական, նվիրատվական, տնտեսական վկայագրերի:

Այսպիսով, ինչպես ձեռագիրը, այդպես էլ նոր կառուցված եկեղեցին կամ Աստծո օրհնությամբ ստեղծված ամեն մի խաչքար հաստատում և ամրապնդում էր Հայոց եկեղեցին, ամրապնդում քրիստոնեական հավատը:

Հարցեր

1. Ինչպե՞ս են կոչվում հայերեն ձեռագրերում գրատեսակները:

2. Ի՞նչ նպատակով ստեղծվեց համառոտման համակարգը:

3 Ի՞նչ են իրենից ներկայացնում կցագրությունները, փակագրերը և գաղափարագրերը:

4. Ի՞նչ առոգանության նշաններ են օգտագործվել հայերեն ձեռագրերում և ի՞նչ նպատակով:

5. Բացի Աստվածաշնչից, ի՞նչ գրքեր և երկասիրություններ թարգմանվեցին հայերեն: Ինչո՞վ են արժեքավոր այդ թարգմանությունները:

6. Գրի ո՞ր տեսակներն էին օգտագործվում արձանագրությունների համար:

Առաջադրանքներ

ա) Հայերեն տառերի թվային արժեքներով ներկայացրեք հետևյալ թվերը՝ 2013, 196, 301, 451, 1915:

բ) Փորձեք գրել բոլորգիր և նոտրգիր գրատեսակներով հետևյալ բառերը. Հայրենիք, Հայաստան, Հայ առաքելական եկեղեցի:

Գրերի և գրքի նկատմամբ ակնածանքն ու հարգանքն այնքան մեծ էր, որ առանձնահատուկ նշանակություն էր տրվում դրանց նկարազարդմանը և գեղարվեստական ձևավորմանը:

Հայաստանում բարձր զարգացման հասած արվեստի առկայությանը նախորդել է արվեստի վերաբերյալ տեսական մտքի զարգացումը և արվեստի փիլիսոփայության ձևավորումը:

Այսպես, հայ առանձին մտածողներ՝ Ս. Դավիթ Անհաղթը, ավելի ուշ՝ Ս. Ներսես Շնորհալին, Հովհաննես Երզնկացին փորձել են տալ արվեստի սահմանումը և գեղեցիկի ըմբռնման չափանիշները:

14. ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Գրերի գյուտից հետո Հայաստանում մեծ զարգացում ապրեց մայրենի լեզվով գրականություն ստեղծելու գործը: Կարճ ժամանակամիջոցում թարգմանվեցին և գրվեցին մեծ քանակությամբ գրքեր՝ Աստվածաշունչ, կրոնական և պատմական բովանդակությամբ երկասիրություններ: **Գրերի և գրքի նկատմամբ ակնածանքն ու հարգանքն այնքան մեծ էր, որ առանձնահատուկ նշանակություն էր տրվում դրանց նկարազարդմանը և գեղարվեստական ձևավորմանը:**

Նշանավոր վանքերին կից ստեղծվեցին դպրոցներ ու գրչատներ, որտեղ և զարգանում էր ձեռագրերի ստեղծման և ձևավորման արվեստը:

Վանական դպրոցների սաները դեռևս ուսումնառության շրջանում սովորում էին գեղագրություն, ծանոթանում մագաղաթ, թանաքներ ու ներկեր պատրաստելու հնարքներին:

Ինչպե՞ս էր ստեղծվում ձեռագիրը

Ձեռագրի ստեղծումը բարդ և աշխատատար գործ էր, որի վարպետներն էին գրիչը, մանրանկարիչը և կազմարարը:

Սկզբում պատրաստվում էր մագաղաթը, որի համար օգտագործվում էր հորթի մշակված կաշին: Այնուհետև գրիչն ընդօրինակում էր ձեռագրի բնագիրը: Այդ ընթացքում նա ազատ էր թողնում էջերի նկարազարդման համար նախատեսված հատվածները, որից հետո ծաղկողը (մանրանկարիչ) նկարազարդում էր դրանք: Վերջում գրված ու պատկերազարդված թերթերը կարվում էին 6, 8,10 կամ 12 թերթանի պրակներում, որոնք միացվում էին իրար և կազմվում արհեստավոր կազմարարի կողմից: Կազմելուց առաջ կամ անմիջապես հետո գրվում էր

ձեռագրի գլխավոր հիշատակարանը, որտեղ տեղեկություններ էին հաղորդվում մատյանի ստեղծման տեղի, ժամանակի, գրչի, մանրանկարչի, պատվիրատուի վերաբերյալ, հաճախ հիշատակվում էին ժամանակի քաղաքական և այլ իրադարձություններ:

Ինչո՞վ և ինչպե՞ս էին նկարազարդում միջնադարյան ծաղկողները

Աշխատանքի հիմնական պարագաները գրչատներում պատրաստում էին գրիչներն ու ծաղկողները: Ձեռագրերում պահպանվել են մանրանկարչության համար անհրաժեշտ ներկերի ստացման 100-ից ավելի բաղադրատոմսեր: Այդ գործի համար կիրառվում էին բուսական ու կենդանական ծագում ունեցող բազմաթիվ նյութեր, հանքանյութեր, **որդան կարմիր, ոսկի, արծաթ** և այլն: Նկարիչները հատկապես ավետարանիչներին պատկերելիս նրանց մոտ նկարում էին նաև գրչության ու մանրանկարչության գործիքները, հաճախ կից գրելով դրանց անվանումները:

Հայկական մանրանկարչությունը, սկզբնավորվելով V-VI դարերում որպես ձեռագիր գրքի հարդարանք՝ պատկերազարդում, կարճ ժամանակամիջոցում այնպիսի խոշոր զարգացում ապրեց, որ IX-XI դարերում արդեն հանդես եկավ որպես ինքնուրույն արժեք, կերպարվեստի ինքնուրույն բնագավառ:

Ինչպիսի՞ պատկերներ էին նկարվում ձեռագրերում

Ձեռագրերը բաղկացած են **խորաններից, թեմատիկ նկարներից** և **լուսանցազարդերից**:

Հիմնական թեմատիկան, բնականաբար, կրոնական էր: Բոլոր ձեռագրերը հարդարանքի կառուցվածքով միանման չէին: Պատմագրքերը, զանազան

Ձեռագիր մատյանը կոչում էին «անգնահատելի գանձ», «մարգարիտ», «իմաստության աղբյուր», «հոգու քաղցրություն» և այլն:

Թորոս Ռոսլին

Առանց պատվիրատուների հովանավորության և օժանդակության հնարավոր չէր լինի եվրոպական Վերածնունդը:

Ինչպես հայտնի է, արվեստների զարգացման համար մեծ նշանակություն ունի հովանավորչությունը, աջակցությունը: Միջնադարում հայկական ձեռագրային արվեստի և ընդհանրապես մշակույթի վերելքը պայմանավորված էր ոչ միայն բարենպաստ քաղաքական, տնտեսական պայմաններով, այլև աշխարհիկ և հոգևոր դասի անմիջական հովանավորությամբ:

Վերջիններս հանդես էին գալիս որպես պատվիրատուներ և իրենց աջակցությամբ նպաստում արվեստի, գիտության, կրթության զարգացմանը:



ժողովածուները, շարակնոցները և այլն կամ չէին նկարազարդվում, կամ ունենում էին միայն **լուսանցազարդեր** ու **անվանաթերթեր** (հիմնական վերնագրեր պարունակող էջեր): Իսկ Աստվածաշունչը և Ավետարանները (հաճախ՝ ճաշոց գրքերը) զարդարվում էին **խորաններով, անվանաթերթերով**, ավետարանիչների ու տերունական (Հիսուսի կյանքի դրվագները ներկայացնող) **պատկերներով**:

Միջնադարում գործում էին մշակված պատկերագրական կանոններ, որոնք չէին խոչընդոտում նկարիչներին հանդես բերելու ստեղծագործական որոնումներ և ստեղծելու արվեստի անկրկնելի ու մնայուն արժեքներ:

Հայկական մանրանկարչության առայժմ հայտնի հնագույն նմուշները **989 թ. «Էջմիածնի Ավետարանի»** վերջում կցված երկու թերթերի չորս տերունական մանրանկարներն են, որոնց հնությունը հասնում է **VI դար**:

Հայ մանրանկարչության առավելագույն վերելքի ժամանակաշրջան են համարվում XI-XIII դարերը, երբ մի շարք տաղանդավոր նկարիչներ էին ստեղծագործում թե՛ Մեծ Հայքում և թե՛ Կիլիկիայի հայկական թագավորությունում: Այս շրջանում հայ նկարիչները հանդես են բերում նորարարական մոտեցում պատկերագրության մեջ և ոճի բազմազանության առումով:

Հատկապես հայտնի է **Թորոս Ռոսլինը,** ում արվեստը բնատուր տաղանդի, կատարելության հասած վարպետության, վառ երևակայության և հարուստ հոգևոր ներաշխարհից ծնված ստեղծագործական խիզախում է: Ռոսլինի և կիլիկյան մյուս առաջատար վարպետների աշխատանքները ներկայացնում են միջնադարյան արվեստի զարգացման նոր փուլը, որը մոտենում է եվրոպական վաղ Վերածննդի արվեստին (գեղանկարչական խոսքի

զգացողություն, մարդկային կերպարների պատկերման ճկունություն՝ տարբեր հոգեվիճակների արտահայտմամբ, կատարման նրբություն):

Ինքնատիպ մանրանկարչական դպրոց է ձևավորվել XIV դարի սկզբներին Գլաձորի համալսարանում:

Մանրանկարչության խորհրդաբանությունը

Ինչպես բոլոր արվեստները, մանրանկարչությունը նույնպես ունի իր տեսական բովանդակությունը, **խորհրդաբանությունն** ու **իմաստաբանությունը**: Հորինվածքի, ձևերի և գույների միջոցով դիտողը հաղորդակից է լինում ոչ միայն Աստվածաշնչի բովանդակությանը, այլև այդ բովանդակության տակ քողարկված պատկերի վերին խորհրդին: Փորձենք թափանցել դրանցից մի քանիսի մեջ: Օրինակ, Սուրբ Ննդյան և Խաչելության նկարներում կան այնպիսի մանրամասներ, որոնք հասկանալի են դառնում միայն սուրբգրային պարականոն անվավեր* պատմությունների և դրանց մեկնությունների շնորհիվ: Այսպես՝ Սուրբ Ննդյան պատկերում հաճախ մանկան խանձարուրի տակ ներկայացված է լինում կնոջ գլուխը՝ **«Եվայի գլուխն»** գրությամբ, իսկ Խաչելության պատկերում, խաչի ստորին մասում՝ տղամարդու գլուխ՝ **«Ադամ»** գրությամբ: Այս մանրամասները հաստատվում են հետևյալ ավանդական-աստվածաբանական բացատրությամբ: Այս ավանդության համաձայն՝ Հիսուս Քրիստոս ծնվեց այն վայրում, որտեղ մահացել էր Եվան և խաչվեց Ադամի գերեզմանի վրա՝ դրանով իսկ քավելով թե՛ առաջին կնոջ և թե՛ առաջին մարդու մեղքը: Եթե անեծքը աշխարհ մուտք գործեց առաջին Ադամով, ապա նոր Ադամով՝ Քրիստոսով և Խաչով սրբագրվեց և վերացվեց այդ անեծքը:

Հորինվածքի, ձևերի և գույների միջոցով դիտողը հաղորդակից է լինում ոչ միայն Աստվածաշնչի բովանդակությանը, այլև այդ բովանդակության տակ քողարկված պատկերի վերին խորհրդին:

Թորոս Տարոնացի. Հովհաննու Ավետարանի անվանաթերթը

***Պարականոն անվավեր** – այստեղ՝ Աստվածաշնչի վավերական, կանոնական գրքերից դուրս, ոչ վավերական գրքերն ու պատմությունները:

Կարմիրը նշանակում է հանուն մարդու փրկության Քրիստոսի թափած աստվածային արյունը: Կապույտը ցույց է տալիս հրեշտակների առաքինությունը, դեղինը՝ սրբերի ճգնակեցությունը, սպիտակը՝ նրանց մաքրությունն ու անարատ վարքը, իսկ սևն իր խորհրդավորությամբ՝ աստվածային բնության անմատչելիությունը:

Մանրանկարչության մեջ կարևոր դեր է կատարում նաև **գույնը:** Միջնադարի աստվածաբան հեղինակները փորձում են խորհրդաբանական բացատրություն տալ գույներին՝ դրանք համարելով երկնային խորհուրդների արտահայտություն: Այսպես, ըստ նրանց, **կարմիրը** նշանակում է հանուն մարդու փրկության Քրիստոսի թափած աստվածային արյունը: **Կապույտը** ցույց է տալիս Քրիստոսի աստվածային բնությունը, **սպիտակը**՝ սրբերի ճգնակեցությունը, նրանց մաքրությունն ու անարատ վարքը, իսկ **սևը**՝ աստվածային անհասանելի բնությունը:

Հայկական մանրանկարչությունն իր հարստությամբ, դպրոցների ու ոճական ուղղությունների բազմազանությամբ, պատկերագրական և գեղարվեստական ինքնատիպությամբ մեծ արժեք է ներկայացնում ոչ միայն **ազգային,** այլև **համաշխարհային** արվեստի տեսանկյունից:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ վերաբերմունք էր ձևավորվել գրերի և գրքի նկատմամբ:

2. Ինչպե՞ս էր պատրաստվում մագաղաթը:

3. Ինչպե՞ս էին անվանում ընդօրինակողներին և մանրանկարիչներին:

4. Ո՞ր ձեռագրերն էին ունենում խորաններ, անվանաթերթեր, պատկերներ:

5. Որո՞նք են մեզ հասած մանրանկարչական հնագույն նմուշները:

6. Ինչպե՞ս է մեկնվում մանրանկարների մեջ պատկերված կնոջ և ինչպե՞ս՝ տղամարդու գլուխը:

Քննարկենք

ա) Ինչո՞ւ է անհրաժեշտ իմանալ մանրանկարչության խորհրդաբանությունը:

բ) «Մագաղաթ» բառի միջոցով կատարե՛ք «Պրիզմա» վարժությունը:

*Յուրաքանչյուր ազգի մշակույթի, հոգեբանական առանձնահատկությունների մեջ կարևոր տեղ են գրավում **խորհրդանիշները**: Դրանց իմացությունը անհրաժեշտ է ինչպես սեփական ժողովրդին ու հայրենիքը ճանաչելու, այնպես էլ՝ ինքնաճանաչման առումով:*



15. ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ

Ինչո՞ւ ենք մենք հպարտանում մեր ազգային խորհրդանիշներով և ցավ ենք ապրում ու զայրանում, երբ որևէ մեկը փորձում է նսեմացնել կամ անարգել դրանք:

Օրինակ, բոլորս գիտենք, որ ազգային դրոշը խորհրդանիշ է, և մենք հարգանքով ու հպարտությամբ ենք վերաբերում նրան ոչ թե նրա նյութական կառուցվածքի և գեղեցկության, այլ այն բովանդակության պատճառով, որ ներկայացնում է: Տվյալ դեպքում դրոշը մեր կողմից դիտվում և ընկալվում է որպես իշխանության, պետականության, արժանապատվության, պատմության և բազմաթիվ այլ գաղափարների խտացված արտահայտություն, ուստի որևէ մեկի կողմից դրոշն անարգելը վիրավորանք է:

Ի՞նչ է խորհրդանիշը

Յուրաքանչյուր ազգի մշակույթի, հոգեբանական առանձնահատկությունների մեջ կարևոր տեղ են գրավում **խորհրդանիշները**: Դրանց իմացությունը անհրաժեշտ է ինչպես սեփական ժողովրդին ու հայրենիքը ճանաչելու, այնպես էլ ինքնաճանաչման առումով:

Ազգի ձևավորման ընթացքում, տվյալ ազգին բնորոշ աշխարհզգացողության, աշխարհընկալման միջոցով ստեղծվում են այդ ազգին առանձնահատուկ խորհրդանիշները (սիմվոլները), որոնք հանդես են գալիս նաև իբրև **տարբերանշաններ**: Սրանց միջոցով այդ ազգը նաև առանձնանում է մյուսներից: Որպես խորհրդանիշներ կարող են հանդես գալ ազգի կենսագործունեության միջա-

վայրը, այն **տարածքը,** որի վրա ընթացել է և շարունակում է ընթանալ էթնոսի, ապա նաև ազգի ծագումն ու կազմավորումը, **լեզուն, մարդաբանական առանձնահատկությունները, կրոնական հավատալիքները** և այլն:

Բավական է նայել այդ նշաններին և իսկույն կհասկանանք, թե ինչ ազգի կամ մշակույթի հետ գործ ունենք: Եթե, օրինակ, որևէ նկարի վրա տեսնում ենք Ս. Գրիգոր Լուսավորչի կամ Ս. Էջմիածնի պատկերը, ապա միանգամից հասկանալի է դառնում, որ դրանք հայ հոգևոր-ազգային արժեքներն են: Հարկ է նշել, որ այդ ճանաչումը կատարվում է միայն այն դեպքում, եթե մենք վաղօրոք գիտենք, թե այդ խորհրդանիշները որ ազգինն են:

Խորհրդանիշը նաև որևէ գաղափարի, կառույցի, էության ոգեղեն կամ նյութական արժեքի խտացված արտահայտությունն է, արտացոլում է տվյալ ժողովրդի ժառանգական հիշողությունը և ազգային ավանդույթները:

Սեփական խորհրդանիշների համակարգ կարող են ունենալ տոհմերը, իշխանական տները, սոցիալական խմբերը, քաղաքները, գյուղերը, քաղաքական կուսակցությունները և այլն:

Ազգային խորհրդանիշներ

Խորհրդանիշներն ըստ բնույթի լինում են **բարոյակերպարային, պատմական, աշխարհագրական** և **ազգային-պետական:**

Հայոց ազգային արժեհամակարգում բարոյակերպարային հատկանիշներ կրող խորհրդանիշներից են՝ **Խաչը, Կեռխաչը** կամ Արևխաչը (սվաստիկան), հավերժական պտույտը խորհրդանշող **Ութաթև աստղը,** հայոց **Այբուբենը, «Սասնա ծռեր»** դյուցազներգությունը, քրիստոնեական հավատի,

Խորհրդանիշը նաև որևէ գաղափարի, կառույցի, էության ոգեղեն կամ նյութական արժեքի խտացված արտահայտությունն է, արտացոլում է տվյալ ժողովրդի ժառանգական հիշողությունը և ազգային ավանդույթները:



Հայոց ազգային արժեհամակարգում բարոյակերպարային հատկանիշներ կրող խորհրդանիշերից են՝ Խաչը, Կեռխաչը կամ Արևխաչը (սվաստիկան), հավերժական պտույտը խորհրդանշող Ութաթև աստղը, հայոց Այբուբենը, «Սասնա ծռեր» դյուցազներգությունը, քրիստոնեական հավատի, հայոց պատմության և մշակույթի դասական այլ արժեքներ:

հայոց պատմության և մշակույթի դասական այլ արժեքներ:

Խաչ

Խաչը քրիստոնեության խորհրդանիշն է, պաշտամունքի և երկրպագության առարկան:

Խաչը օգտագործվել է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում: Այն խորհրդանշել է աշխարհի նյութականության չորս հիմնական տարրերը՝ հողը, օդը, ջուրը, կրակը, ինչպես նաև՝ աշխարհի չորս կողմերը և մարդուն: Շնորհիվ իր այս ընդհանրական իմաստի՝ Խաչի նշանները տարածված են եղել Հայկական լեռնաշխարհում, Միջագետքում, Եգիպտոսում, Պաղեստինում, Չինաստանում, Հնդկաստանում և այլուր:

Հռոմեական կայսրությունում գերաններից պատրաստված խաչը իշխանություններն օգտագործել են որպես մահապարտներին սպանելու դաժան պատժամիջոց: Խաչի անարգ մահը կրեց Հիսուս Քրիստոս:

Քրիստոնյաները խաչը հռչակեցին տառապանքի միջոցով մարդկության մեղքերի քավության, փրկության և հավիտենական կյանքի խորհրդանշան: Այն Հիսուս Քրիստոսի, ինչպես նաև քրիստոնեության կարևոր խորհրդանիշն է:

Խաչի պաշտամունքն առավելագույն չափով տարածվեց հայոց մեջ հատկապես Հիսուսի Խաչափայտի գերեդարձից հետո, երբ Բյուզանդիայի Հերակլ կայսրը, հաղթելով պարսիկներին, 631 թ. Խաչը հանդիսավորապես բերեց և հաստատեց Երուսաղեմում: Դրանից առաջ հայոց մեջ խաչի պաշտամունքը ծնունդ էր տվել մի քանի ավանդությունների, որոնցից հատկապես նշանավոր է Ս. Թա-

դեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների կողմից Խոր Վիրապից ոչ հեռու կանգնեցված Օթյաց Սուրբ Խաչի պատմությունը: Խաչի նկատմամբ պաշտամունքը Հայոց եկեղեցին վավերացնում է այն աստվածաբանական հիմնավորումով, որ Քրիստոսի խաչելությամբ և նրա արյան հեղմամբ Խաչն ինքը սրբացած է: Հայոց եկեղեցին հաստատել է նաև Խաչի օրհնությունն ու օծումը: Խաչը զարդարում է հայկական եկեղեցիների խորանները, տեղադրվում տաճարների տանիքին և գմբեթին:

Ոչ միայն **խաչը**, այլև **եկեղեցական անոթները, սպասքեղենը, զգեստները** և այլ պարագաներ ունեն հոգևոր խորհրդաբանություն (սիմվոլիկա): **Մկրտության ավազանը,** օրինակ, մատնանշում է չորս կարգի իրողություն. ջրհեղեղ (մեղքերից ձերբազատում), Կարմիր ծով (անցում դեպի նոր կյանք), Հայրական շնորհ, Մայր եկեղեցու արգանդ, որի մեջ վերստին ծնվում է մկրտվողը: Նվազ հետաքրքիր չէ զգեստների խորհրդաբանությունը. **վեղարը** սրածայր գլխադիր է, որ կրում են բացառապես Հայոց եկեղեցու կուսակրոն հոգևորականները: Հնում այն բրդյա էր (այսօր մետաքսից է) և, որպես աշխարհի համար մեռած լինելու նշանակ, օգտագործում էին ճգնակյաց անապատականները: **Ուրարը** ձախ ուսից վար իջնող լայն ժապավեն է. մոտիկ լինելով սրտին, այն խորհրդանշում է սրտանց Տիրոջ լուծը կրելու պատրաստակամությունը:

Կեռխաչ

Կեռխաչը (սվաստիկա, որը սանսկրիտերենից (հին հնդկերեն) թարգմանաբար նշանասկում է su + asti = լավ լինել) իրենից ներկայացնում է խաչի թևերի ծայրերն ուղիղ անկյան տակ, երբեմն կորությամբ աջ կամ ձախ ծռված խաչ: Այն աղերսներ

Քրիստոնեական (այդ թվում հայ) աստվածաբանության մեջ մեծ տեղ է հատկացվել Խաչի խորհրդաբանությանը և մեկնությանը: Այդ մեկնությունների համաձայն՝ Խաչի վերին մասը ցույց է տալիս երկնային արքայությունը, ստորինը՝ դժոխքի ավերումը, աջը՝ շնորհների բաշխումը, իսկ ձախը՝ մեղքերի թողությունը:

ունի արևի ու կրակի պաշտամունքի հետ: Կեռխաչն իր ձևերով անընդհատ շարժման տպավորություն է ստեղծում՝ խորհրդանշելով հենց արևի շարժումը:

Ութաթև կեռխաչը կամ աստղը հին հայերի համար հավերժության խորհրդանիշն էր և մեզ ուղեկցում է անհիշելի ժամանակներից:

Հայկական լեռնաշխարհում ութաթև կեռխաչեր հանդիպում են հնագույն ժայռապատկերներում: Այն լինելով բրոնզեդարյան ժամանակաշրջանի հիմնական զարդանախշերից մեկը՝ պատկերվել է զանազան առարկաների՝ կավամանների, բրոնզե գոտիների, գնդասեղների, դաշույնների, զենք ու զրահի և այլնի վրա:

Հայաստանի ժայռապատկերներում հայտնաբերվել են երկու մարդու կերպարանքով կեռխաչերի հնագույն օրինակներ:

Այբուբեն

Հայոց այբուբենն ազգային խորհրդանիշների ավիշն է: Ս. Մեսրոպ Մաշտոցն աստվածային զորությամբ գտավ, անգոյությունից գոյության կոչեց տառերը, որոնք իբրև անպարտելի զինվորներ պահպանում են մեր ազգի ինքնությունը:

«Սասնա ծռեր» դյուցազնավեպն այն ստեղծագործությունն է, որը պետք է ուղեկցի հայ մարդուն ողջ կյանքում: Էպոսը ոչ միայն ազգի նկարագրի, անցած ուղու վավերագրումն է, այլև նրա ցանկությունների, ձգտումների, նպատակների արտահայտությունը:

Օտարները, հետևելով մեր ժողովրդին, նկատում են, որ մենք աշխատասեր, խաղաղասեր ժողովուրդ ենք: Սակայն, երբ նեղացնում են այդ ժո-

ղովրդին, նա դառնում է «խենթ», «ծուռ», անճանաչելի: Յուրաքանչյուր հայ իր նկարագրով մի Դավիթ է և կռվի է դուրս գալիս, երբ դանակը ոսկորին է հասնում: Նա կարող է թշնամուն մեծահոգաբար զարկ բաշխել, բայց կհաղթի, որովհետև ուժեղ է, ազնիվ ու ազատատենչ: Էպոսը խոհեմ, զգոն լինելու, հայրական ժառանգությամբ հզորանալու, ինչպես նաև թշնամու դավերից խուսափելու խորհուրդ է:

Յուրաքանչյուր հայ իր նկարագրով մի Դավիթ է և կռվի է դուրս գալիս, երբ դանակը ոսկորին է հասնում, նա թշնամուն մեծահոգաբար զարկ կբաշխի, բայց կհաղթի, որովհետև ուժեղ է, ազնիվ ու ազատատենչ:

Պատմաաշխարհագրական խորհրդանիշներ

Ազգային խորհրդանիշների մեջ յուրահատուկ տեղ են զբաղեցնում **պատմաաշխարհագրական խորհրդանիշները:** Դրանք արտացոլում են հայ ազգի անցած ճանապարհը, այդ ընթացքում արձանագրված և՛ հաղթանակները, և՛ պարտությունները: Այս խորհրդանիշները արտահայտում են հայրենիքի անկրկնելիության, անփոխարինելիության, ազգային պատկանելության զգացողություն: Դրանք իրենց հերթին լինում են **մտապատկերային, առարկայական, մշակութային** և **կենդանական-բուսական**:

Մտապատկերային խորհրդանիշն առնչվում է ազգային արժանապատվությանը և գենետիկ հիշողությամբ փոխանցվում է սերնդեսերունդ: Լավ ու հաղթական մտապատկերային հիշողություններ են արթնացնում հայկական բերդերը, հերոսամարտերի վայրերը, պաշտամունքային տաճարները կամ հակառակը, տխուր հիշողություններ են առաջացնում Հայոց ցեղասպանության հուշակոթողը, Եռաբլուրը և այլն:

Մտապատկերային խորհրդանիշներ են Հայկ Նահապետը, Արամ, Արտաշես I, Տիգրան II Մեծ,

Պատմաաշխարհագրական խորհրդանիշերն արտահայտում են հայրենիքի անկրկնելիության, անփոխարինելիության, ազգային պատկանելության զգացողություն:

Մտապատկերային խորհրդանիշներ են Հայկ Նահապետը, Արամը, Արտաշես Ի-ը, Տիգրան II Մեծը, Ս. Տրդատ III-ը, Ս.Սահակ Պարթևը, Ս. Մեսրոպ Մաշտոցը, Ս. Գրիգոր Նարեկացին, Ս. Ներսես Շնորհալին, Կոմիտասը, Անդրանիկը և ուրիշներ:

Ս. Տրդատ III արքաները, Ս. Սահակ Պարթևը, Ս. Մեսրոպ Մաշտոցը, Ս. Գրիգոր Նարեկացին, Ս. Ներսես Շնորհալին, Կոմիտասը, Անդրանիկը և ուրիշներ:

Առարկայական խորհրդանիշը նյութականացված արժեք է՝ սար, լիճ, տաճար, խաչքար, մագաղաթ և այլն, որը պատմում է անցյալի լավ ու վատ անցքերի մասին: Երկգագաթանի Մասիսը առարկայական խորհրդանիշ է և յուրաքանչյուր հայի համար նվիրական արժեք: Առարկայական համապարփակ խորհրդանիշ է Հայկական լեռնաշխարհը:

Մշակութային խորհրդանիշներ են հայ երգը, պարը, խոսքը և այլն:

Կենդանական (տոտեմական) խորհրդանիշները դարձել են ազգային-պետական խորհրդանիշների տարր: Օրինակ՝ խոյը, առյուծը, արծիվը, ցուլը և այլն:

Բուսական խորհրդանիշներ են ծիրանը, խաղողը, նուռը, ցորենի հասկը և այլն:

Ազգային պետական խորհրդանիշներ

Ազգերի կյանքում մեծ նշանակություն ունեն **ազգային-պետական** խորհրդանիշները՝ **դրոշը, օրհներգը, զինանշանը** և այլն:

«Դրոշ» բառն առաջացել է դրոշմել (քանդակել) բայից: Հայաստանում դրոշի օգտագործման վերաբերյալ ամենավաղ տեղեկությունը կապված է Հայկ Նահապետի ավանդության հետ: Հայկը, հաղթելով Բելին, իր դրոշը պարզեց մի ժայռի վրա, որը հետագայում կոչվեց Հայկաբերդ:

Հայաստանում յուրաքանչյուր թագավորական

տուն և նախարարություն ուներ իր առանձին դրոշը: Սակայն մեր հին մատենագիրներն աղոտ տեղեկություն են հաղորդում թագավորական տների և առանձին նախարարությունների դրոշների գույնի, զինանշանների չափի և ձևի մասին: Հայտնի է, օրինակ, որ Մամիկոնյանների զինանշանն էր գառ ճանկած երկգլխանի արծիվը, Բագրատունիներինը՝ խաչի նշանով պսակված թագակիր երկու քայլող հովազներ, Ռուբինյաններինը՝ թագակիր առյուծ, Զաքարյաններինը՝ իրար գրկող երկու աղավնի տատրակներ և այլն:

Լևոն VI-ի մահից հետո հայոց թագավորության ժառանգ համարվեցին Կիպրոսի Լուսինյանները: Նրանք Կիլիկիայի հայ թագավորների տիտղոսները միացրին իրենց անվանը: 1519 թ. նոյեմբերի 19-ին Տարսոնի Մատթեոս արքեպիսկոպոսը Հայաստանի անվանական թագավոր օծեց Կիպրոսի Հովհաննես II Լուսինյան թագավորին, իսկ Կիպրոսի Լուսինյան դրոշակն էլ իր մեջ առավ հայոց դրոշակի գույները և դարձավ սպիտակ, կապույտ, կարմիր և դեղին:

1773 թ. լույս տեսած Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ում նկարագրված է հայկական պետության ապագա դրոշը՝ կարմիր, կապույտ և դեղին՝ ստեղծվելիք բանակի երեք սպարապետությունների զինվորների համազգեստների գույներին համապատասխան:

1789 թ. Հովսեփ արք. Արղությանը և Հ. Լազարյանը ռուսական կառավարությանը ներկայացրին մի հիշատակագիր, որի մեջ հայոց դրոշի գույները ներկայացնում էին կարմիրը, կանաչը և կապույտը՝ Նոյան տապանի նշանով:

1885 թ. Փարիզի հայ ուսանողական միությունը, որը Վիկտոր Հյուգոյի թաղման արարողությանը

Արյունից ծորած երիզ մի
կարմիր,
Երկնքից պոկված կտոր մի
կապույտ,
Հասուն հասկերի շող
նարնջագույն,
Եվ դարերի հավատի
դրոշ եռագույն:

Անդրանիկ Ծառուկյան

Կարմիրը հայ ժողովրդի թափած արյունն է իր գոյատևման համար, կապույտը՝ անամպ, բաց երկինքը, իսկ նարնջագույնը (ծիրանագույն) հայկական մտածելակերպում զուգորդվում է արևի, ծիրանի և ցորենի հասկի հետ:

Պետական դրոշը մարմնավորում է ժողովրդի հպարտությունն իր երկրի համար, նրա մշտական պատրաստակամությունը՝ աշխատանքով և կյանքով պաշտպանելու դրոշի պատիվն ու անկախությունը: Դրոշը պետության ինքնուրույնությունն արտահայտող պաշտոնական տարբերանշանն է: Դրոշի նկարագրությունը տրվում է օրենսդրությամբ:

Ղևոնդ Ալիշանն է գույների մի երկրորդ դասավորության հեղինակը, այն է՝ դեղինը, կարմիրը, կանաչը: Գույների այս դասավորությունը նա վերցրել է ծիածանի գույներից: Մեր դրոշակը Աստված է տվել, ասում է Ալիշանը, այն օրից, երբ Մասիսի գագաթին Նոյի տապանի վրա ծագեց ծիածանը:

Զինանշանը այն կրողի պատմական ավանդույթներն արտահայտող պատկերների ու առարկաների համադրությամբ խորհրդանշանային ժառանգական տարբերանշանն է:

ուզում էր մասնակցել հայ ազգային դրոշով, դիմում է Ղ. Ալիշանին և հարցնում նրան հայկական դրոշի գույները: Ալիշանը հայտնում է, թե հայոց դրոշի գույներն են դեղինը, կարմիրը, կանաչը:

Հայաստանի Առաջին հանրապետությունը, չընդունելով Ալիշանի կողմից ընտրված դրոշի գույների դասավորությունը, ընդունում է Ռուբինյանների թագավորության վերջին շրջանի գույները՝ **կարմիրը, կապույտը, ծիրանագույնը**: Գույների այս դասավորությամբ դրոշը նաև ներկայիս Հայաստանի Հանրապետության պետական դրոշն է:

Զինանշան

Զինանշանը այն կրողի պատմական ավանդույթներն արտահայտող պատկերների ու առարկաների համադրությամբ խորհրդանշանային ժառանգական տարբերանշանն է:

Զինանշանները յուրահատուկ են պետությանը, ազնվական կամ իշխանական տներին, վարչատարածքային միավորներին, քաղաքներին, համքարություններին, երբեմն նաև առանձին անձանց և արտացոլում են դրանց վարչական, աշխարհագրական, տնտեսական, կենցաղային, անհատական և այլ առանձնահատկությունները: Զինանշանները պատկերված են լինում **կնիքների, դրամների, մեդալների, դրոշների, ռազմի առարկաների, ճարտարապետական հուշարձանների** և այլնի վրա:

Հայոց պատմության մեջ կցկտուր տեղեկություններ են պահպանվել հայկական զինանշանի վերաբերյալ: Հայտնի է, որ արքայական և նախարարական դրոշների վրա ագուցված էին այլևայլ կենդանիների՝ վիշապի, արծվի, առյուծի պատկերներ,

իսկ քրիստոնեության ընդունումից հետո՝ խաչ, դաստառակ, Ս. Էջմիածին և այլն:

Հայտնի է, օրինակ, որ Արծրունիների զինանշանն էր մագիլներում թռչուն կրող արծիվը: Գրեթե նույն տեսքն ունի Վաչուտյանների զինանշանը:

Կիլիկիայի հայկական իշխանության՝ Հեթումյանների ժամանակ գործածության մեջ է մտել **խաչի** և **բերդի վանդակավոր դռան** համադրությամբ զինանշանը: Իսկ Կիլիկիայի հայկական թագավորության դրոշի վրա ներկայացված է եղել **թագակիր առյուծի** պատկերով զինանշանը:

Հայաստանի Երրորդ հանրապետության օրենքը զինանշանի մասին ընդունվել է 1992 թ. ապրիլի 19-ին: Այդ օրենքի համաձայն՝ 1920 թ. հուլիսին ընդունված ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի և նկարիչ Հակոբ Կոջոյանի հեղինակած զինանշանը ընդունվել է ՀՀ պետական զինանշան:

Հայկական զինանշանների մասերն են.

1. Յոթ գլխանի վիշապը – Տիգրան Երվանդյանի խորհրդանիշն էր, որը սպանեց մարաց Աժդահակին:

2. Մի գլխանի արծիվը – Արտաշեսյանների հարստության, իսկ երկգլխանի արծիվը՝ Մամիկոնյանների խորհրդանիշն էր: Արծիվը վաղ ժամանակներից ի վեր արտահայտում է բարձրությունը, բարձրից տիրելու և հովանավորելու գաղափարը:

3. Դաստառակ կամ թաշկինակ – խորհրդանշում է Հայաստանի քրիստոնեացումը:

4. Գառնուկը – խորհրդապատկերն է Հիսուս Քրիստոսի, ով Աստծու գառն է:

5. Խաչազարդ թագը – խորհրդանշանն է քրիստոնյա Հայաստանի թագավորության:

6. Առյուծը – խորհրդանիշն է Ռուբինյան թագա-





Հայաստանի երրորդ հանրապետության օրենքը զինանշանի մասին ընդունվել է 1992 թ. ապրիլի 19-ին: Այդ օրենքի համաձայն՝ 1920 թ. հուլիսին ընդունված ճարտարապետ Ալ. Թամանյանի և նկարիչ Հ.Կոջոյանի հեղինակած զինանշանը ընդունվել է ՀՀ պետական զինանշան:

* **Մշտնջենավորություն** – *հավերժություն:*

վորության, իսկ առյուծի թաթի մեջ եղած սուրը նշանակում է իշխանություն: Սուսերակիր առյուծը ակնարկում է հայկական տիրապետության հզորությունը Կիլիկիայի մեջ:

7. Մեծ ու Փոքր Մասիսները – խորհրդանշում են հայկական կամ Արարատյան թագավորությունը, հայ ժողովրդի ավանդական օրրանը: Մասիս լեռը տիրում է ողջ Հայաստանի վրա և հովանավորելով հայկական սրբություններն ու իրավունքները՝ իմաստավորում է Հայաստանի անխախտ մշտնջենավորությունը*: Մասիս սարի վրա պատկերված Նոյյան տապանը խորհրդանշում է Աստվածաշնչյան ջրհեղեղի հիշատակը: Ս. Էջմիածնի Մայր տաճարը, որ գտնվում է Մասյաց հովանու ներքո, հիշեցնում է հայոց հոգևոր-ազգային կենտրոնի, հայերի համար առաջին սրբավայրի հիմնարկությունը և շինությունը:

8. Կապարճը, աղեղը, նիզակները – խորհրդանշում են իրավունքի, պաշտպանության և իշխանության պահպանման միջոցները, այսինքն՝ զենքի ուժը:

Օրհներգ

Պետական օրհներգն ազգային, վեհ, խրոխտ երաժշտության, անցյալը, ներկան և ապագան կապող հայրենասիրության, նվիրումի մղող և լուսավոր ապագայի հույս ներշնչող երգ-բանաստեղծություն է:

Դրամը

Ազգային դրամը տնտեսությունը կազմակերպելու միջոց է: Պետության համար սեփական դրամի շրջանառության տարածք ունենալը՝ անկախ, ինքնավար լինելու անհրաժեշտ պայման է:

Խորհրդանիշների համակարգը անաղարտ պահելը, դրանցով սերունդ դաստիարակելն ազգային դիմագիծը չկորցնելու, արժանապատվության բարձր գիտակցությամբ հարատևելու լավագույն միջոցն է:

Հարցեր

1. Տվե՛ք խորհրդանիշի սահմանումը:
2. Ի՞նչը կարող է հանդես գալ որպես խորհրդանիշ տվյալ ազգի համար. հիմնավորե՛ք օրինակներով:
3. Թվարկե՛ք խորհրդանիշների տեսակները:
4. Որո՞նք են անհատական խորհրդանիշները:
5. Որո՞նք են ազգային խորհրդանիշները:
6. Ի՞նչ խորհուրդ ունի խաչը: Ինչպե՞ս է Հայոց եկեղեցին հիմնավորում խաչի պաշտամունքը:
7. Ի՞նչ են խորհրդանշում եկեղեցական պարագաները:
8. Բերեք ազգային խորհրդանիշների օրինակներ և ներկայացրեք դրանց խորհուրդը: Հիմնավորեք ձեր պատասխանները:
9. Որո՞նք են պատմաաշխարհագրական խորհրդանիշները: Դասընթացում նշված օրինակներից բացի, լրացուցիչ ի՞նչ օրինակներ կարող եք բերել:
10. Որո՞նք են ազգային պետական խորհրդանիշները:
11. Ի՞նչ է դրոշը: Ի՞նչ է ձեզ հայտնի դրոշի մասին պատմությունից: Բացատրեք հայկական դրոշի գույների խորհուրդը:
12. Ի՞նչ է զինանշանը, ի՞նչ գիտեք հայկական զինանշանի մասին: Ներկայացրեք զինանշանի խորհուրդը:
13. Ի՞նչ է օրհներգը:
14. Ի՞նչ է դրամը:

Առաջադրանքներ

ա) Գծակարգի միջոցով ներկայացրեք խորհրդանիշները, յուրաքանչյուրը հիմնավորեք օրինակներով:

բ) Ընտրեք մեկ խորհրդանիշ և դրա միջոցով կատարեք «Պրիզմա» վարժությունը:

16. ԽԱՉՔԱՐ

Հայ ժողովուրդն արարելու իր ինքնատիպ տաղանդը մարմնավորել է նաև խաչքարային արվեստի մեջ:

Խաչքարն իբրև կոթող-հուշարձան հայ միջնադարյան քարեղեն մշակույթի ինքնատիպ դրսևորումներից է: Այն զուտ հայկական է և պատկանում է միայն հայ ժողովրդին: Դա խաչի պատկերով, զարդաքանդակների հորինվածքով ուղղաձիգ կանգնեցված սալաքար է: Միջնադարյան Հայաստանում քանդակվել ու կանգնեցվել են անհամար քանակությամբ բարձրարվեստ խաչքարեր:

Խաչքարային արվեստի սկզբնավորումը

Հայ ժողովուրդն ունեցել է քարե կոթողներ կանգնեցնելու ազգային հնամենի սովորույթ: Դարերի և հազարամյակների ընթացքում կառուցվել են մենհիրներ, «վիշապներ», սահմանաքարեր, «թևավոր խաչով» պսակված պատկերաքանդակային կոթողներ և խաչքարեր:

IV դ. Ս. Գրիգոր Լուսավորչի նախաձեռնությամբ, ի նշան քրիստոնեության հաղթանակի, Հայաստանի տարբեր կողմերում փայտե խաչեր են բարձրացվում: Հետագայում թևավոր այդ խաչերը պատրաստվում էին քարից: Խաչքարային արվեստը, սակայն, իբրև այդպիսին Հայաստանում սկզբնավորվել է V-VI դդ.:

Խաչափայտի գերեդարձի հետ կապված VII դարից հետո գրվում են խաչը պանծացնող ներբողներ, շարականներ: Խաչի նկատմամբ այս վերաբերմունքն իր դրսևորումը գտնում է նաև խաչ-

Հայ ժողովուրդն արարելու իր ինքնատիպ տաղանդը մարմնավորեց նաև խաչքարային արվեստի մեջ: Խաչքարերը հայրենասիրության, եզակի և ինքնատիպ մշակույթի, գեղագիտական բարձր ճաշակի արտահայտություն են:

Կոթողները խաչքար են կոչվել, որովհետև դրանց քանդակազարդված երեսի կենտրոնական մասում պատկերված է խաչ՝ քրիստոնեական հավատի խորհրդանիշը:

քարային արվեստում, որը IX դարից սկսած բուռն զարգացում է ապրում:

IX դ. երկրորդ կեսին Հայաստանում իշխանական տների հզորացման և թագավորության վերականգնման շրջանում նպաստավոր պայմաններ են ստեղծվում ստեղծագործական աշխատանքի՝ ճարտարապետության, քանդակագործության և հատկապես խաչքարային արվեստի զարգացման համար:

Խաչքարերը բաղկացած են երկու հիմնական մասից՝ սրբատաշ կամ անմշակ խորանարդաձև պատվանդանից և առհասարակ մեկ ու կես մետր բարձրությամբ, միակտոր քարե սալերից, որոնք իրար հետ ագուցվում են կրաշաղախով: Խաչքարի երեսը երբեմն ներկել են կարմիր օխրայով:

Կոթողները խաչքար են կոչվել, որովհետև նրանց քանդակազարդված երեսի կենտրոնական մասում պատկերված է խաչ՝ քրիստոնեական հավատի խորհրդանիշը: Խաչքարի հակառակ երեսը հարթ է կամ պատած խոշոր երկաթագիր վիմագիր արձանագրությամբ: Խաչքարերի վրա պահպանված արձանագրությունների վերծանման շնորհիվ պարզվում են դրանց կերտման, կանգնեցման շարժառիթները և պատմությունները:

Խաչքարերի կառուցումը հետապնդել է տարբեր նպատակներ: Դրանք կանգնեցվել են **պատմական կարևոր դեպքերը հավերժացնելու, ռազմական հաղթանակներն արձանագրելու, գյուղերի, եկեղեցիների, վանքերի, աղբյուրների, ճանապարհների, կամուրջների կառուցման, շինարարական այլ կարգի աշխատանքների ավարտը նշանավորելու համար, վանական միաբանություններին խոշոր նվիրատվություններ շնորհելու առիթով, նշանավոր հասարակական դեպքերի, անձնավորությունների և զոհված հերոսների հիշատակին, ինչպես նաև**

իրենց անունը և ծնողների հիշատակն անմահացնելու, սահմանների որոշման, կալվածքների նվիրման նպատակով և այլն: Խաչքարերը ծառայել են նաև որպես տապանաքարեր, հիշատակարան-հուշարձաններ, որոնք թվով գերազանցում են մյուս տեսակներին:

Խաչքարը՝ որպես արվեստի ինքնուրույն ուղղություն

Որպես քանդակագործական արվեստի մի նոր, յուրահատուկ ստեղծագործություն, խաչքարերն ունեցել են իրենց զարգացման աստիճանական ընթացքը: Վաղ շրջանում ստեղծված թևավոր, հավասարաթև խաչքարերին փոխարինելու են գալիս այսօր հայտնի դասական խաչքարերը:

Դրանք միակտոր քարից ուղղանկյուն հորինվածքով, վերին մասում ինքնատիպ քիվով պսակված և պատվանդանի վրա տեղադրված կոթողներ են: Պատվանդանը, որ հնում թաղված էր լինում մինչև վերին երեսը հողի մեջ, XI դ. սկսած աստիճանաբար բարձրանում է վեր և դառնում տեսանելի: Հաճախ պատվանդանի քարն ունենում է հսկայական մեծություն, երբեմն էլ հենց տեղում, բնական քարաժայռի վրա փոս է փորվում և խաչքարն ագուցվում է մեջը: Խաչը հենվում է զարդապատկերներով պատած ծաղկի՝ վարդյակի կամ երկու կողմից բարձրացող ականթե տերևների վրա: Հաճախ քանդակազարդ պատկերն իր նրբագեղությամբ հիշեցնում է ոսկերչական աշխատանք կամ ասեղնագործ ժանյակ, որի շնորհիվ քարը կարծես կորցնում է իր նյութականությունը, իսկ պատկերն ընդելուզվում է սալաքարին: Խաչքարերի զարդաքանդակներն անկրկնելի են, ոչ մի խաչքար չի կրկնում մյուսին:

Որպես հիշատակարան-հուշարձաններ տեղադրվելով եկեղեցիների և վանքերի մուտքերի մոտ, գավիթներում, բանուկ ճանապարհների եզրերին, դաշտերի և բլուրների վրա, գերեզմանոցներում, փորագրվելով կամ ամրացվելով տաճարների պատերին ու ժայռերին, խաչքարերն ընկալվել են որպես հավատո հանգանակ, հոգու փրկության խորհրդանիշ:



Կան հազվագյուտ խաչքարեր, որոնց թիկունքին ևս խաչեր են քանդակված: Օրինակ, Վարդենիսի շրջանի Մազրա գյուղի VI դ. երկու խաչքարերը և նույն շրջանի Ակունք գյուղի Սարգիս երեցի XVI դ. խաչքարը:

Խաչքարերի գեղարվեստական ձևավորումը չի սահմանափակվում միայն զարդապատկերային մոտիվներով:

XI-XII դդ. հայ մատենագիրներ Անանիա Սանահնեցին, Հովհաննես Սարկավագը պատվիրում են, որ խաչը ներկայացվի նաև Խաչյալի հետ, որովհետև խաչի (խաչքարի) զորությունը Խաչյալի մեջ է: Այս պատգամի քարեղեն դրսևորումը «**Ամենափրկիչ**» կոչվող խաչքարերն են, որոնց քանդակազարդ երեսին պատկերված են Քրիստոսի խաչելության տեսարաններ, և որի հորինվածքում տեղ է գտել պատվիրատուի դիմաքանդակը: Այս տեսակի խաչքարերի վրա պատկերված են արևն ու լուսինը, իսկ խաչաքանդակն ընդհանրապես իր ներքևի մասում կլոր վարդյակ չի ունենում: Երբեմն էլ պատահում է, որ խաչքարի վրա Հիսուսի խաչելության պատկերը չի լինում, բայց կանգնեցվում է որպես այդպիսին (օրինակ՝ Աշտարակի ծակ խաչը): Ժողովուրդն այս խաչքարերին վերագրել է հիվանդություններ բուժելու, վերքեր ամոքելու հատկություններ, և հաճախ տարբեր վայրերից հիվանդներին ուխտի էին բերում դրանց մոտ:

Քիչ չեն նաև կենցաղային մոտիվներով խաչքարերը, որոնցում պատկերված են նուռ և ողկույզ, հասկ և հաց, մարդ և թռչուն: Մի սալաքարի վրա ներկայացված է նույնիսկ թատերախաղ, մեկ ուրիշի վրա՝ խրախճանքի տեսարան, որը խորհրդանշում է անդենական* կյանքում ուրախության մեջ գտնվելու ադամորդու ակնկալությունը:

Խաչքարի կենտրոնը կազմող խաչն աստվածաբան մեկնիչները համարել են Աստվածաշնչի Ծննդոց գրքում հիշված Կենաց ծառի խորհրդապատկերը:

***Անդենական** – անդրշիրիմյան:*

XIV-XV դդ. ռազմաքաղաքական ծանր վիճակի պատճառով խաչքարային արվեստի զարգացումը խաթարվում և անկում է ապրում: Միայն XVI-XVII դդ. Արևելյան Հայաստանի լեռնային վայրերում հայ մելիքների իշխանության ներքո, ինչպես նաև Հին Զուղայում նոր թափ է ստանում խաչքարեր կանգնեցնելու սովորությունը: Այս ժամանակաշրջանի խաչքարերը նշանավորում են զարդաքանդակի ծաղկման նոր փուլ, որի բնորոշ հատկանիշներն են առավելագույն մանրացումն ու նրբահյուս բանվածքը:

XVI-XVII դդ. խաչքարերի զարդաքանդակներն ու պատկերաքանդակները, որոնք հիմնականում ձեռք են բերում կենցաղային բնույթ, կերպափոխվում են, դառնում միապաղաղ: Խաչքարերը դառնում են նեղ, սլացիկ և սյունանման: Կենտրոնական խաչը պատկերվում է սրածայր կամարով նեղ խորանի մեջ: Զարդաքանդակները, ինչպես և հաճախ հանդիպող կենցաղային պատկերաքանդակներն աչքի են ընկնում կատարման վարպետությամբ ու նրբագեղությամբ:

Հնագույն խաչքարերն ունեցել են վիմական արձանագրություններ՝ երկաթագիր և նոտրգիր, փորագիր (խորաքանդակ) և ելնդավոր (բարձրաքանդակ) գրերով: Դրանցից որոշ խաչքարերի վրա փորագրվելիք նախադասությունը ճիշտ և համաչափ տեղադրելու համար խաչքարի վրա թեթև գծեր են փորագրել և ապա գրել արձանագրությունը:

Վիմագիր արձանագրությունները պահպանել են խաչքարեր կերտող քանդակագործ-վարպետների անունները, որոնք իրենց անվանել են **«հորինող», «գծող», «քարագործ», «կազմող»**: Այդ վարպետները, շրջելով քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, քանդակում ու կերտում են արվեստի և ձևի տեսակետից

Մինչև այժմ հայտնի միակտոր քարից խոշորագույն խաչքարը համարվում է Մարտունու տարածաշրջանի Զոլաքար գյուղի բաց գույնի բազալտե հայտնի Զոլախաչը (զոլ նշանակում է երկար):

Պատվանդանով ամենամեծ խաչքարը Կոշի կարմիր տուֆից պատրաստված խաչքարն է, որի բարձրությունը կազմում է 6,8 մ:

Միջնադարում խաչքարերը ետ մղեցին և փոխարինեցին Հայաստանում նախապես գոյություն ունեցող կոթողային բոլոր տիպի հուշարձաններին և դարձան միակը՝ յուրահատուկ նշանակությամբ:

Ամենից շատ խաչքարեր ստեղծել է Քիրամ վարպետը: 1551–1610 թթ. նա պատրաստել է շուրջ 300 խաչքար, որոնցից շատերն այժմ էլ կանգուն են:

ոճավորված գեղեցիկ խաչքարեր: Տաղանդավոր վարպետների անկաշկանդ երևակայության ու նուրբ արվեստի շնորհիվ խաչքարերը դարձան մեծարժեք գեղարվեստական գործեր: Այդ փոքրիկ հուշարձաններով նրանք կարողացան վառ պահել քարագործ արվեստի ավանդույթները: Գերազանցապես անհատական աշխատանքի արդյունք հանդիսացող այս հուշարձանների վրա նրան կերտող վարպետը դրոշմել է նաև իր անունը, որն արժեքավոր ազգային սովորություն էր: Նրանցից քչերի անուններն են պահպանվել: XII դարում ամենանշանավորը եղել է **Մխիթար վարպետը**: XIII դարում են գործել **Պողոսը, Տիմոթը, Վեցիկը, Վահրամը, Ատոմը, Շնորհավորը, Երեմիան**, XIII-XIV դարերում է ապրել և ստեղծագործել **Մոմիկը**, XVI-XVII դդ. հայտնի են եղել **Քիրամը, Առաքելը, Մելիքսեթը** և ուրիշներ:

Քարագործ վարպետներից միայն երկուսին՝ Պողոսին և Մոմիկին հաջողվեց ստեղծել «ասեղնագործ» եռաշերտ խաչքարեր: Ընդ որում, Մոմիկը փայլատակեց քիվի և շրջանակի պատկերներում:

Խաչքարերը կարևոր սկզբնաղբյուր են հանդիսանում մեր ժողովրդի պատմության ուսումնասիրման համար: Դրանք պարունակում են Հայաստանի երբեմնի հնագույն բնակավայրերի ու գյուղերի պատմական անունները:

Խաչքարերը հայրենասիրության, աստվածապաշտության, եզակի և ինքնատիպ մշակույթի, գեղագիտական բարձր ճաշակի արտահայտություն են:

Խաչքարի խորհրդաբանությունը

Որպես հավատի հուշարձան՝ խաչքարն ունի հետաքրքիր խորհրդաբանություն:

Խաչքարի կենտրոնը կազմող խաչը աստվածաբան մեկնիչները համարել են Աստվածաշնչի Ծննդոց գրքում հիշված Կենաց ծառի խորհրդապատկերը:

Պատվանդանը լինում է **աստիճանաձև** և **խարսխաձև**: Աստիճանաձև պատվանդանը հիշեցնում է Բաբելոնի աշտարակը, որը, ըստ Ս. Գրիգոր Լուսավորչի վարդապետության, խաչի հակառակ բևեռն է: Եթե Բաբելոնի աշտարակը մարդկության բաժանման, ապա խաչը, ճիշտ հակառակը, բաժանված ու տրոհված ազգերի միավորության խորհրդանիշն է: Եթե Բաբելոնի աշտարակաշինությունից հետո 72 նահապետների առաջնորդությամբ մարդկությունը բաժանվեց 72 ազգերի, ապա Քրիստոսի խաչվելուց հետո, 72 աշակերտների գործունեությամբ, ամբողջ մարդկությունը միավորվեց: Կան նաև այնպիսի խաչքարեր, որոնցում խաչը հանգչում է՝ խարսխվում վարդյակի վրա, այն հավերժության խորհրդանիշն է, որով հաստատվում է, թե խաչի խորհուրդը հավիտենական է:

Հաճախ խաչքարի քիվի վրա պատկերվում են չորս ավետարանիչների՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի խորհրդանշանները (**հրեշտակ, առյուծ, եզ, արծիվ**), որոնց մեջտեղում երբեմն ներկայացված է լինում Աստվածային մատյանը ձեռքին Հիսուս Քրիստոսի պատկերը: Այդ խորհրդանշաններից յուրաքանչյուրը ցույց է տալիս այն դերակատարությունը, որ Քրիստոս ունի տվյալ Ավետարանում: Այսպես, Մատթեոսի Ավետարանում ավելի շեշտվում է Քրիստոսի **մարդեղության**

Խաչքարի միայն մեկ՝ արևմտյան երեսն է մշակվում և զարդարվում, որովհետև եկեղեցածիսական կանոնի համաձայն՝ քրիստոնյան աղոթելիս դեմքը պետք է դեպ արևելք դարձնի, որովհետև Քրիստոսի երկրորդ գալուստը արևելքից է ակնկալվում:

Հայաստանում խաչքարերով ամենահարուստը եղել է Արաքսի ափին գտնվող Հին Ջուղայի գերեզմանատունը: XVII դ. սկզբներին այնտեղ կար 10 հազար խաչքար:

Բոլորովին վերջերս՝ 2003-2006 թթ. ընթացքում ադրբեջանցի բարբարոսները ոչնչացրեցին համաշխարհային արժեք ունեցող այդ խաչքարերը:

Խաչքարերով հարուստ են նաև Սևանա լճի ափին գտնվող Նորադուզի (որտեղ կա 1000 խաչքար) և Սաղմոսավանքի գերեզմանատները:

խորհուրդը, որի պատճառով այն ներկայացված է մարդանման հրեշտակի կերպարանքով, Մարկոսի Ավետարանում՝ Քրիստոսի **արքայական** պաշտոնը, որի պատճառով այն ներկայացված է առյուծի կերպարանքով, Ղուկասի Ավետարանում՝ Քրիստոսի **քահանայական** պաշտոնը, այսինքն՝ **զոհաբերության** խորհուրդը, որի պատճառով այն ներկայացված է եզան կերպարանքով, իսկ Հովհաննեսի Ավետարանում՝ Քրիստոսի **սխրագործության** աստվածաբանական արժևորումը, որի պատճառով այն ներկայացված է վերասլաց արծվի կերպարանքով: Բայց հաճախ էլ խաչքարի քիվի վրա պատկերված է **երեք խաչ**: Այն ներկայացնում է **Ս. Երրորդության** խորհուրդը:



Հարցեր

1. *Քարե կոթող - հուշարձանների ի՞նչ տեսակներ են հայտնի Հայկական լեռնաշխարհում:*
2. *Ե՞րբ է սկզբնավորվել և ե՞րբ բուռն զարգացում ապրել խաչքարային արվեստը:*
3. *Ի՞նչ հիմնական մասերից է բաղկացած խաչքարը:*
4. *Ի՞նչ նպատակներով և առիթներով են ստեղծվել խաչքարերը:*
5. *Ինչո՞ւ է մշակվել և զարդարվել խաչքարի միայն արևմտյան երեսը:*
6. *Ո՞ր խաչքարերն են կոչվում «Ամենափրկիչ»: Ի՞նչ հատկություններ է վերագրել ժողովուրդն այդ խաչքարերին:*
8. *Որո՞նք են Հայաստանի խաչքարերով հարուստ վայրերը:*
9. *Թվարկե՛ք հայտնի խաչքարագործ վարպետների անուններ:*
10. *Ո՞ր վարպետներն են ստեղծել «ասեղնագործ» խաչքարեր: Ինչո՞ւ էին դրանք կոչվում ասեղնագործ:*
11. *Ի՞նչ են խորհրդանշում խաչքարերի վրա պատկերված հրեշտակի, առյուծի, եզան և արծվի քանդակները:*
12. *Ո՞րն է խաչքարերի վրա պատկերված երեք խաչի խորհուրդը:*
13. *Ի՞նչ են խորհրդանշում խաչքարի կենտրոնի խաչը, խաչի աստիճանաձև պատվանդանը և խաչի խարսխաձև պատվանդանը:*

Առաջադրանքներ

ա) Օգտվելով դասագրքում ներկայացված խաչքարի սխեմատիկ պատկերից, ներկայացրեք հիմնական բաղադրատարրերը:

բ) Լրացրեք աղյուսակը.

Խաչքարերի տեսակը	Ի՞նչ առանձնահատկություններ ունի	Ժողովուրդը ի՞նչ հատկություններ է վերագրել այդ տեսակի խաչքարերին

17. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ճարտարապետությունը մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ միջավայրը ձևավորող տարածական կառուցվածքների համակարգն է, դրանք ստեղծելու արվեստը:

Հայ ժողովրդի մշակույթի ոչ մի բնագավառ այնքան հարուստ ու բազմապիսի դրսևորումներ չի ունեցել, որքան ճարտարապետությունը: Հայկական ճարտարապետությանը բնորոշ են զարգացման բարձր մակարդակը, գեղարվեստական հարուստ ավանդույթները և հատկապես ազգային ինքնատիպությունը:

Հայկական եկեղեցաշինությունը համարվում է աշխարհում առաջին ազգային եկեղեցաշինական ոճը: Այն ունի մի քանի բնորոշ առանձնահատկություններ.

առաջին հերթին սրածայր գմբեթ,
մեծ սյուներ,
լույսի հետաքրքիր օգտագործում:

Քարահունջ

Հայկական ճարտարապետության սկզբնավորումը

Հայաստանում շինարարական ճարտարապետական ավանդույթներն սկսել են զարգանալ անհիշելի ժամանակներից: Հնագույն կառուցվածքները վերաբերում են Ք. ա. IV–I հազարամյակներին: Դրանք հիմնականում ամրացված բնակավայրեր են՝ կառուցված խոշոր անտաշ քարերով՝ «կիկլոպյան» կոչվող տեխնիկայով: Այդպիսի հնագույն բնակավայրեր են պահպանվել **Շենգավիթում, Հոռոմ** գյուղում, **Քարահունջում** և այլուր:

Ճարտարապետության հետագա զարգացումը կապված է հայկական պետականությունների ժամանակաշրջանի հետ: Կառուցվում են վարչատնտեսական, ռազմահենակետային և պաշտամունքային քաղաքներ, թագավորանիստեր, ամրոցներ, հեթանոսական տաճարներ և այլն:

Ճարտարապետությունը մեծ վերելք է ապրում

հատկապես Վանի թագավորության շրջանում, Ք. ա. IX-VI դդ.: Վանի թագավորության շրջանի ճարտարապետության գլուխգործոցը **Արդինի-Մուսասիրի** տաճարն է՝ կառուցված Մենուա թագավորի կողմից: Տաճարի ճարտարապետական ձևերը բոլորովին տարբերվում են Ասորեստանի և Բաբելոնի ճարտարապետական ձևերից:

Վանի արքաները հարևաններից պաշտպանվելու և իրենց իշխանությունն ամրապնդելու նպատակով Վանա, Ուրմիա և Սևանա լճերի միջև ընկած ընդարձակ տարածքի վրա ստեղծում են ամուր հենակետերի մի ցանց՝ Տուշպա, Արգիշտիխինիլի, Էրեբունի և այլն:

Ճարտարապետությունը, հատկապես քաղաքաշինությունը Հայաստանում բուռն զարգացում է ապրում Արտաշեսյանների օրոք: Կառուցվում են նոր քաղաքներ, որոնցից առավել նշանավորներն ու ամենախոշորներն էին **Արտաշատը** և **Տիգրանակերտը**:

Մեզ հասած հայկական հեթանոսական ճարտարապետական հուշարձաններից ամենագեղեցիկը **Գառնիի տաճարն** է, որը կառուցվել է Տրդատ I-ի կողմից:

Ճարտարապետությունը IV-VII դարերում

Հայկական ճարտարապետության հետագա զարգացման համար շրջադարձային նշանակություն ունեցավ 301թ. Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելը: Առաջատար և բացառիկ նշանակություն է ստանում եկեղեցական ճարտարապետությունը, որտեղ ցայտուն արտահայտվում են հայկական ճարտարապետության ինքնատիպությունը, բարձր մակարդակը և գեղարվեստական հարուստ ավանդները:

Հայկական եկեղեցաշինությունը համարվում է աշխարհում առաջին ազգային եկեղեցաշինական ոճը: Այն ունի մի քանի բնորոշ առանձնահատկություններ.

առաջին հերթին սրածայր գմբեթ, մեծ սյուներ,
լույսի հետաքրքիր օգտագործում:

Վանի միջնաբերդը

Հայաստանի՝ մեզ հասած հնագույն եկեղեցիները հիմնականում անգմբեթ են՝ **միանավ** և **եռանավ բազիլիկներ**: Միանավ բազիլիկը երկթեք կտուրի տակ տեղավորված երկարավուն դահլիճ է, որն ավարտվում է արևելյան կողմում կիսակլոր խորանով՝* մեկ կամ երկու կողմից ավանդատներով (Գառնի, Օձուն, Եղվարդ և այլն): Եռանավ բազիլիկը (Տեկորի, Դվինի, Քասախի և այլն) նույնպես արևմուտքից-արևելք ձգված դահլիճ է, սակայն բաժանված **երեք** երկայնական նավերի:

V–VII դարերը բեկումնային էին հայ ազգային մշակույթի ձևավորման համար:

V դ. վերջից հայկական ճարտարապետությունը թևակոխում է զարգացման նոր փուլ՝ սկսվում է **գմբեթավոր**, հիմնականում՝ **կենտրոնագմբեթ** եկեղեցիների կառուցումը: Հայ ճարտարապետների ստեղծագործական հարստության և բարձր վարպետության մասին են վկայում եկեղեցիների այն բազմազան տիպերն իրենց տարբերակներով, որոնք ստեղծվեցին այդ ժամանակաշրջանում: Այս հորինվածքն ունի տեղական արմատներ՝ **քարե գմբեթների ակունքները բխում են հայկական ժողովրդական բնակելի տների երդիկով, փայտե գմբեթով ծածկերից** (Ք. ա. V դ., այն նկարագրել է հույն պատմագիր Քսենոփոնը): Գմբեթավոր եկեղեցիներից հայտնի են Օձունի, Գայանեի, Զովունիի, Դդմաշենի եկեղեցիները: Կենտրոնագմբեթ եկեղեցիների խմբին են պատկանում Ս. Էջմիածնի Մայր տաճարը, Ս. Հռիփսիմեի, Մաստարայի տաճարները, Աշտարակի Կարմրավորը և այլն: Հայաստանի հնագույն գմբեթավոր եկեղեցին Ս. Էջմիածնի Մայր տաճարն է, որի հորինվածքը հետագայում տարածվել է նաև Եվրոպայում:

Հայաստանում եկեղեցական շենքի կենտրոնագմբեթ համակարգը VI դ. նոր ուղղություն է ստանում՝ միջանկյալ խորշերով և անկյունային սենյակներով քառախորանի ձևով: Այս հորինվածքն առա-

*Խորան —Հայկական եկեղեցիների հատակագծում խորանը կիսաշրջանաձև է, գմբեթարդ ծածկով (վաղ միջնադարում՝ պայտաձև և սակավաթիվ՝ ուղղանկյուն): Խորանի մեջտեղում կանգնեցվում է սեղանը:

Օձուն

վել կատարյալ կիրառվում է հայկական ճարտարապետության գլուխգործոց՝ Վաղարշապատի **Ս. Հռիփսիմե** եկեղեցին կառուցելիս: Ս. Հռիփսիմեի տաճարը կառուցվածքով քարի ողջ պարագծով տարած միաձույլ համակարգ է, ունի մեծ երկրաշարժակայունություն: Խորանների գմբեթարդների և նրանց տանիքների միջև թողնված են սնամեջ տարածություններ, որոնք նպաստել են եկեղեցու գերազանց հնչականությանը և ծառայել որպես գաղտնարաններ:

Առավել բարդ ու հետաքրքիր հորինվածքային լուծումների որոնումները VII դ. երկրորդ կեսին պսակվում են հայկական ճարտարապետության եզակի հուշարձաններից մեկի՝ **Զվարթնոցի տաճարի բազմախորան եկեղեցու** ստեղծումով: Զվարթնոցն ունեցել է եկեղեցական շենքի նոր՝ եռայարուս ծավալային լուծում և VII դ. հայկական եկեղեցական ճարտարապետության մեծ նվաճումն է: Կենտրոնագմբեթ եկեղեցիների՝ Հայաստանում ստեղծված և կիրառված տիպերի նման բազմազանությունը, գմբեթատակ տարածության շուրջը ինտերիերի միավորման ձգտումը VII դ. հայկական եկեղեցական ճարտարապետության բնորոշ գծերն են, որոնք նրան առանձնացնում են քրիստոնեական աշխարհի մյուս ճարտարապետական դպրոցներից:

IV–VII դդ. հայ ճարտարապետները եկեղեցիներ կառուցելիս հիմնականում ուշադրություն են դարձրել արտաքին ճակատներին: Հարդարանքի տարրերով շեշտվել են. շքամուտքերով՝ դռները, հոնքաձև քանդակազարդ շրջանակներով՝ լուսամուտները, կիսակամարիկներով գոտիներով՝ քիվերը: Ներսի պատերը սրբատաշ քարերից են և մեծ մասամբ՝ առանց որմնանկարների: Բազմաթիվ լայն պատուհաններով եկեղեցիների ներսը ողողվում է լույսով:

Ըստ V դարից գործող հայկական եկեղեցական կանոնի՝ կառուցվելիք եկեղեցու ձևը հաստատել է եպիսկոպոսը: Ս. **Հովհաննես Ա Մանդակունի**

Ս. Հռիփսիմե

Զվարթնոց

*Աբսիդ – (*ծագում է հունարեն* **absid** *բառից) թաղ, կամար շինության ծավալի մաս, որն ավարտվում է գմբեթարդով կամ թաղով: Քրիստոնեական եկեղեցիներում կենտրոնական աբսիդը կոչվում է Ավագ խորան:*

կաթողիկոսի կանոններով՝ եկեղեցու հատակագիծը գծվել է գետնին, 12 առաքյալներին խորհրդանշող 12 քարերով նշվել են եկեղեցու անկյունները, աբսիդը*, մույթերը, մուտքերը, և քարերն օծվելուց հետո սկսվել է շինարարությունը: Վաղ միջնադարից մինչև XIV դ. եկեղեցիների նախագծումն իրականացվել է քարե մանրակերտերով: Շինարարությունն ավարտվելուց հետո եկեղեցին օծվել է և անվանակոչվել: Միջնադարում Հայաստանի եկեղեցիների մեծ մասը կոչվել է Ս. Աստվածածնի, ապա՝ Ս.**Գրիգոր Լուսավորչի, Ս. Հովհաննեսի, Ս. Գևորգի** և այլ սրբերի անուններով:

VII դ. ավարտվում է եկեղեցական ճարտարապետության հայկական դպրոցի ձևավորումը:

Ճարտարապետության հետագա զարգացումը IX-XV դարերում

IX դ. վերջին, անկախության վերականգնումից հետո, նախադրյալներ են ստեղծվում ճարտարապետության զարգացման նոր փուլի համար: IX–XI դդ. ձևավորվում են **Անիի, Սյունիքի, Վասպուրականի, Լոռու և այլ ճարտարապետական դպրոցներ**:

Այդ ժամանակաշրջանի եկեղեցական ճարտարապետության մեջ առաջատար դեր է խաղացել երկրի մայրաքաղաք Անիի ճարտարապետական դպրոցը, որի մշակած ոճական ուղղությունը, հարդարանքի ձևերը տարածվել են ամբողջ Հայաստանում: Անիի ստեղծագործական դպրոցի նվաճումներն անխզելիորեն կապված են միջնադարյան Հայաստանի խոշորագույն ճարտարապետ **Տրդատի** անվան հետ: Անիում տարածում են գտնում կենտրոնագմբեթ եկեղեցիների քառախորան ու վեցախորան ձևերը, որոնց շարքում իրենց ճարտարապետական-գեղարվեստական բարձր հատկանիշներով առանձնանում են **Անիի Ս. Առաքելոց եկեղեցին, Աբուղամրենց Ս. Գրիգոր և Հովվի եկեղեցիները**: Անիի ճարտարապետական

դպրոցի ոճական առանձնահատկություններից են եկեղեցիների արտաքին ճակատների և գմբեթների թմբուկների՝ կամարաշարով ձևավորումը, գմբեթների հովանոցաձև ծածկը:

Անիից հետո իր նշանակությամբ երկրորդը Սյունիքի ճարտարապետական դպրոցն է, որը IX–XI դդ. ստեղծում է այնպիսի բարձրարվեստ գործեր, ինչպիսիք են **Նորավանքի, Վահանավանքի, Գնդեվանքի եկեղեցիները** և հռչակավոր գիտակրթական կենտրոն **Տաթևի վանքի**՝ Հայաստանի այդ ժամանակաշրջանի ամենախոշոր՝ **Ս. Պողոս-Պետրոս տաճարը**:

Վասպուրականի ճարտարապետական դպրոցը X դ. ստեղծում է ճարտարապետ **Մանուելի կերտած** հայկական միջնադարյան արվեստի գլուխգործոց **Աղթամարի վանքի Ս. Խաչ եկեղեցին**, որը երեք արվեստների՝ ճարտարապետության, քանդակագործության և որմնանկարչության ամենափայլուն օրինակն է:

IX–XIV դդ. հայկական եկեղեցական ճարտարապետությունը հիմնականում զարգացել է վանական համալիրներում:

X–XI դդ. ստեղծվել է եկեղեցական շենքի նոր՝ ներգծված ***խաչ* տիպը**: Այն ունի ներսից խաչաձև, չորս անկյուններում ավանդատներով (հաճախ՝ երկհարկանի), արտաքուստ ուղղանկյուն, գմբեթավոր հորինվածք, որը դարձել է հայկական եկեղեցիների ճնշող մեծամասնության հիմնական ձևը: Հայ ճարտարապետները շարունակում են մեծ ուշադրություն դարձնել արտաքին ճակատների ձևավորմանը: Եկեղեցական ճարտարապետության մեջ գերակշռող է դառնում **«գեղատեսիլ»** ոճը, ավելանում են քանդակազարդ տարրերը, ճակատներում բազմագունություն է կիրառվում: Զարդաքանդակների հետ ավելանում են պատկերաքանդակները: Եկեղեցիները չափերով մեծ չեն, որմնանկար-

Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու դրսի պատերը ողջ պարագծով զարդարված են պատկերաքանդակների վեց գոտիներով: Ստորին գոտին բուսական զարդաքանդակներով նեղ ժապավեն է: Երկրորդ՝ գլխավոր գոտին, Հին և Նոր Կտակարանների հարթաքանդակների շարք է: Նույն բարձրության վրա, արևմտ. ճակատին, խորանի լուսամուտի երկու կողքերին Գագիկ Արծրունի թագավորն է՝ եկեղեցու մանրակերտը ձեռքին, և Քրիստոս՝ օրհնող Աջով: Լուսամուտի տակ, կենտրոնում, երկու հրեշտակներ բռնել են «Փառքի նշան»՝ խաչազարդ մեդալիոն: Երրորդ գոտին կազմված է կենդանիների քանդակներից, չորրորդում, խաղողի չընդհատվող որթագալարի մեջ աշխարհիկ կյանքի տարբեր տեսարաններ են: Հինգերորդ գոտին ներկայացնում է տոհմանշաններ, զինանշաններ, դիմաքանդակներ, իսկ վեցերորդը պատկերում է եղնիկների և այծյամների փախուստը առյուծների, հովազների հետապնդումից: Եկեղեցու ճակատներին տեղադրված են չորս ավետարանիչների բարձրաքանդակները: Եկեղեցու պատերը ներսից ծածկված են X դ. բարձրարվեստ որմնանկարներով:

Հաղպատի վանք

Ախթալայի Ս. Աստվածածին

Իկոնոստաս – մի քանի շարքով դասավորված սրբապատկերներից բաղկացած միջնորմ, որը տաճարի խորանը բաժանում է սրահից:

ները հազվադեպ են (**Հաղպատի վանքի Ս. Նշան, Ախթալայի Ս. Աստվածածին վանքի, Քոբայրավանքի, Կիրանց վանքի եկեղեցիներ**): Հայկական եկեղեցիներին հատուկ չեն **իկոնոստասները***:

Վանքերում, եկեղեցիներից բացի, կառուցվել են աշխարհիկ շենքեր՝ գրադարաններ, դպրոցներ, հյուրատներ, սեղանատներ և այլ կառույցներ:

X դ. ճարտարապետության մեջ հայտնվում է իր նշանակությամբ եզակի շենք՝ **գավիթը**, որը կից է եկեղեցուն և միաժամանակ ունի մի քանի կիրառություն: Նրա առաջացումը կապված է կաթողիկոս Ս. Սահակ Ա Պարթևի՝ V դարից ցայսօր գործող այն կանոնի հետ, որով արգելվում է հայկական եկեղեցիներում ննջեցյալներին թաղելը, որի պատճառով գավիթները ծառայել են նաև որպես տապանատուն:

Դարերի ընթացքում տարբեր ճարտարապետների կառուցած, բազմաբնույթ շենքերից կազմված հայկական վանքերն աչքի են ընկնում իրենց բոլոր կառույցների ներդաշնակ փոխկապվածությամբ և շրջակա բնության հետ ողջ համալիրի ներդաշնակությամբ: Հայաստանի բազմաթիվ վանքերից իրենց ճարտարապետությամբ առանձնանում են եզակի ժայռափոր շինություններով **Գեղարդավանքը**, Քասաղ գետի անդնդախոր ձորի եզրին կանգուն **Հովհաննավանքը** և **Սաղմոսավանքը**, Շիրակում՝ **Հառիճավանքը**, Լոռիում՝ կրոնական, գիտական և կրթական համահայկական կենտրոններ **Հաղպատի վանքը** և **Սանահինի վանքը, Հաղարծինի վանքը, Վասպուրականում՝ Վարագավանքը, Տարոնում՝ Մշո Առաքելոց վանքը** և այլն: Արցախում են գտնվում հայկական ամենախոշոր վանքերից մեկը՝ **Դադիվանքը**, և XIII դ. հայկական ճարտարապետության հանրագիտարան համարվող **Գանձասարի վանքը:** Սյունիքի Վայոց ձոր գավա-

ռում XIII–XIV դդ. ստեղծագործել է այդ ժամանակաշրջանի խոշորագույն արվեստագետ **Մոմիկը**: XIII–XIV դդ. Հայաստանում ստեղծվել է եկեղեցական շենքի նոր՝ երկհարկ տիպը, որը զուգակցում է եկեղեցին զանգակատան հետ: Դրա օրինակներից է **Նորավանքը**:

Ճարտարապետությունը XV դարից հետո

XV–XVI դդ. անբարենպաստ քաղաքական և տնտեսական պայմանների պատճառով եկեղեցական շինարարությունը Հայաստանում ընդհատվում է (երկիրը դարձել էր Թուրքիայի և Իրանի միջև պատերազմների թատերաբեմ): Միայն XVII դ. սկզբին պայմաններ են ստեղծվում քանդված եկեղեցիները նորոգելու և նորերը կառուցելու համար: XVII–XVIII դդ. եկեղեցաշինության առանձնահատկությունը եղել է եռանավ բազիլիկների զանգվածային կառուցումը: Հայաստանի XVII–XVIII դդ. վանքերի ճարտարապետության բնորոշ առանձնահատկությունը երկու տարբեր նշանակության և քաղաքաշինական հորինվածքների՝ **կրոնական կենտրոնի ու պաշտպանական համալիրի** զուգակցումն է: Վանքերն ու այդ դարերում տարածված ճգնավորական մենաստանները՝ անապատները, շրջապատվել են բուրգերով ամրացված հզոր պարիսպներով: Այդպիսի վանք-ամրոցներ են Արտազի **Ս. Թադե վանքը**, **Տաթևի Մեծ անապատը**, **Խոր վիրապը** և այլ վանքեր:

XIX դ. Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո նոր վանքեր այլևս չեն կառուցվում: Քաղաքներում (Երևան, Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ, Գորիս, Շուշի) կառուցվել են գմբեթավոր, իսկ գյուղերում՝ մեծ մասամբ բազիլիկ տիպի ծխական եկեղեցիներ: 1920 թ. Հայաստանում

Գեղարդավանք

Հառիճավանք



Նորավանք

Տաթևի համալիրը

խորհրդային կարգեր հաստատվելուց հետո դադարում է եկեղեցիների շինարարությունը:

1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո եկեղեցական ճարտարապետությունը նոր վերածնունդ է ապրում: Ժամանակակից հայ ճարտարապետները նորակառույց եկեղեցիներում կիրառում են բացառապես միջնադարյան Հայաստանի եկեղեցական ճարտարապետության ավանդական ձևերը:

Խոր վիրապ

Հարցեր և առաջադրանքներ

1. *Որո՞նք են հայկական ճարտարապետության բնորոշ առանձնահատկությունները:*
2. *Ի՞նչ ճարտարապետական տեսք ունի միանավ բազիլիկ եկեղեցին:*
3. *Ի՞նչ արմատներ ունեն գմբեթավոր եկեղեցիները:*
4. *Համառոտ նկարագրեք Ս. Հռիփսիմե եկեղեցին և Զվարթնոցի տաճարը:*
5. *Որո՞նք են հայկական եկեղեցական ճարտարապետության այն բնորոշ գծերը, որոնք նրան առանձնացնում են քրիստոնեական աշխարհի մյուս ճարտարապետական դպրոցներից:*
6. *Հարդարանքի ինչպիսի՞ տարրերով են շեշտվել հայկական եկեղեցիները:*
7. *Ճարտարապետական ի՞նչ դպրոցներ ձևավորվեցին IX–XV դարերում: Թվարկեք այդ դպրոցները ներկայացնող երկուական եկեղեցիներ:*
8. *IX–XIV դդ. որտե՞ղ է զարգացել հայկական եկեղեցական ճարտարապետությունը:*
9. *Ի՞նչ նպատակով ստեղծվեց գավիթը:*
10. *Ի՞նչ վանական համալիրներ գիտեք, որոնք իրենց ճարտարապետական տեսքով առանձնանում են Հայաստանի բազմաթիվ վանքերից:*
11. *Որո՞նք են Հայաստանի XVII–XVIII դդ. վանքերի ճարտարապետության բնորոշ առանձնահատկությունները:*

Քննարկենք

Ուսումնասիրելով ձեր անցած դասերը, փորձեք ներկայացնել և հիմնավորել հայկական եկեղեցական ճարտարապետական ազգային դպրոցի ձևավորման անհրաժեշտությունը:

Հայրենի բնությունը, լեռնաշխարհը հայկական երաժշտությունն օժտել են յուրահատուկ արտահայտչականությամբ: Ձայնն արձագանքել ու երգ է դարձել, թելադրել մեղեդին, չափը:

Եթե փորձենք համեմատել ողորկ տափաստաններով հարուստ բնաշխարհը հայկականի հետ, կարելի է նաև տեսնել, որ տափաստաններում ապրող ժողովուրդների երգին հատուկ են երկարաձգված և տարածվող ձայնային ելևէջները, որոնք տարբերվում են իրենց բնույթով:

18. ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Յուրաքանչյուր ժողովուրդ փորձում է հաջորդ սերունդներին փոխանցել իր կողմից ստեղծած, կառուցած կամ ձեռք բերած այն ամենը, ինչը բնորոշում է իրեն: Սերնդեսերունդ փոխանցվող արժեքներից է երաժշտական մշակույթը, որը ժողովրդի բնավորությունը, կամքն ու աշխարհընկալումը ներկայացնող կարևոր բնութագրիչներից է: Հայաստանը հպարտ լեռներով, խոր ձորերով, քարքարոտ տափաստաններով ու սաղարթախիտ անտառներով, բազմազան կլիմայով հարազատ ու սիրելի մեր հայրենիքն է, որը պատմական հազար ու մի դեպքերի ու անցքերի ականատեսն է եղել: **Իսկ ի՞նչ է ազգային երաժշտությունը, եթե ոչ այդ ամենի մեղեդային արտահայտությունը:** Մեր երաժշտությունը, ըստ Կոմիտասի, «Մեր ցեղի հայելին է», նրա ոգին: Այն արտահայտում է ժողովրդի փիլիսոփայությունը, նրա զգացումներն ու հույզերը:

Ազգային երաժշտության առանձնահատկությունները

Ազգային երաժշտությունը ձևավորվել և կայացել է պատմական տարբեր ժամանակաշրջաններում՝ իբրև նրա տարբեր խավերի գեղարվեստական մտածողության արտահայտություն:

Միևնույն ժամանակ թե՛ աշխարհագրական դիրքը, թե՛ պատմական իրադարձությունները խորապես ազդել են ազգային երաժշտության կազմավորման վրա: Բանավոր խոսքը՝ երգը մասնավո-

ռապես, շատ նրբազգաց է, այն ընկալվում է անմիջապես, մարդու կամքից անկախ, առանց վերլուծության և կշռադատման: Պատմական այս կամ այն ժամանակահատվածում (ինչպես նաև մեր օրերում), երբ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը տարբեր պատճառներով թուլացել է, օտար մշակութային տարրերն ու մեղեդիները փորձելով հիմնավորվել և թելադրել իրենց տեսակը՝ առաջացրել են հայի հոգևոր - ազգային նկարագրի աղճատման վտանգ:

Այդուհանդերձ, գոյատևման ու տեսակի պահպանման խնդիրը ենթագիտակցորեն ու գիտակցաբար (հատկապես Հայոց եկեղեցու շնորհիվ) կարողացել է դուրս մղել օտար ազդեցությունը:

Երգն իր ակունքներով սկիզբ է առնում խոր անցյալից:

Առասպելական զրույցների ու երգերի նմուշներ հանդիպում են Ս. Մովսես Խորենացու «Հայոց պատմությունում», որտեղ դրանք անվանվում են «զրույց» կամ «երգ»: Կան երաժշտական նյութեր, որոնք վերաբերում են Ք.ա. II դարի հայ երաժշտարվեստին, երբ Հայաստանը թևակոխում է հզոր պետականության շրջան և տնտեսական ու մշակութային առաջընթացի պայմաններում զարգանում են գեղջուկ ժողովրդական երաժշտությունը, գործիքային նվագը, վիպասանների և գուսանների ժողովրդային արվեստը, հելլենիստական շրջանի թատերական երգ-երաժշտությունը: Մասնավորապես՝ զարգանում են **վիպերգերը**, որոնք կատարվել են ասմունքելով ու մերթընդմեջ երգելով, պարի ու լարային կսմիթավոր **«փանդիռ»** կոչվող գործիքի նվագակցությամբ:

Գոյատևման ու տեսակի պահպանման խնդիրը ենթագիտակցորեն ու գիտակցաբար (հատկապես Հայոց եկեղեցու շնորհիվ) կարողացել է դուրս մղել օտար ազդեցությունը:

Սուրբգրային մեկնություններից մեկում Ս. Եղիշեն նկատում է. «Ինչպես խեցեղեն անոթն է ստեղծվում հողից, ծրագը՝ հրից, այնպես էլ եղեգնափողի ծայնն է ծնվում մարդու կենդանական շնչից և օդի բախումից»:

Խոսքի կիսերգային արտաբերումը կոչվում է թվերգ, ասերգ, օտար բառով՝ ռեչիտատիվ:

Վիպերգերի բովանդակությունը ժողովրդի քաղաքական կյանքի ու պատմության արտացոլումն է՝ դեպի սեփական ճակատագիրն ունեցած ակտիվ վերաբերմունքով: Վիպերգերի երաժշտական լեզուն սերունդները հղկել ու կատարելության են հասցրել («Մոկաց Միրզա»-ն, «Սասունցի Դավիթ»-ը), հարստացրել ազգային անկախության գաղափարներով ու ձգտումներով:

Ժամանակի ընթացքում զարգանալով և հարստանալով՝ ազգային երգը ձեռք է բերել մեղեդայնություն, ռիթմ, ասելիքը ձայնային ելևէջներով արտահայտելու յուրահատուկ որակ:

Որպես հայ երգին բնորոշող տեսակ հանդես է գալիս միաձայն (մոնոդիա*) երաժշտությունը: Այն կազմավորվել է որպես ազգային նկարագրին շատ բնորոշ և հայ մարդուն հատուկ մտածողության ձև՝ շեշտելով նրա անհատականությունը:

Հայ միաձայն երաժշտության բոլոր ճյուղերն իրենց գոյատևման ընթացքում անցել են զարգացման մեծ ու անհարթ ճանապարհ, խորացել ու փոփոխվել, ապրել կյանքի տարբեր փուլեր: Ստեղծվել են բազմաթիվ երաժշտական ժանրեր՝ աշխատանքային առօրյան դրսևորող **հորովելներ***, դաստիարակչական մեծ նշանակություն ունեցող երգիծական, ծիսական երգեր, ողբեր, ինչպես նաև ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն ու դարավոր ընբոստ ոգին արտահայտող **պատմական երգեր*** ու **դյուցազներգեր***, **օրորներ***, օտարության մեջ գտնվող պանդուխտի հոգեկան ապրումներն արտահայտող անտունիներ, լավատեսական բնույթի պարերգեր և այլն:

Երգերում արտահայտվել են ժողովրդի կյանքն ու կենցաղը, նրա հոգեկան կերտվածքն ու բնավորության ազգային գծերը, ներաշխարհն իր հույզե-

***Մոնոդիա** – միաձայն երաժշտություն, որի զարգացման մեջ գերիշխողը մեղեդային սկզբունքն է: Ի տարբերություն, օրինակ, վրացական՝ քառաձայն, կամ ռուսական՝ բազմաձայն երաժշտության: Մոնոդիայում մեղեդային միաձայնության պայմաններում պահպանվում են երաժշտական ստեղծագործության բոլոր դրսևորումները: Այն կարող է լինել բարդ կամ պարզ, ինչպես բազմաձայնության մեջ:

Երկու արտերը բաժանող մասը կոչվել է **առավել, որտեղ եզները հանգստացել են: Այստեղից էլ, ըստ Կոմիտասի, ծագել է **հարավել-հորովել** անվանումը:*

րով, հայրենի բնությունը:

Ազգային երգն ստեղծվել է դարերի ընթացքում, դարերի համար՝ արտահայտելով ժողովրդի բանավոր տարեգրությունը:

Հոգևոր երաժշտություն

Երաժշտական հարուստ փորձի ու կենդանի ավանդույթների պարարտ հողի վրա է սկիզբ առնում **ազգային հոգևոր երաժշտությունը:**

Քրիստոնեության մուտքը Հայաստան որակական մեծ տեղաշարժեր կատարեց հայ մշակույթում, մասնավորապես՝ ազգային երգարվեստում: Հայոց եկեղեցին իր հովանու տակ առավ հայոց մշակութային, այդ թվում նաև երաժշտական կյանքը: Այսպես, հոգևոր երաժշտությունը զարգանալով՝ ձեռք բերեց մշակութային ինքնուրույնություն, հասավ մասնագիտացված երաժշտության աստիճանի:

Աստվածաշնչի և այլ պաշտամունքային բնագրերի թարգմանության հետ («Պատարագամատույց») աստիճանաբար նոր որակ ստացան՝ հայացան, բարեկարգվեցին և ճոխացան ծեսն ու արարողությունը: Աստվածաշնչային սաղմոսների հիման վրա գոյացավ հայկական հնագույն ժամագիրքը: Միաժամանակ ազգային ձևերի մեջ զարգանալով՝ նոր գեղարվեստական մակարդակի վրա հանդես եկավ հայոց հոգևոր ինքնուրույն երգը:

Հայոց հոգևոր մասնագիտացված երգարվեստի առաջին հեղինակներն են համարվում Ս. **Սահակ Պարթևն ու Ս. Մեսրոպ Մաշտոցը**, ովքեր մշակել ու զարգացրել են հայոց հոգևոր երաժշտության տեսական սկզբունքները և **ձայնեղանակները***:

Հայ հոգևոր-ազգային գործիչները, մշակելով հոգևոր երաժշտությունը, հաշվի են առել արտա-

**Դյուցազներգերը բովանդակությամբ պատմական դեպքերին մասնակից հերոսների կյանքի ու սխրանքների նկարագրությունն են, նրանց փառաբանումը: Ժողովուրդն ամենայն ակնածանքով մեծարել է ռազմիկներին ու զորավարներին, ովքեր հայրենիքն օտարերկրյա տիրապետությունից ազատագրելու պայքարում հերոսացել ու անմահացել են:*

**Պատմական երգերի հիմնական թեման բողոքն է օտար զավթիչների դեմ, հայրենիքն ազատագրելու իղձը: Այստեղ նկարագրվում են իրական դեպքեր՝ պատերազմների արհավիրքներն ու դրանց հետևանքները, ժողովրդի հույզերն ու ապրումները:*

**Օրորները երգվել են երեխաներին քնեցնելիս, որոնց հետ կապել են թե՛ ընտանիքի և թե՛ երկրի ու ժողովրդի ապագան: Օրորի միջոցով մայրը փոքրիկի սրտում արթնացրել է հույս, հերոսական ոգի և ազգային արժանապատվության զգացում: Չէ՞ որ օրորները մանկան երաժշտական առաջին տպավորություններն են:*

*Ձայնեղանակները – եղանակի տեսակներ են, որոնք կազմում են հնչող ողջ երաժշտության հիմքը:

Մատենադարանում պահվող ավելի քան 200 գրչագիր պատարագամատույցները, 300 ժամագրքերն ու 350 շարակնոցները բավականաչափ տեղեկություններ են հաղորդում հայ հոգևոր երգարվեստի պատմական զարգացման ընթացքի և այն իրագործած տաղանդավոր երաժիշտ-բանաստեղծներից շատերի մասին:

սանվող խոսքի և երաժշտության բոլոր ելևէջները, ձայնի բարձրությունը, տաճարի ներսում տարածվող մեղեդիների արձագանքը, աղոթքի խորհրդի խիստ անհատական և խորքային արտահայտությունը:

Իրենց ուսուցիչների գործը շարունակելով, հոգևոր երաժշտությունը նոր մակարդակի բարձրացրեցին Ս. Մովսես Խորենացին, Ս. Դավիթ Անհաղթը, Ստեփանոս Սյունեցին, Ս. Հովհան Մանդակունին: Պատմահայրը ինքնատիպ որակ հաղորդեց հայոց մասնագիտացված երգարվեստին ամբողջապես: Ս. Մովսես Խորենացու թողած հարուստ ժառանգությունից մեզ են հասել նրա **շարականները***, որոնք գեղարվեստական արժանիքներով հարուստ, անզուգական ստեղծագործություններ են:

Ահա Սուրբ Ծննդյան տոնին նվիրված նրա շարականի առաջին տողերը.

Խորհուրդ մեծ

Խորհուրդ մեծ եւ սքանչելի,
Որ յայսմ աւուր յայտնեցաւ.
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս
Տան աւետիս աշխարհի:

Արդեն V-VI դարերում հստակ իմաստավորումով սկսվում են կիրառվել երաժշտատեսական այնպիսի տերմիններ, ինչպիսիք են՝ **«հոգևոր երգ», «օրհներգություն», «սրբասացություն», «երեքսրբյան»**: Վերջինս Պատարագի մաս կազմող «Սուրբ Աստված» երգի երեք անգամ ասվելն է ցույց տալիս, ինչպես նաև «Սուրբ» բառով Աստծուն՝ Սուրբ Երրորդությանը երեք անգամ դիմելը:

VII դարում հոգևոր ինքնուրույն երգերն այնքան են բազմանում, որ անհրաժեշտ է լինում հատուկ ընտրություն կատարելով ի մի բերել եկեղեցու կողմից պաշտոնապես ընդունված նմուշները: Կազմվում է մի ժողովածու, որն ապագա Շարակնոցի հիմքն է դառնում: Քիչ ավելի ուշ ընդունվում է եկեղեցական միևնույն տոնին վերաբերող 8-9 երգերից բաղկացած «Կանոն»-ը:

Ժամանակի ընթացքում հայ հոգևոր երաժշտությունը զարգանալով, մեղեդիական դրվագներով հարստանալով և ճոխանալով ձեռք է բերում նոր որակ: Շրջանառության մեջ է մտնում հայկական **խազագրերի*** կիրառությունը: Խազավորված ծիսամատյանները կոչվում են Մանրուսմունք: Այս ծիսամատյանների խազերը զգալիորեն տարբերվում են Շարակնոցի խազերից: Մանրուսման խազերը նորանոր, առավել բարդ խազերով հարստացրել է Ս. Ներսես Շնորհալին:

IX-X դդ. հայկական վերածնունդը նշանավորվում է Ս. Գրիգոր Նարեկացու անկրկնելի ստեղծագործությամբ: Նախորդ դարերի մշակութային հարուստ հիմքի վրա Նարեկացին՝ նաև որպես երաժիշտ, կարողացավ հիանալի կերպով ընդհանրացնել ազգային հոգևոր, աշխարհիկ և գուսանական արվեստի լավագույն նվաճումները: Իրենց հատուկ հուզական ու երևակայական գունեղությամբ առանձնանում են նաև նրա **տաղերն** ու **գանձերը**:

Այս պատմաշրջանում, ինչպես հայտնի է, հայկական իշխանական տների հզորացման, Բագրատունիների, Վասպուրականի, Կիլիկիայի հայկական թագավորությունների հիմնադրման ու ամրապնդման պայմաններում մեծ զարգացում է ապրում

***Շարականներ** – Շարական են կոչվում եկեղեցական արարողությունների ու խորհուրդների ժամանակ կատարվող հոգևոր երգերը: «Շարական» բառն ինքնին կազմված է շար(ք) արմատից և ական վերջածանցից: Այն ստուգաբանվում է նաև իբրև ակների՝ թանկարժեք քարերի շարան:

Շարականներն իրենց ուրույն տեղն ունեն համաշխարհային երաժշտական արվեստի գանձարանում: Էական է դրանց դերն ազգի ինքնապահպանության և ինքնահաստատման գործում: Շարականներ պարունակող գիրքը կոչվում է «Շարակնոց»: Շարականներն ըստ բովանդակության լինում են աստվածաշնչյան պատմություններ կամ նվիրված են Հայր Աստծուն, Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, Սուրբ Հոգուն, Ս. Մարիամ Աստվածածնին և տարբեր սրբերի: Շարականներ կան նաև պատմական և ազգային թեմաներով:

Օրհներգ Հայրապետական

Ամեն հայի սրտից բխած,
Լսիր այս ձայնն, ո՛վ Աստված.
Երկար կյանք տուր Հայրապետին,
Երկար օրեր Հայոց Հոր.
Տե՛ր, անսասան պահիր դու միշտ
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ:

Կիլիկիայում և բուն Հայաստանում վեր են բարձրացվում երաժշտական գեղագիտության հետ առնչվող այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են երաժշտարվեստի ծագումը, նրա էությունը և ներգործության ուժն ու բնույթը, աշխարհիկ և հոգևոր երաժշտության փոխհարաբերությունն ու դրանց կապն իրականության հետ:

նաև երաժշտական մշակույթը:

Զարգացման նոր փուլ է թևակոխում հայ **ժողովրդական** և **գուսանական** երգ-երաժշտությունը: Ստեղծվում են մարդու առօրյան, նրա ներքին ապրումները, ուրախության ու վշտի պահերը, հայրենի բնության ու սիրո նվիրական զգացումներն արտահայտող բազմապիսի ստեղծագործություններ՝ «հայրեններ»՝ հայկական յուրահատուկ տաղաչափությամբ ու եղանակավորումով հորինված սիրո, ուրախության, գովքի, պանդխտության երգեր, որոնք աչքի էին ընկնում նրբակերտ մեղեդիներով:

Աստիճանաբար հայ ժողովրդական-գուսանական երաժշտության մեջ սկսում է ներմուծվել գործիքավորումը: XII-XIII դարերից սկսած նույնիսկ ծիսական ձեռագրերի էջերում պատկերված են կատարող երաժիշտներ ու այլազան նվագարաններ՝ երկկողմանի մեծ ու փոքր թմբուկներ, դափ, դհոլ, ծնծղաներ, հովվական սրինգներ, շվի, կոնաձև փողեր և սրափողեր (զուռնա), պարկապզուկներ, գալարափողեր, սազեր, տավիղներ, բազմալար տարբեր գործիքներ, քիչ ավելի ուշ՝ քամանչաներ և այլն:

XVI-XVIII դարերում ընկած ժամանակահատվածում հայ հոգևոր երգարվեստն անցնում է սեփական ավանդույթների պահպանման, արևելականացումից խույս տալու դժվար ճանապարհ:

Հասարակական, քաղաքական պայմանները, ոճական նորությունները փոփոխություններ էին թելադրում նաև հոգևոր մշակույթի միջավայրում: Սակայն դրանք կապված չէին նոր ու բարձր արժեքների հետ: Արևելքի մահմեդականացումը կամա թե ակամա փոխազդեցության եզրեր գտավ հայկական միջավայրում: Արդյունքը եղավ այն, որ

հատկապես Արևմտյան Հայաստանում թուրքական երաժշտական տարրը ներթափանցեց հայ աշխարհիկ երգարվեստ:

Այս ժամանակաշրջանում Հայոց եկեղեցու առջև դրված գլխավոր խնդիրը եկեղեցական երգի նախորդ դարերում կուտակած արժեքների պահպանումն էր, դրանց հուսալի պատսպարումն օտար թափանցումներից և հաջորդ սերունդներին հավատարմաբար փոխանցումը:

Հայոց հոգևոր և աշխարհիկ երաժշտական մշակույթը բյուրեղացավ և համամարդկային արժեք ստացավ Կոմիտաս վարդապետի (1869-1935) շնորհիվ:

*Խազագրեր – ձայնանիշներ, որոնք սկզբնական շրջանում սահմանափակ թվով էին, հետագայում տարածվելով և կատարելագործվելով հասան 24-ի:

Ներկայումս հայկական խազերի ընթերցման բանալին վերծանված չէ: Այս ասպարեզում հետազոտական զգալի աշխատանքներ է տարել Կոմիտասը: Սակայն նրա ուսումնասիրությունները մնացել են անավարտ:

Մեր օրերում շատ գիտնականներ փորձում են շարունակել այդ ուսումնասիրությունները և վերծանել խազագրության գաղտնիքը:

«Ամբողջ մտահոգությունս է հասցնել աշակերտներին, որոնք դպրոցներու մեջ են, որ նվիրվեն ազգային երաժշտության ուսումնասիրությանը, տարածեն ժողովրդի մեջ հայ երաժշտության ոգին, որպեսզի ժողովրդի մեջ ազգային երաժշտության խոսքը մարմնանա և այդ ազդեցության տակ ժողովուրդը թոթափելով պատյանը՝ մտնե վերակենդանացման շավիղի մեջ»,- գրում է Կոմիտասը: Նրա գործն անջնջելի արժեք ունի հայոց աշխարհիկ և հոգևոր երաժշտության շտեմարանում: Որպես գիտնական և երաժիշտ՝ նա էական դեր ունեցավ հայ ժողովրդի հոգևոր կյանքում: Անսահման սիրահարված հարազատ ժողովրդի ստեղծագործությանը, իր տաղանդի ուժով ստիպեց շատ երկրների ու մայրցամաքների մարդկանց հասկանալ, գնահատել, զգալ և ընդմիշտ սիրել հայկական երաժշտությունը:

Ս. Մուրադյան. «Կոմիտաս»

Հարցեր

1. Ձեր կարծիքով՝ ի՞նչն է ազդել ազգային երաժշտության կազմավորման վրա:
2. Ե՞րբ և ինչպե՞ս է կազմավորվել ազգային երաժշտությունը:
3. Ինչպե՞ս կբնութագրեք ազգային երաժշտությունը:
4. Ներկայացրեք երաժշտության տեսակները, դրանց բնորոշ առանձնահատկությունները:
5. Ի՞նչ որակական փոփոխություններ բերեց քրիստոնեության մուտքը հայկական երգարվեստի մեջ:
6. Ինչպե՞ս է կոչվում հոգևոր երգերի ժողովածուն:

Առաջադրանքներ

Մասնակցե՞լ եք արդյոք Ս. Պատարագի արարողությանը: Փորձեք ներկայացնել հնչող հոգևոր երաժշտության խորհուրդը:



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. 3

Գլուխ I

ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔ, ԱՐԺԵՔՆԵՐ

1. ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔ, ԱՐԺԵՔՆԵՐ 5

Գլուխ II

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ- ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 11
3. ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 20
4. ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՎՈՐ ՆԿԱՐԱԳԻՐ 26

Գլուխ III

ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐ

5. ԱԶԳ 34
6. ՀԱՅՐԵՆԻՔ 43
7. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ԱԶԳԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹՅՈՒՆ 51
8. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ, ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 59
9. ԸՆՏԱՆԻՔ 66

Գլուխ IV

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ-ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

10. ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՐՏԱ - ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 72
11. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ 82
12. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 91
13. ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ V-XX ԴԱՐԵՐՈՒՄ 99
14. ՀԱՅ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ 111
15. ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ 118
16. ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ 124
17. ԽԱՉՔԱՐ 137
18. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 146
19. ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 156

Հայոց եկեղեցու պատմություն

Հանրակրթական ավագ դպրոցի
11-րդ դասարանի դասագիրք

Գեղարվեստական և տեխնիկական խմբագիր՝
Մ. Պետրոսյան
Լեզվական խմբագիր՝ Ա. Ոսկանյան
Սրբագրիչ՝ Ա. Պապյան
Համակարգչային շարվածքը՝
Հ. Հովհաննիսյանի
Ա. Միրզաթունյանի

Չափսը՝ 70x100 1/16
Ծավալը՝ 10.5 տպ. մամուլ
Պատվեր՝ 1257: Տպաքանակը՝ 20205

Տպագրվել է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում